Ա. Բրդուշյան
Քար. 129 թ.
1914 թ.

89199
Է-66

§91.99
Շ-66

Գրատարակութիւն Գ. Գալուստեանի № 80

6

ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

ՉԱՐՈԳԻՆ

Դրամա չորս արարուածով

ԹԻՖԼԻՍ
Էլէֆտրատպ. օր. Ն. Ադամեանցի, Պօլից. 7.
1914

15 JUL 2013

48336

Настоящая пьеса подъ заглавіемъ **„Злой Духъ“** соч. Ширванзаде Намѣстникомъ Его Императорскаго Величества разрѣшена къ представленію на сценахъ края.

Ներկայ պիէսի ներկայացման իրաւունքը վերապահուած է հեղինակին: Մեծ քաղաքներում ներկայացնողները պարտաւոր են հեղինակին վճարել 15% ընդհանուր հասոյթից, փոքր քաղաքներում և գիւղերում 10%: Զը վճարողները կենթարկուեն օրինական պատասխանատուութեան պատուհասի ընդհանուր օրէնքների հիման վրայ: Հեղինակի հասցէն՝ Тифлисъ, А. Ширванзаде.

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Библиотека
Арм.ССР
Ս. Մելիքյան Ալիսնկяна

-6 NOV 2011

ՆԻՒՐՈՒՄ ԵՄ

ԻՄ ԲԱՐԵԿԱՄ ԵՒ ՀԱՅՐԵՆԱԿԻՑ

ԱՐՍԷՆ ՄՈՎՍԻՍԵԱՆ

ԲՈՒԴԱՂԵԱՆԻՆ

Գիրվանզադէ

ՍԻՐԵԼԻ ԱՐՍԷՆ

Անձնական բարեկամութիւնը չէ միայն, որ դրդում է ինձ նուիրել քեզ այս համեստ աշխատութիւնը: Այլ ջերմ սէրը, որ ունիս դէպի հո ծնողների ծննդավայրը, նրա վշտերն եւ ուրախութիւնները, բնական է որպէս զի քեզ ձօնուի ամեն մի երկ, որի նիւթն այդ վշտերն եւ ուրախութիւններն են:

Քո Գիրվանզադէ

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

ՈՍԿԱՆ, պայտագործ 41—49 տարեկան։
ՇՈՒՇԱՆ, նրա կինը, հացթուխ 30—38 տարեկան։
ՍՕՆԱ, նրանց աղջիկը 9—17 տարեկան։
ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ 41—49 տարեկան։
ՋԱՒՆԻՇԱՆ, Սօնայի սկեսուրը 55 տարեկան։
ՁՈՓՈՒՌ ԿԱՐԱՊԵՏ, Սօնայի ամուսնու եղբայրը 36 տարեկան։
ՄՈՒՐԱԴ, Սօնայի ամուսինը 32 տարեկան։
ՋԱՎԱՀԻՐ, կարապետի կինը 30 տարեկան։
ՄԻԱՆՍԱԶ, կախարդուհի, պարսկուհի 55 տարեկան։
ՋԱՌԻԿ, *ՄԱՆԱՆ*, *ԽԱՉԻԿ* } Սօնայի մանկութեան ընկերները

Առաջին եւ երկրորդ արարւածների մէջ անցնում է ութ տարի։

ԱՌԱՋԻՆ ԱՐԱՐԻԱԾ

Սօճայի մանկութիւնը կամ առաջին հարուած

Տեսարանը ներկայացնում է Ոսկանի տան զաւիթը։ Հեմի աջ կողմը փլատակներ, խորքում հողաթումբ։ Ձախ կողմը քեմի Ոսկանի տնակը մի դռնով եւ մի լուսամուտով։ Խորքում, քեմի ամբողջ լայնութեամբ, փայտեայ աններկ ցանկապատ, մէջտեղը մի խարխուլ դռնակ։ Ցանկապատի ետեւը փողոց աջ ու ձախ։ Հեռու երեւում են կանաչազարդ լեռներ։

Ձախ կողմում, տնակի առջեւ, մի լայն ու մեծ թախտ, վրէն հնամաշ կապերտ, մի մինդար եւ մի բարձ։

Հեմի վրայ քանի մի մեծ քարեր, որոնք ծառայում են իբրեւ նստարաններ։ Հողաթումբը լուսաւորւած է արեգակի լուսով։ Միւս մասերը քեմի ստուերի մէջ են։

ՏԵՍԻԼ Ի

ՇՈՒՇԱՆ եւ ՍՕՆԱ.

ՇՈՒՇԱՆ (գալիս է ձախ կողմի դռնով, շալը գլխին գցելով։ Ժամանակից առաջ թառամած կին է, կոշտ ձեռներով, թոնիրների կրակից կիզած երեսով։ Հագած է ճնամաշ արխալուղ, լայն ոտաշոր, սեւ չուստեր)։ *Ես գնում եմ Մէջլումենց հացը թոնրից հանելու։ Հիմայ*

Թխած պիտի լինի։ Տես, Սօնա, հեռու տեղ չը գնաս, մեր բազում խաղ արա։

ՍՕՆԱ. (ինը տարեկան հասակումն է։ Գեղեցկադէմ, խոշոր, կապոյտ աչքերով եւ ոսկեգոյն մազերով աղջիկ է։ Հագած է կարճ արխալուղ հասարակ չթից, լայն ոտաշոր, սեւ չուստեր)։ *Մենակ ինչպէս խաղամ։*

ՇՈՒՇԱՆ. Կանչիր ընկերներիդ այստեղ։ Ես էլ դրսում ուժ տեսնեմ, կուղարկեմ։

ՍՕՆԱ. (աչխոյժ)։ *Փողոց վազել կարող եմ։*

ՇՈՒՇԱՆ (հառաչելով), *Չէ, որդի, փողոց դուրս գալ չի կարելի։ Մեր բազում խաղ արա։*

ՍՕՆԱ.. Ինչո՞ւ, մամա։

ՇՈՒՇԱՆ. Նրա համար, որ դու այժմ մեծ աղջիկ ես։

ՍՕՆԱ. (աջ ձեռով թեթեւակի զարկում է իր թշին)։ *Վայ, մեծ աղջիկ։ Իննը տարեկանը մեծ է։ Տես, տես, մամա, աչքերիդ երևաց, որ սուտ ասացիր։*

ՇՈՒՇԱՆ (սաստելով)։ *Սուս, աղջիկը մօրն այդպիսի բաներ չի ասիլ։*

ՍՕՆԱ. (զղջալով)։ *Մեղայ Աստծու։ Բայց ինչո՞ւ Զաուիկն ու Մանանը գնում են ամեն տեղ, ուր որ ուզում են։*

ՇՈՒՇԱՆ (հառաչելով)։ *Էհ, որդի, նրանց բանն ուրիշ է։ Դէ, ես գնացի, զդոյշ խաղ արա։* (Համբուրում է Սօնային եւ գնում է ցանկապատի դռնակով դէպի աջ, գլուխը տխուր շարժելով)։

ՏԵՍԻԼ II

ՍՕՆԱ, ՋԱՒԻԿ, ՄԱՆԱՆ եւ ԽԱՉԻԿ

ՍՕՆԱ. (Շուռանի գնալուց յետոյ, մի քանի վայրկեան մտածում է, աջ ձեռով ծնօտը բռնած։ Յետոյ վազում է դէպի աջ, բարձրանում է հողաթմբի վրայ եւ բարձր ձայնով կանչում է)։ *Զաուիկ, Մանան, եկէք այստեղ, եկէք այստեղ։* (Վերադառնում է բեմի կեդրոնը)։

ՄԱՆԱՆ (բեմի ետեւից)։ *Եկանք, եկանք։* (Վազում է բեմի աջ կողմից։ Սօնայի հասակակից եւ նրա նման հագնւած աղջիկ է, գլուխը բաց։ Գեր է, շատ թուխ երեսով, կարմիր թշերով)։

ՋԱՒԻԿ (բեմի ետեւից)։ *Եկանք, եկանք։* (Վազում է բեմ Մանանի ետեւից։ Նոյն հասակի եւ նոյնպէս հագնւած աղջիկ է։ Կաղում է)։

ԽԱՉԻԿ (վազում է բեմ ցանկապատի դռնակով աջ կողմից։ Ութ-ինն տարեկան տղայ է առողջ, աչխոյժ դէմքով։ Հագած է արխալուղ, նեղ վարդիկ, ոտներին չուստեր, գլխին կարմիր թաշակ)։ *Ես էլ եկայ, մայրդ կանչեց։*

ՍՕՆԱ. Եկէք խաղանք։

ԱՄԵՆՔԸ (խմբելով)։ *Խաղանք, խաղանք։*

ԽԱՋԻԿ. Հա, ինչ խաղանք։

ՄԱՆԱՆ. Վազենք փողոց, վազենք փողոց։

ՍՕՆԱ. Չէ չէ, փողոց չի կարելի, մայրս ասաց։ Նա չի թողնում։

ԶԱՌԻԿ. Որ չի թողնում, այստեղ խաղանք, ուրախանանք։

ԽԱՋԻԿ. Բա ինչ խաղանք, ինչ խաղանք։

ԱՄԵՆԲԸ (Մի fանի վայրկեան մտածում են)։

ԶԱՌԻԿ. Հա, գեղուխիկ, գեղուխիկ (ծափ է տալիս եւ թռչկոտում)։

ԽԱՋԻԿ, Հա, ով կը գեղուխ, ով կը գեղուխ։

ՄԱՆԱՆ. Ես կը գեղուխմ։ (Ծափ է տալիս, թռչկոտում)։

ԶԱՌԻԿ (վիճելով)։ Չէ, ես կը գեղուխմ, ես, ես։

ՄԱՆԱՆ. Դու կաղիկ ես, դու չես կարող։ Ես կը գեղուխմ, ես, ես։

ԶԱՌԻԿ. Դու հաստիկ ես, դու չես կարող։ Ես կը գեղուխմ, ես, ես։

ՄԱՆԱՆ. Չէ, ես։

ԶԱՌԻԿ. Չէ, ես։

ՄԱՆԱՆ. Այ քեզ (զարկում է Զառիկի ուսին)։

ԶԱՌԻԿ. Այ տես (զարկում է Մանանի ուսին)։

ՄԱՆԱՆ (բռնում է Զառիկի մազերից)։ Մազերդ կը քանդեմ։

ԶԱՌԻԿ (յարձակվում է Մանանի վրայ)։ Աչքերդ կը հանեմ։

ԽԱՋԻԿ (մէջ է ընկնում եւ Զառիկին ու Մանանին իրարուց բաժանում)։ Էյ, ամօթ է, մի կուէք, թէ չէ՝ երկուսիդ էլ կը դնգսեմ։ Ոչ դու, ոչ նա, ոչ էլ ես։ Թող գեղուխի Ովսաննան, Սիրուն Սօնան, Ովաննանն։

ՍՕՆԱ. Ես չեմ ուզում, չեմ կարող։

ԽԱՋԻԿ. Ինչո՞ւ, ինչո՞ւ չես կարող։

ՍՕՆԱ. Գլխացաւս կը բռնի, ոտք ու ձեռքս կը թմրին։

ՄԱՆԱՆ. Նազ մի արա, կապուտաչ։

ԽԱՋԻԿ. Մեր ամենից դու ես լաւ համ թաղնվում համ վազում։

ԶԱՌԻԿ. Քեզ գտնելը դժւար է։

ՄԱՆԱՆ. Քեզ բռնելը հունար է։

ԶԱՌԻԿ. Հասա Մանիկը կը քրտնի։

ՄԱՆԱՆ. Հասա Զառիկը կը յոգնի։

ԽԱՋԻԿ. Դէ շուտ արէք, շուտ արէք, երեսներդ շուռ տուէք, աչքերդ պինդ ծածկեցէք։

ԱՄԵՆԲԸ, ԲՅՑԻ ՍՕՆԱՅԻՑ (երեսները ձեռներով ծածկում են, ծիծաղելով)։

ՍՕՆԱ (մի fանի անգամ պտտում է իր ընկերների շուրջը)։ Ես այստեղ եմ, այնտեղ եմ։ Ոչ այնտեղ եմ, ոչ այնտեղ։ Տեսէք, տեսէք, նըստեցի, ձիւնը տեսայ մրսեցի։ Թռչուն ունիմ սպիտակ, կտուց ունի կապուտակ։ Վռւյ վռւյ վռւյ

կանչում է, շունը վրէն հաչում է։ (Լռում է։ Համր խլրտով նեռանում է եւ բաւական ժամանակ թագսի տեղ փնտրում։ Վերջապէս, թագնվում է ցանկապատի եսեւում դէպի ձախ)։ *Դէ, աչքներդ բաց արէք, եկէք, եկէք, դէս վազէք, թէ կարող էք՝ ինձ գտէք։*

ԱՄԵՆԻՔ (երեսները բաց են անում, մի քանի վայրկեան անշարժ աչ ու ձախ նայում, ապա ցրւում են զանազան կողմեր՝ Սօնային գտնելու)։

ՋԱՌԻԿ (գնում է դէպի ձախ)։ *Այստեղ չէ։*

ՄԱՆԱՆ (գնում է դէպի աչ)։ *Այստեղ չէ։*

ԽԱՉԻԿ (բաց է անում ձախ կողմի տնակի դուռը, նայում է)։ *Այնտեղ չէ։*

ՋԱՌԻԿ (գնում է խորխը)։ *Այստեղ չէ։*

ՄԱՆԱՆ. Չը կայ։

ԽԱՉԻԿ. Չը կայ։

ՍՕՆԱ. Աւ՛ւ, աւ՛ւ։

ՄԱՆԱՆ. Չայնը կայ, ինքը չը կայ։

ՋԱՌԻԿ (վազում է դէպի խորխը)։ *Այ, ես գտայ, լաւ գտայ։ Այ, ես ընկայ, լաւ ընկայ։* (Ընկնում է ու իսկոյն վեր կենում)։

ՄԱՆԱՆ. Զոլախն ընկաւ։ (Ծիծաղում է բարձրաձայն)։

ԽԱՉԻԿ (ծիծաղում է բարձրաձայն)։

ՍՕՆԱ (կատուի նմանեցնելով)։ *Միաւ՛ւ, միաւ՛ւ։*

ՋԱՌԻԿ. Փիշօ փիշօ, փիշօ փիշօ։

ՄԱՆԱՆ. Փիշտ։

ՋԱՌԻԿ (զարկելով Մանանի ուսին)։ *Հաստլիկ Մանիկ, դէ, գտիր։*

ՄԱՆԱՆ (զարկելով Ջառիկի ուսին)։ *Կաղլիկ Ջառիկ, դէ գտիր։*

ՍՕՆԱ. Միաւ՛ւ, միաւ՛ւ։

ՋԱՌԻԿ.
ՄԱՆԱՆ.
ԽԱՉԻԿ.
} (Մի քանի վայրկեան եւս փնտրում են, դէս ու դէն վազելով, ծիծաղելով, իրար հրելով)։

ՍՕՆԱ (յանկարծ երեւում է բեմի աջ կողմում, փլատակների վրայ)։ *Դուք չը գտաք, չը գտաք, դուք էրվեցիք, էրվեցիք, դէ, թէ կարող էք, բռնեցէք։* (Վազում է)։

ԱՄԵՆԻՔ (ընկնում են Սօնայի եսեւից։ Պոյտներ են անում մի քանի անգամ, չեն կարողանում նրան բռնել)։ *Այն կողմով, այս կողմով։ Դէս վազենք, դէն վազենք։*

ՍՕՆԱ (վազել է դէպի ձախ, յետոյ դէպի խորխը, երկու անգամ ցատկել է ցանկապատի վրայով։ Ցետոյ դէպի ձախ եկել)։ *Ծիվ, ծիվ, ծիվ, մեծ արծիվ, կուտ եմ բերել քեզ համար։ Ծիվ, ծիվ, ծիվ, այ հաւեր, եկէք, կերէք, կըշտացէք։ Ծիվ, ծիվ, ծիվ։*

ԽԱՉԻԿ. Օհ, ես յոգնեցի։ (Կանգ է առնում)։

ՄԱՆԱՆ. Օհ, ես քրտնեցի։ (Կանգ է առնում)։

ՋԱՌԻԿ. Օհ, շունչս կտրուեց։ (Կանգ է առնում)։

ԱՄԵՆԲԸ (նորից ընկնում են Սօճայի ետեւից)։

ՍՕՆԱ (բաւական միջոց եւս դէս ու դէն փախչելուց յետոյ, բարձրանում է աջ կողմի ճոպաթմբի վրայ։ Կանգ է առնում այնտեղ, նիհչ է արձակում յանկարծ եւ ընկնում է երեսի վեր, արեգակի շողերի տակ։

ԱՄԵՆԲԸ (շրջապատում են Սօճային)։ *Բռնեցիք, բռնեցիք։* (Ուզում են բռնել, բայց տեսնելով Սօճայի աղաւաղուած կերպարանքը, սարսափով յետ են կանգնում եւ ապշած նայում միմեանց։ Քանի մի վայրկեան լռութիւն)։

ՄԱՆԱՆ. Ինչո՞ւ ընկաւ։ (Մօտենում է Սօճային)։

ԽԱՉԻԿ. Ուշքը գնաց։ (Մօտենում է Սօճային)։

ՋԱՌԻԿ (մօտենում է Սօճային)։ *Տեսէք, տեսէք, լիմոնի պէս դեղնեց։*

ՄԱՆԱՆ. Աչքերը բաց են, կիսաբաց։

ԽԱՉԻԿ. Դէմքն սկսեց կարմրել։

ՋԱՌԻԿ. Չէ չէ, հիմի կապաւում է։

ՄԱՆԱՆ. Փրփուր կապեց բերանը։

ԽԱՉԻԿ. Տեսէք, տեսէք, բութ մատները ծռել են, մէս մատների տակ մտել։

ՋԱՌԻԿ. Շունչը կտրել էր, յետ եկաւ։

ԽԱՉԻԿ. Դողդողում է։

ՄԱՆԱՆ. Խռխռում է։

ՋԱՌԻԿ. Վիզը կտրած հաւի պէս։

ԽԱՉԻԿ. Մայրը տանը չէ, ինչ անենք։

ՄԱՆԱՆ. Եկէք խեղճին բարձրացնենք։ (Ուզում է Սօճային բարձրացնել)։

ՋԱՌԻԿ. Որ տուն տանենք, պառկեցնենք։ (Ուզում է Սօճային բարձրացնել)։

ԽԱՉԻԿ (Մանանի եւ Ջառիկի թեւերից բռնելով)։ *Էյ, ձեռ մի տուէք, մի տուէք։*

ԲԵՄԻ ԵՏԵՒԻՑ (լսում է սազի ձայն առանց երգի)։

ԱՐԵԳԱԿԸ (լուսաւորում է խումբը)։

ԱՄԵՆԲԸ (գլուխները բարձրացնելով, մի բանի վայրկեան լուռ ականջ են դնում)։

ՏԵՍԻԼ III

ՆՈՅՆՔ ԵՒ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (երեւում է ցանկապատի ետեւում, գալով ձախ կողմից։ Միջահասակ, ամրակազմ տղամարդ է կարճ խուզած ալեխառը մազերով ու միրուքով, որոնք զգզգած են։ Գլխի մազերի մէջ երեւում են յարդի շիւղեր։ Ոտաբոբիկ է, գլխաբաց։ Հագած է հաստ կապոյտ կտաւից կարած շապիկ, նոյն գոյնի վարտիք, որ ցրա ոտները ծածկում են մինչեւ սրունքները։ Կուծքը կիսաբաց է, բաւամազ)։

ԵՐԵՒԱՆԵՐԸ. *Գիժ-Դանիէլը, Գիժ-Դանիէլը։ (Փախչում են այս ու այն կողմ)։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (սազը ետագելով երգում է).

Էյ ժողովուրդ, երգս լսէք,
Ես բիւլբիւլ եմ Գիւլիստանի բաղերից
Էյ ժողովուրդ, դարդս լսէք,
Ես բայդուշ եմ Դաղստանի ժայռերից։
Բալաս ճնաց քարերի տակ,
Մինիկ բալաս, մարալի պէս դեղեցիկ,
Մազեր ունէր ոսկէ թելեր՝
Աչեր ունէր կապոյտ կապոյտ խոշորիկ։
Էյ ժողովուրդ, երգս լսէք,
Ես բիւլբիւլ եմ Գիւլիստանի բաղերից,
Էյ ժողովուրդ, դարդս լսէք,
Ես բայդուշ եմ Դաղստանի ժայռերից։

ՍՕՆԱ. (գլուխը հանդարտիկ բարձրացրել է եւ ապուշ հայեացքով նայում է աջ ու ձախ)։

ԽԱԶԻԿ (որ փախել էր դէպի աւանսեն, վախենալով մօտենալ, բարձր ձայնով)։ *Դանիէլ ապեր, Դանիէլ ապեր, Սօնան ընկաւ, այ տես, տես։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (դադարել է երգել ու նւագել)։ *Պատառ պատառ կանեմ, հում հում կուտեմ։*

ԽԱԶԻԿ. Նա խեղճ է, ձեռ մի տուր։ Ուշքը գնացել է։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (Սօնային մօտենալով)։ *Հաա, ընկաւ ես։ Ո՞վ ես։ Նա ընկած էր մէջքի վրայ, արևի տակ, ձեռները կրծքին։ Ճակատից արիւն էր գալիս աղբիւրի պէս։* (Թեւում է եւ ուշադիր նայում Սօնայի երեսին։ Շօշափում է նրա մազերն, աւելի ու աւելի խորը դիտելով)։

Երկարատեւ լռութիւն։

ՍՕՆԱ. (թոյլ ձայնով)։ *Գլուխս ցաւում է։*

ԵՐԵՒԱՆԵՐ (մինչ Գիժ-Դանիէլը դիտում է Սօնային, միմեանց նշաններ անելով, խրախուսում են ու խմբւում միասին։ Յետոյ կամաց կամաց մօտենում են Գիժ-Դանիէլին ու Սօնային)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (տարօրինակ ուրախութեամբ)։ *Մանիշակս։* (Աւելի բարձր)։ *Մանիշակս։* (Մի անգամ եւս դիտում է Սօնային)։ *Հաա, դու ես, ես քո աղբի անցած, ես քո ես աղբիները։ Հաա, դու իմ Մանիշակն ես։ Աստ, բալաս։*

ՍՕՆԱ. (գլուխը թեթել էր կրծքին, բարձրացնում է, զարմացած նայում Գիժ-Դանիէլի երեսին)։ *Գլուխս ցաւում է։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (դէպի յիշողութիւն)։ *Նրա գլուխը չախչախուեց քարերի տակ։* (Սօնային)։ *Վերկաց, բալաս, վեր կաց, քեզ տունն տանեմ։*

ԽԱԶԻԿ. Այ, Դանիէլ ապեր, Սօնանց տունը սա է։ (Ցոյց է տալիս տնակը)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (արբազան երկիւղածութեամբ) *Սուս, նա իմն է, իմը։ (Դէմ է Սօնայի գլուխը)։ Այ, մազերը ոսկէ թելեր, աչքերը կապոյտ*

4944-ՏՊ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴ

կապոյտ փիրուզաներ։ (Սօնային)։ Տուր ինձ ձեռդ, բալաս, վեր կաց։ (Ոտի է կանգնեցնում Սօնային, խնամքով սրբում է հագուստը, սազը դնելով գետնին)։ Սիրուն ես, շատ սիրուն։ (Երեխաներին)։ Էյ, Մանիշակիս ընկերներ, սազս վերցրէք։

ԽԱԶԻԿ (իսկոյն սազը վերցնում է գետնից)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Լաւ պահեցէք, չը վախենաք, օձ կայ նրա մէջ, չի կծիլ։ (Սօնային գրկած բարձրացնելով)։ Եկ, եկ, սիրուն բալաս։

ԽԱԶԻԿ (վախեցած իսկոյն սազը դնում է թախտի վրայ)։

ՋԱՌԻԿ (Շուշանին տեսնելով)։ Այ, Շուշան բաջին եկաւ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (Սօնային գրկած բերում է դէպի բեմի կենտրոնը)։ Այսպէս գրկած նրան, երդ էլ ասում, շւացնում։

ՏԵՍԻԼ IV

ՆՈՑՆՔ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ (գալիս է ցանկապատի ետեւից այգ կողմից։ Տեսնելով երեխաներին, տխուր եւ Սօնային Գիժ-Դանիէլի գրկում)։ Ամէն, ինչ է պատահել երեխայիս։ (Վազում է առաջ)։

ԽԱԶԻԿ. Մաղ էինք անում, ընկաւ։

ՇՈՒՇԱՆ (ցնցւելով)։ Ընկա՜ւ։

ՋԱՌԻԿ (ցոյց տալով հողաթումբը)։ Այ այնտեղ։

ՄԱՆԱՆ. Կապտեց լեզակի պէս։

ՋԱՌԻԿ. Արեւում էր վիզը կտրած հաւի պէս։

ՄԱՆԱՆ. Բերանը փրփուր էր կապել։

ՇՈՒՇԱՆ (հետզհետէ սարսափն ու ահն ի սաստկացել է։ Ձեռները թուլանում են, հացերն ընկնում են կռնատակից։ Յուսահատ)։ Թոնիր ընկնէը նրա մայրը, խորովուէր, չը տեսնէը նրան այդ օրում։ (Խեղդած ձայնով)։ Բեր այստեղ, Դանիէլ աղբեր, դիր սաքուի վրայ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (խնամքով բերում է Սօնային եւ դնում թախտի վրայ)։ Թողէք Մանիշակս հանգստանայ։

ՇՈՒՇԱՆ. Սօնա է անբաղդի անունը։ (Պառկեցնում է Սօնային մինդարի վրայ)։

ՍՕՆԱ. Մամա, ինչ է պատահել։

ՇՈՒՇԱՆ. Ոչինչ, բալաս, ոչինչ։—

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Քնել էիր, Մանիշակս, արեւի տակ, հողի վրայ, էյ, սազս։

ԽԱԶԻԿ (սազը վերցնում, տալիս է Գիժ-Դանիէլին։ Հացերը գետնից վերցնում է ու դընում թախտի վրայ)։

ՇՈՒՇԱՆ (երեխաներին)։ Գնացէք, բալաներս, գնացէք ձեր տները։ Սօնան ոչ կապտել է, ոչ փրփրել։ Սուտ է։ Ոտը քարին է դիպել, ընկել

է։ Էէ, ով չի ընկնում ձեզանից։ Այնպէս չէ՞, Դանիէլ աղբեր։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Նա քարերի տակ էր ընկել, կոճերի տակ, հողի տակ։ Եկայ տեսայ։ Տեսայ, մռնչեցի։ Գազան էի։ Երկինքը փուլ եկաւ գլխիս, երկիրը պատուեց ոտներիս տակ։

ՇՈՒՇԱՆ. Դէ, գնացէք, գնացէք։

ԵՐԵՒԱՆՆԵՐ (խուռ ու դանդաղ գնում են աջ կողմով)։

ՏԵՍԻԼ V

ՆՈՅՆԻՒ ԱՌԱՆՑ ԵՐԵՒԱՆՆԵՐԻ

ՇՈՒՇԱՆ. Դանիէլ աղբեր, դու մեզ ճանաչում ես։ Ես Նալբանդ Ոսկանի կնիկն եմ, հացթուխ Շուշանը։ Աստծու սիրոյն, ինչ որ տեսար, մեր մէջ ճնայ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (խորհրդաւոր)։ Սուս, Մանիշակս պիտի քնի։ Թող սազ ածեմ նրա համար։ (Սազը դնում է կրծքին, մի ձեռի վայրկեան նւագում անշարժ, ապա հանդարտ շարժումով գնում է ցանկապատի դռնակով, շարունակ նուագելով)։ Էյ ժողովուրդ, երգս լսէք։

ԲԵՄԻ ԵՏԵՒԻՑ (սազի նուագումը բաւական ժամանակ լսում է, յետոյ հեռանալով կամաց կամաց քայլում է եւ ընդհատում։

ՇՈՒՇԱՆ. Աձիր, անբաղդ, աձիր, ես էլ քո

օրն ընկայ (Սօնային)։ Գլուխդ ցաւո՞ւմ է։

ՍՕՆԱ. Չէ, մէջքս է ցաւում։ Մամա, ինչ պատահեց։ Ինչո՞ւ իմ ընկերներին դուրս արիր։

ՇՈՒՇԱՆ (հառաչելով)։ Էէ, որդի, նրանք քո ընկերները չեն, թող գնան իրանց բաղդաւոր ծնողների մօտ։

ՍՕՆԱ. Ա՛հ, էլ չի լսւում սազի ձայնը։ Գնաց Դանիէլ ապերը։ Մամա, նա գիժ է։

ՇՈՒՇԱՆ. Ասում են, որդի, ով գիտէ։

ՍՕՆԱ. Նա առաջ էլ գիժ է եղել։

ՇՈՒՇԱՆ. Չէ, որդի, առաջ այդպէս չէր։

ՍՕՆԱ. Ինչից՞ է գժւել, մամա։

ՇՈՒՇԱՆ. Թող, որդի, ժամանակը չէ դրա մասին խօսելու։

ՍՕՆԱ. Մամա, պատմիր, ես ուզում եմ լսել։

ՇՈՒՇԱՆ. Դէ, լսիր, որդի։ (Նստում է Սօնայի fով եւ գրկում նրա գլուխը)։ Ասում են, որ շատ տարիներ սրանից առաջ Դանիէլը խելքը գլխին մարդ էր, ընտանիքի տէր։ Նա ունէր մի չորս տարեկան աղայ։ Մի օր խեղճ երեխան հիւանդանում է և մի շաբաթ չանցած մեռնում։ Դանիէլը այնքան է ախորժում, որ գրկւում է քնից ու հանգստութիւնից։ Երկու տարի անցած՝ Աստուած նրան պարգևում է մի աղջիկ։ Դանիէլը մխիթարւում է։ Բայց պատահում է մի ուրիշ անբաղդութիւն. մի առաւօտ նրա կնիկը,

հորից ջուր քաշելիս, սկսում է և ընկնում։ Նրա գլուխը դիպչում է ջրհորի պատերին, ջարդուում։ Դուրս են բերում նրան այնտեղից մեռած։ Դանիէլն անբաղդանում է։

ՍՕՆԱ. (gրուած)։ Խեղճ Դանիէլ ապեր։

ՇՈՒՇԱՆ. Նրա մինիկ մխիթարութիւնը կեանքում ճնում է երեխան։ Դանիէլն իւր սիրտը, հոգին տալիս է նրան։ Երեխան օր օրի վրայ մեծանում է և քանի մեծանում է, այնքան նմանուում է իւր մօրը։

ՍՕՆԱ. Դու տեսել ես նրան։

ՇՈՒՇԱՆ. Ինչպէս չէ։ Դա մի սիրուն աղջիկ էր շէկ մազերով, կապոյտ աչքերով։

ՍՕՆԱ. Շէկ մազերո՞վ։ (Նայում է իւր մազերին)։ Ինձ նման։

ՇՈՒՇԱՆ. Այո, որդի, նա քեզ էր նման։ (Ուշադիր դիտելով Սօնային)։ Սպասիր, աղջի, սպասիր։ Ի՛նչ եմ ասում քեզ նման էր։ Դու նա ես, ոտքից մինչև գլուխ, հա, հիմա եմ տեսնում։

ՍՕՆԱ. Պատմիր, մամա, պատմիր։

ՇՈՒՇԱՆ. Աղջկայ անունը Մանիշակ էր։ Դանիէլը նրան պաշտում էր սրբի պէս։ Բայց Աստծու ձեռքը նրա ճակատից ջնջած է լինում բազդ ասած բանը։ Եօթ տարեկան է լինում Մանիշակը, երբ պատահում է մեծ երկրաշարժը։

ՍՕՆԱ. Յեռո՛յ, յեռո՛յ։

ՇՈՒՇԱՆ. Երեխան ճնում է վայտակների տակ։

ՍՕՆԱ. Մեռնո՞ւմ է։

ՇՈՒՇԱՆ (հառաչելով)։ Մեռնում է։

ՍՕՆԱ. Ի՞նչ է անում Դանիէլ ապերը։

ՇՈՒՇԱՆ. Ի՞նչ կարող էր անել մինիկ զաւակին կորցնող ծնողը։ Խելքը կորցնում է։

ՍՕՆԱ (յուզած)։ Խեղճ Դանիէլ ապեր, խեղճ Դանիէլ ապեր։

ՇՈՒՇԱՆ. Երկրաշարժի ժամանակ նա իւր խանութումն է լինում։ Տուն է վազում ոտաբաց, գլխաբաց, տեսնում է անբաղդի դիակը։

ՍՕՆԱ (աւելի յուզած)։ Յեռո՛յ, յեռո՛յ։

ՇՈՒՇԱՆ. Ասում են տեսնողները, որ Դանիէլն այնպէս է գոռում, այնպէս, որ ամենքը սարսռում են։ Յեռոյ նա ընկնում է դիակի վրայ։ Մինչև երեկոյ չեն կարողանում նրան հեռացնել։ Իրիկնադէմին ոտքի է կանգնում խելքը կորցրած։ Եօթ տարի է անցել այն օրից։ Անբաղդ մարդը, տուն ու տեղ մոռացած, թափառում է փողոցներում, ողբալով կորած զաւակին։ Նա իրանից երգեր է հնարում, կանգնում է տերակների վրայ ու երգում, երգում անվերջ։

ՍՕՆԱ (մեղմիկ լալիս է)։

ՇՈՒՇԱՆ (ծոյելով Սօնայի գլուխը)։ Լաց մի լինիր, որդի, մի կարտաիր մօրդ սիրտը, ես նրանից բազդաւոր չեմ։

ՍՕՆԱ (աչքերը սրբելով)։ Մամա, ճշմարիտ ես ասում, որ ես նման եմ նրա աղջկան։

ՇՈՒՇԱՆ. Նման ես, որդի, շատ ես նման։ Որքան նրան լաւ եմ յիշում, այնքան աւելի ես նմանւում։

ՍՕՆԱ. Ասում ես Մանիշակ էր նրա անունը։

ՇՈՒՇԱՆ. Մանիշակ։

ՍՕՆԱ. Մանիշակ, Մանիշակ, ինչ սիրուն անուն է։

ՇՈՒՇԱՆ. Լաւ, հանգստացիր, որդի։ (Վերցնում է հացերն ու գնում ձախ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ VI

ՍՕՆԱ. ԵՒ ՈՍԿԱՆ

ՍՕՆԱ (մնալով մենակ, անշարժ հայեացքը յառում է մի կէտի վրայ, յետոյ ճակատը տրորում է)։

ՈՍԿԱՆ (գալիս է ցանկապատի դռնակով աջ կողմից։ Միջահասակ մարդ է, շատ տգեղ։ Ձեռները, երեսը եւ պարանոցը սեւացած են ածխի մուրով։ Մեծ ֆիթը ծածկած է արիւնագոյն բշտիկներով։ Ականջների ու աչքերի տակ կապոյտ գծեր, միրուկն ու գլխի մազերը գզգըզուած են։ Հագած է երկայն արխալուղ շատ մեծ գրպաններով, չուխայ, գլխին սեւ մորթէ փափաղ, ոտներին չմուշկներ։ Արխալուղի վրէն մէջքին կապած է հաստաբակ կաշուէ գօտի։ Մօտենում է եւ չուխայի տակից թախտի վրայ գցում մի կտոր միս գոյնզգոյն թաշկինակի մէջ։ Ուրախ է, ցածր ձայնով երգում է)։

ՍՕՆԱ (հօրը տեսնելով, թախտից իջնում է)։ Լուռթիւն։

ՈՍԿԱՆ. Մայրդ տա՞նն է։

ՍՕՆԱ. Տանն է։ (Մեկուսի ուրախ)։ *Խմած չէ։*

ՈՍԿԱՆ. Այդ միսը տար տուր նրան, թող խորովի։ (Դուրս է բերում արխալուղի գրպանից մի բաւական մեծ շիշ օղի)։

ՍՕՆԱ. Աչքիս վրայ։ (Թաշկինակը վերցնում է եւ խլերն ուղղում դէպի տնակի դռները)։

ՈՍԿԱՆ. Մի բաժակ բեր։ (Երգում է ցածր)։ *Էյ բայ, բաբայ, դայ, դադայ...*

ՍՕՆԱ (տեսել է օղու շիշը)։ *Վա՛յ, օղին հետն է բերել։* (Գնում է տնակի դռներով)։

ՏԵՍԻԼ VII

ՆՈՅՆՔ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՈՍԿԱՆ (մնալով մի քանի վայրկեան մենակ, շիշը բարձրացնում է օդի մէջ, նայում է հրեւանիով։ Բաց է անում ու մի կում խմում)։ *Առանց բաժակի համ չունի։* (Նստում է թախտի վրայ, փափաղը վերցնում, մի կողմ է դնում։

Սպասում է բաժակի, բթի տակ երգելով)։ *Էյ, բաբայ, բայ, դադայ, դայ։*

ՇՈՒՇԱՆ (գալիս է տնակի դռնակով։ Նայում է Ոսկանին կեսամբաւնով)։ *Մեռել չը կաը, հաա, որ գերեզմանատուն գնայիը, քելեխ ուտելու ու հարբելու։*

ՈՍԿԱՆ (*շիշը ցույց տալով*)։ *Շուշան ջան, այսօր մեռելն էլ այստեղ է, կենդանին էլ։*

ՍՕՆԱ (գալիս է տնակի դռներով, բերելով մի դատարկ բաժակ, որ դնում է ճօր առջեւ)։

ՈՍԿԱՆ. Մի հատ թթու դրած վարունգ բեր։ (Բաժակը լեցնում է)։

ՇՈՒՇԱՆ. Վարունգ չունինք։

ՈՍԿԱՆ. Դէ, մի կտոր պանիր բեր։

ՇՈՒՇԱՆ. Պանիր չունինք։

ՈՍԿԱՆ. Կնիկ, էլի սկսեցիր չունինք-մունինք։ Բեր, ասում։

ՇՈՒՇԱՆ (Սօնային)։ *Աղջի, գնա մի քիչ կանանչ սոխ բեր։*

ՍՕՆԱ (գնում է տնակի դռներով, իիչ ացած յետ է գալիս, բերելով մի ափսէի վրայ մի կտոր հաց, աղ եւ մի խանի շիւղեր կանանչ սոխի, որ դնում է ճօր առջեւ)։

ՇՈՒՇԱՆ (ձեռքում կանգնած, ձեռները ծոցերին դրած, խորին կեսամբաւնով նայում է Ոսկանին, գլուխը տխուր շարժելով ու հառաչելով)։

ՈՍԿԱՆ. Այ, այդպէս։ Օղին առանց մեզայի համ չունէ։ (Խմում է։ Սոխը թաթխում է աղի մէջ եւ ուտում)։ *Էհէ, էհ, մարդիկ կան, որ քարոզում են. «Ուստա Ոսկան, մի խմիր»։ Հեշտ է ասել։ Ես մի օր Մաղրասեցի Տէր-Սարգսին շատ նեղը գցեցի։ Գիտես, Շուշան, նա օրինաւոր կոնծողներից է։* (Բաժակը ճոռից լեցնում է)։ *Գինին կուլայով է խմում։ Հա, մի օր նրան հարցրի. «Տէր հայր, հարբելը մեղք է»։ Նա ասաց. «Ի հարկէ»։ Ես հարցրի. «Հապա, դու ինչո՞ւ ես հարբում»։ «Ես գինի եմ խմում, ասաց, գինին Քրիստոսի արիւնն է»։ «Իսկ օղին», հարցրի ես», «Օղին, ասում է, սատանայի արիւնն է»։ «Դէ որ այդպէս է, ասացի ես, ես քրիստոնեայ եմ, դու մոլթանի, դու Քրիստոսի արիւնն ես ծծում, ես սատանայինը»։ Քո արեւն եմ ասում, Շուշան, Տէր Սարգսի լեզուն քիրթ կտրեց։* (Բաժակը ճոռից դադարեցնում է եւ ճոռից լեցնում)։

ՇՈՒՇԱՆ (Սօնային)։ *Գնա մի կտոր բիր, կրակ դիր խորովածի համար։*

ՍՕՆԱ. Աչքիս վրայ։ (Գնում է տնակի դռնով)։

ՏԵՍԻԼ VIII

ՈՍԿԱՆ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ (Սօնան գնալուց յետոյ, մօտենում է Ոսկանին)։ *Լսիր, մարդ, ցաւս լսիր։*

ՈՍԿԱՆ. Լսում եմ, ասա։

ՇՈՒՇԱՆ. Աղջիկդ ցաւագար է։

ՈՍԿԱՆ (բաւական անհարթեր)։ Հըը՞։ (Խըմում է)։

ՇՈՒՇԱՆ (աւելի զօրեղ ձեռնով)։ Աղջիկդ ընկնաւոր է։

ՈՍԿԱՆ. Ընկնաւո՞ր։

ՇՈՒՇԱՆ. Այո, ընկնաւոր։ Տակն ու վրայ լինի հօրդ գերեզմանը, երազս կատարւեց։ Նըստել էր դեղին ձին, երեխայիս էլ քամակին էր նստեցրել։ Գնում էր, գնում—չը գիտեմ ուր։ Թիւնբաթիւն լինի նա, ինչո՞ւ երեխայիս տարաւ, ինչո՞ւ։ (Արտասւում է)։

ՈՍԿԱՆ. Այսօր ընկե՞լ է։

ՇՈՒՇԱՆ. Ընկել է։ Սա չորրորդ անգամն է երեք տարւայ մէջ։ Էլ կասկած չը կայ, որ նա քրոջդ պէս ցաւագար է։

ՈՍԿԱՆ (տխրում է եւ մտածում)։ Հըը, հըը, հըը, հըը, ուրեմն այդպէս։ Լաւ, լաւ, շատ լաւ։ (Օղի է ածում)։ Դէհ ինչ արած, Աստծու բանն է։

ՇՈՒՇԱՆ. Գնա, գնա չոքիր եկեղեցու դրռներէն առաջ, ճակատդ քարերին քսիր, աղաչիր, պաղատիր Ներան։ Ասա. «Տէր Դու չար ոգին դուրս բեր երեխայիս մէջից, Տէր, տուր ինձ նրա ցաւը»։

ՈՍԿԱՆ (ձանձրացնելով)։ Լաւ լաւ, կասեմ, ինչո՞ւ չեմ ասիլ։ Ես աղօթել գիտեմ, չեմ մոռացել։ Գնա, խորովածը պատրաստիր, սոխ ուտելով ախորժակս փչացաւ։

ՇՈՒՇԱՆ. Քարացել է այդ մարդու սիրտը, Աստուած իմ։ (Գնում է տնակի դռներով եւ յետ է գալիս ձեռքին մի կապոյտ սփռոց, որ սփռում է սառուի վրայ եւ վրէն դնում հաց, կանաչեղէն ու մի բաճի ափսէներ)։

ՈՍԿԱՆ (մի բաճի վայրկեան մենակ մնալով, մի բաժակ եւս խմում է, յետոյ վեր է դրնում եւ սկսում է ման ու դարձ անել, ձեռներով իմիջ իր հետ խօսելով)։

ՏԵՍԻԼ IX

ՆՈՑՆՔ ԵՒ ԴԻԺ-ԴԱՆԻԷԼ

ԴԻԺ-ԴԱՆԻԷԼ (բեմի ետեւից նախ մի փիչ սազ է նւագում առանց երգելու, ապա երգում է նւագելով։ Գալիս է ցանկապատի դրռնակով։ Մի փիչ կանգ է առնում դռնակի առջեւ, ապա առաջ է գալիս)։

Ոտաբոբիկ թափառում եմ սար ու ձոր,
Ես Քեաբաճի եմ, ինձ զրկեցին Աւլիից։
Ծաբար տարէք խեղճ աշուղիս հօրն ու մօր,
Սազս զրկեն, ես փախչում եմ դուռնեայից։

ՈՍԿԱՆ. Լաւ ես երգում, Դանիէլ աղբեր։

համեցէք, համեցէք, եկ, կոկորդդ թրջիր։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. (դադարել է երգել ու ուագել։ Առաջ է եկել։ Շուրանին)։ *Կանչիր նրան, մէկ էլ տեսնեմ սիրուհիս։*

ՈՍԿԱՆ. Ո՞վ է սիրածդ, Դանիէլ աղբեր։ (Նստում է եւ մի բաժակ էլ խմում)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Նա ընկած էր հողի վրայ, արևի տակ։ Նրա ճակատից արիւն չէր գալիս։ Շուշան խաթուն, մութ գիշեր էր, անձրև, ցուրտ։ Եօթն անգամ եօթն սև գևեր ընկան վրէս։ Ուզում էին նրան խեղդել, Ասլան Դանիէլը չը թողեց։ Է հարիֆներ, լաւ լսեցէք, մազեր ունէր ոսկէ թելեր, աչքեր ունէր կապոյտ կապոյտ վիւրուզաններ։ Քեօռ օղլին կանգնեց բուրջի գըլխին, ղըռաթի բերանից կրակ էր թափւում։

ՏԵՍԻԼ X

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՕՆԱ.

ՍՕՆԱ. (երեւում է տնակի դռների առաջ)։ *Կրակը պատրաստ է։*

ՇՈՒՇԱՆ. Կրակ թափւի քո մօր գլխին։ (Մօտենալով Դանիէլին առանձին)։ *Մի թողնիր որ շատ խմի։* (Գնում է տնակի դռներով եւ ինչ ասցած չես է գալիս)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (Տեսնելով Սօնային, ուրախանում)։ *Եկ եկ, աղջիկս, մօտեցիր։* (Դուրս է

բերում շապկի ծոցից մի մեծ նուռ ու տալիս է Սօնային)։ *Նուռ եմ բերել քեզ համար։ Մանիշակիս պարտիզից է։ Առ, պահիր։ Քեզ ձեռ տուղին պատառ պատառ կանեմ, հում հում կուտեմ։*

ՍՕՆԱ. (նուռն առնելով)։ *Շնորհակալ եմ, Դանիէլ ապեր։*

ՈՍԿԱՆ. Ես հում չեմ ուտիլ, լաւ խորովեցէք, (հարբածի տոնով)։ *Դանիէլ աղբեր, կոնծիր* (բաժակը լեցնում է)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (առանց ուշադրութեան դարձնելու Ոսկանի վրայ, նայել է Սօնային հրեւանով, ուշադիր։ Բռնում է նրա ձեռից, առաջ է բերում)։ *Նա էլ քեզ նման էր, դու էլ նրա նման ես։ Նրա մազերն էլ այսպէս էին, աչքերն էլ։ Ճակատը ծով էր, երեսը մախմուր, վիզը բարձր չէյրանի պէս, մատները ունէր շիմշատի պէս։* (ծոյելով Սօնայի գլուխը) *Մեծ-մեծ քարեր էին ընկել վրէն, գլխից արիւն էր գալիս աղբիւրի պէս։ Ես պաչ արի, պաչ, արի, այսպէս, այսպէս։* (համբուրում է Սօնայի գլուխը)։ *Նա չէր սառել, չէր սառել։ Ցեղոյ սառաւ։*

ՈՍԿԱՆ. Ձ'ես ուզում կոնծել, լաւ, քո բաժակն էլ ես կը խմեմ ինչ արած։ (Խմում է)։

ՇՈՒՇԱՆ (որ հետաքրքրուած դիտել է գիժ-Դանիէլին եւ լսել)։ *Նաիր, Դանիէլ աղբեր։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (միշտ Սօնային նայելով, միշտ

իւր մտքով գբաղուած)։ *Մայրը հողի մէջ էր։ Ոչ ոք չը կար, որ գլխին վայ տար։ Ես մենակ էի։ Էյ, Շուշան խանում, Ասլան Դանիէլը մի խեղճ մարդ էր, գլուխը քաշ դերձակուԹիւն էր անում։* (Դառնում է Սօնային)։ *Գիտե՞ս, բալաս, ասեղս խլեցին, մկրատս առան, սիրտս կտոր կտոր արին մահուդի պէս։ Սօնա խաԹուն, սիրուն Մանիշակ, ինչո՞ւ փախար լինձանից։* (Հանդարս լալիս է, աւելի շուտ ինծկլտում է առանց արտասուքի)։

ՇՈՒՇԱՆ (հառաչելով)։ *Ուշ ու միտքը միշտ նրա վրայ է։ Խեղճ մարդ, արտասուքն էլ չորացել է։* (Գնում է տնակի դռներով եւ իսկոյն յետ է գալիս)։

ՍՕՆԱ. Լաց մի լինիր, Դանիէլ ապեր։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Ջե՞ս ուզում։ Ասլանը զուլդ է։ Ասլանը լաց չի լինիլ։ (Չարաքանալով)։ *Էյ, ղոչաղ կացէք, ղոչաղ կացէք։* (Սօնայի մազերը շոյելով)։ *Լաւ աղջիկ, խելօք աղջիկ, սիրուն Մանիշակ։*

ՈՍԿԱՆ (տիբը բարձրացնելով օդի մէջ, ճայում է)։ *Դեռ կայ, էլի կայ, շատ կայ։* (Բաժակը լեցնում է)։

ՍՕՆԱ (առանձին)։ *Դանիէլ ապեր, մի թողնիր, որ հայրիկը շատ խմէ։ Շատ խմելիս մայրիկիս ծեծում է։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (բարկանալով)։ *Հը՞ը, ծեծո՞ւմ է։ Ջէ, չեմ թողնիլ։ Էյ, ուստա Ոսկան, քիչ խմիր։*

ՇՈՒՇԱՆ. Սօնա, գնա, խորովածը շուռ տուր։

ՍՕՆԱ (գնում է տնակի դռներով եւ իսկոյն անցած յետ է գալիս)։

ՈՍԿԱՆ. Ի՞նչ, ո՞վ քիչ խմի։ Դու լաց էիր լինում, Դանիէլ աղբեր։ Ամօթ։ (Յոյց տալով օդու բաժակը)։ *Այ տղամարդի արտասուքը սա է։ Խմիր, լաց չես լինիլ։ Ես էլ առաջ լաց էի լինում, հիմա աչքերս ցամաքել են։ Խմիր ու մին սաղ ածիր, որ քէֆս բացւի։ Ա՛ռ, կոնծիր։* (Օդու բաժակն առաջարկում է)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (խլում է բաժակը եւ օդին թափում գետնի վրայ)։ *Ջեմ ուզում, Մանիշակս չի թողնում։*

ՈՍԿԱՆ. Աա, Մանիշակս, Մանիշակս։ Այստեղ Մանիշակ չը կայ։ Նա երկնքումն է։ Էյ, ի՞նչ արիր։ Ափսոս, ափսոս. երեք ձի եմ նալել մի շիշ օղու համար, դու թափո՞ւմ ես։ (Տիբը ետորից վերցնում է, որ բաժակը լեցնէ)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (խիստ)։ *Մի՛ ածիր, բաւական է։*

ՈՍԿԱՆ (շարունակելով իր գործը)։ *Մի՛ ածիր, հէ հէ հէ, որ օրից խելօքացար։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (տիբը խլում է Ոսկանից)։ *Քեզ ասում եմ, քիչ խմիր։ Մանիշակը չի թողնում։*

ՈՍԿԱՆ (բարկանում է)։ *Նա՞ է քեզ սովորեցրել, կնիկս։ Ես նրա հողին բերանից դուրս կը բերեմ։* (Գոռում է)։ *Էյ, Շուշան։*

ՍՕՆԱ (հոր գոռոցից ուժգին ցնցւում է)։ Վայ։

ՈՍԿԱՆ. Ասա, որ օղին տայ։ Դու ես նրան սովորցրել։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (ջիբը կրծիլն սեղմելով)։ Չեմ տալ, չեմ տալ, սրա մէջ օձի լեղի կայ, քեզ կը սպանի։

ՈՍԿԱՆ (աւելի բարձր)։ Չե՞ս լսում, ասա, որ տայ։

ՇՈՒՇԱՆ. Իրանից ուզիր, ինչ ես ինձ կպել։

ՈՍԿԱՆ (Գիժ-Դանիէլին)։ Էյ, տուր, իմ ապրանքն է։ Տուր, ես ծարաւ եմ։

ՇՈՒՇԱՆ. Հերիք չէ՞ լակածդ։

ՈՍԿԱՆ. Ի՞նչ, լակո՞ւ։ Ես շունն եմ, ես շունն եմ։ (Ոտի է կանգնում երերելով)։

ՇՈՒՇԱՆ. Շունը շնութիւնով այն չի անիլ, ինչոր դու ես անում։

ՈՍԿԱՆ. Դու ինչպէս ես համարձակւում ուրիշների մօտ ինձ խայտառակել։ Ես պատուաւոր մարդ եմ, ով չի ճանաչում ուստա Ոսկանին։ Ասա, որ ջիջը տայ, թէ չէ՝ աչքերս մթնում են։

ՇՈՒՇԱՆ. Տուր իրան, Դանիէլ աղբեր, տուր, աչքը կոխիր։

ՈՍԿԱՆ. Տո՛ւր, էյ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Չեմ տալ։ Մանիշակս վախենում է։

ՍՕՆԱ (մօտենում է Գիժ-Դանիէլին)։

ՈՍԿԱՆ (ծիծաղում է)։ Հապ, չե՞ս տալ։ Հիմայ իմացայ։ (Երկու ձեռների ցուցամատերը միացնում է)։ Դուք այսպէս էք այ, այսպէս։ (Շուշանին)։ Նա քեզ պաչել է, հա, պաչել է։

ՇՈՒՇԱՆ (չափազանց վշտացած)։ Սուս, անամօթ, դու մեռոն չունիս երեսիդ վրայ։

ՈՍԿԱՆ. Անառակ, անառակ։ (Ուզում է յարձակուել Շուշանի վրայ)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (աչքերը ոլորելով, սպառնում է ջեցով)։ Էյ, Ոսկան, տեղդ նստիր։

ՈՍԿԱՆ. Ես քո մազերը կը գզգզեմ։ (Յարձակւում է Շուշանի վրայ, բռնում է նրա մազերը)։ Քած շուն, քած շուն։

ՍՕՆԱ (սարսափած)։ Աման, Դանիէլ ապեր, նա մամային կը սպանէ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (շտապով ջիջը սագի ճեռ դրնում է թախտի վրայ եւ բռնում է Ոսկանի թեւերը յետեւից)։ Չեմ թողնիլ, չեմ թողնիլ։

ՈՍԿԱՆ (աշխատելով ազատուել Գիժ-Դանիէլի ձեռից)։ Թող, դու ով ես, գլի՛ժ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (Շուշանին ազատում է Ոսկանի ձեռից)։ Սո՛ւս, սո՛ւս Մանիշակս լալիս է։

ՈՍԿԱՆ (որ մի վայրկեան ազատուել է Գիժ-Դանիէլի ձեռից)։ Կորիր, ես քո Մանիշակի էլ, քո էլ հէրն անիծեմ։ (Թուում է Դանիէլի երեսին)։ Թո՛ւ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼԸ (թաւալում է Ոսկանին թախ-

տի վրայ եւ սկսում է խեղդել)։ *Մանիշակիս քարեբըի տակ գցեցիր։ Ասլան Դանիէլը քարը գլխովդ կը տայ, Յուլիանոս, այ քեզ, այ քեզ։*

ՈՍԿԱՆ (գոռում է)։ *Այ վայ, խեղդեց, ապատեցէք։*

ՍՕՆԱ (սարսափած փարւում է մօրը)։ *Մամա, խեղդում է։*

ՇՈՒՇԱՆ. Թող խեղդի, մեզ էլ ազատի, նրան էլ։

ՍՕՆԱ (թողնելով մօրը, արտասուքը աչքերին բռնում է Գիժ-Դանիէլի շապկի փեշերը)։ *Դանիէլ ապեր, Դանիէլ ապեր, խեղճ է, մի՛ արա, բաց թող, չես լսում, ես եմ, Մանիշակը, Մանիշակը։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (Մանիշակ աղուցից սթափւում է, բաց է թողնում Ոսկանին)։ *Հապա, դու ես։ Լաւ լաւ, չեմ խեղդիլ։* (Ոսկանին)։ *Կորիր,* (լակեան ձայնով)։ *Խեղճ Մանիշակ, խեղճ Մանիշակ, տանջուում են, հայրդ լաւ մարդ չէ։* (Նորից կատաղելով)։ *Էյ, ուստա Ոսկան, մի՛ արա, մի՛ արա, ասում եմ։* (Գրկում է Սօնայի գլուխը)։ *Լաց մի՛ լինիր, սիրուն բալաս, դու նա ես, նա դու ես, ես չեմ թողնիլ, որ քեզ տանջեն։ Ամեն օր կը գամ, ամեն օր* (բաց է թողնում Սօնայի գլուխը, հանդարտ մօտենում է թախտին եւ սազը վերցնում)։

ՈՍԿԱՆ (կամաց կամաց ուժի է եկել,

վերկենալով)։ *Էդը օրհնած, խեղդում ես, մարդավարի խեղդիր, թէ չէ գցել ես տաւարի պէս մորթում ես։* (Ետեւ է փնտրում եւ, գտնելով, ուրախանում է)։ *Լաւ է, որ չես կոտրել։ Նստիր, Դանիէլ աղբեր, մի կտոր հաց ուտենք։ Էյ, խոտովածը բերէք։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Ես քո հացը չեմ ուտիլ։ (գնում է ցանկապատի դռնակով, սազը հանդարտ նւագելով)։

ՏԵՍԻԼ XI

ՆՈՑՆՔ ԱՒԱՆՑ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼԻ

Մի առ ժամանակ լռութիւն։

ՇՈՒՇԱՆ (մազերը կարգի է բերել)։

ՍՕՆԱ (աչքերը սրբել է. կարեկցութեամբ եւ երկիւղով նայում է մերթ մօրն ու մերթ հօրը)։

ՈՍԿԱՆ (ջիբը բարձրացնում է ու նայում)։ *Դեռ կայ խորովածի համար։* (Բաժակը լեցնում է)։

ՇՈՒՇԱՆ (յուսահատ)։ *Նրան ոչինչ չի օգնիլ, ոչինչ։*

ՈՍԿԱՆ. Գնաց գիժը։ Լաւ ազատուեցի։

ՇՈՒՇԱՆ. Օ՜, նա քո գլխի դատաւորը պիտի լինի, կտեսնես։ Նրան Աստուած Իւքն է ուղարկել Սօնայիս համար։ (Գնում է տնակի դռնեերով)։

ՈՍԿԱՆ (Շուշանի յետեւից)։ *Խորովածը բեր։*

(Խմում է: Սօնայիին): *Նա գիժ է, աղջիկ, վախեցիր նրանից։*

ՍՕՆԱ. Հայրիկ, ես նրանից չեմ վախենում, քեզանից եմ վախենում։ (Թուլացած նստում է նեռուի ետեւի վրայ եւ աչքերը յառում անորոշ տարածութեան մէջ):

ՇՈՒՇԱՆ (գալիս է տնակի դռներով ձեռքին երկու շամփուր խորոված: Սօնայիին): *Եկ, անբաղդ, եկ, մի կտոր հաց դիր բերանդ։*

ՎԱՐԱԳՈՑՐ

ԱՐԱՐԻԱԾ ԵՐԿՐՈՐԴ

Ութ տարի անցած

(Տեսարանը ներկայացնում է աղքատիկ սենեակ։ Խորքում դռներ եւ մի լուսամուտ, որ նայում են դէպի քաղաք։ Ձախ կողմում դռներ, որ տանում են դէպի խոհանոց։ Աջ կողմում մի թախտ հասարակ կապերտով ծածկած, վրէն անկողիններ մի մեանց վրայ դարսած։ Ձախ պատի առջեւ մի մեծ սնդուկ։ Նոյն պատի մէջ էթեայ կտորով վարագուրած մի խորշ, որ ծառայում է իբրեւ պահարան։

Ճատակի վրայ թաղիքներ, խսիրներ։ Պատերը պարզ մանիշակագոյն են առանց պաստառի։ Մի քանի մինդարներ պատերի տակ։ Աջ պատի վրայ մի բաւական մեծ եւ շատ հասարակ հայելի սեւ շրջանակով։

ՏԵՍԻԼ I

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՍՕՆԱ

ՇՈՒՇԱՆ (ութ տարւայ մէջ բաւական ծերացել է ու ցիւառել: Հագնւած է դարձեալ աղքատիկ: Նստած է թախտի ծայրում եւ Սօնայի արխալուղի կոճակներն է կարում: Մի փոքր լռութիւնից յետոյ): *Այսօր տասնեւօթը տարիդ լրացաւ։*

ՍՕՆԱ (թախտի վրայ ծալապատիկ նստած՝ գուլպա է հիւսում։ Ութ տարւայ մէջ դարձել է բարձրահասակ, գեղեցիկ աղջիկ։ Մազերի գոյնը մի ինչ մուգացել է։ Դէմքն աւելի գունատ է, նայուածքը սառը, անշարժ։ Հագած է հնամաշ արխալուղ, լայն ոտնաթաթ, նուխի առանց ոսկիների։ Ոտներին չուստեր)։ *Տատնուեօթ տարի։*

ՇՈՒՇԱՆ (հառաչելով). *Եթէ Աստուած մեզանից երես չի դարձնել, բաղդ կը բացւի։*

ՍՕՆԱ (աչքերը դէպի վեր բարձրացնելով)։ *Փառք նրա գօրութեանը։*

ՇՈՒՇԱՆ (դառնութեամբ)։ *Փառք, փառք, բայց նա շատ էլ ողորմած չէ մեզ համար։*

ՍՕՆԱ. *Նա ամենքի համար ողորմած է։ Մայր, այս գիշեր աղօթք անելիս էլի տեսայ Յիսուս Քրիստոսի կերպարանքը։*

ՇՈՒՇԱՆ. *Դու ամեն գիշեր տեսնում ես նրան։*

ՍՕՆԱ (էքստազով)։ *Ամեն գիշեր, ամեն գիշեր։ Մեռնեմ նրա սուրբ գօրութեանը։ Նա աստւմէր «մեղաւորներ էք, մեղաւորներ, աղօթք արէք, աղօթք արէք, գիշեր-ցերեկ, անդադար»։* (Մի կողմ դնելով գուլպան չոռւմ է ու ձեռները դէպի վեր բարձրացնում)։ *Պատժիր ինձ, Տէր, պատժիր, եթէ ես մեղք եմ գործել։* (Երեսին խաչակնքում է)։

ՇՈՒՇԱՆ (մէկուսի)։ *Քիչ ես պատժւած,*

անբաղդ երեխայ։ (Բարձր)։ *Վեր կաց, գաւակս, վեր կաց, հերիք է ինչքան բռնեցիր Աստծու փէշերը։*

ՍՕՆԱ (վերկենալով), *Միշտ պէտք է համբուրել Արդարադատ Աստծու փէշերը։*

ՇՈՒՇԱՆ (դառնութեամբ)։ *Օհ, եթէ նա արդարադատ լինէր, մեզ այս օրին չէր հասցնիլ։*

ՍՕՆԱ. Մայր, մեղք մի գործիր... (նստում է աշգործ)։

Լռութիւն։

ՇՈՒՇԱՆ. Այս վերջին կոճակն էլ կարեմ, վերջացաւ։ Այսօր լեթ կը հագնես։

ՍՕՆԱ (մտազբաղ)։ *Մամա։*

ՇՈՒՇԱՆ. Ի՞նչ կայ, որդի, ասա։

ՍՕՆԱ. Քանի՛ տարեկան էի, երբ առաջին անգամ ուշքս գնաց։

ՇՈՒՇԱՆ. Թողնենք, աղջիկս, այդ ինչ խօսելու բան է։

ՍՕՆԱ. Մամա, ես ուրիշ խօսելու բան չունիմ։ Ասա, քանի՛ տարեկան էի, երբ Աստւած ինձ պատժեց։

ՇՈՒՇԱՆ (ակամայ տխուր ձանձրոյթով)։ *Վեց։*

ՍՕՆԱ. Վեց, տասն ու եօթ։ Վեցը դուրս գանք, ինչ կը մնայ։

ՇՈՒՇԱՆ կաց, ասեմ։ (Մտածելով ու հաշւելով)։ *Տասն ու մէկ։*

ՍՕՆԱ. (մռայլ։) Տասն ու մէկ տարի է ես ցաւագար եմ։

ՇՈՒՇԱՆ (մռայլ։) Այո, տասն ու մէկ տարի։ (Լռութիւն)։

ՍՕՆԱ. Մամա, իմ ընկերները մեծացել են։

ՇՈՒՇԱՆ (աչխատում է ծիծաղել)։ Երեխայ, ի հարկէ, մեծացել են։ Ուէթ տարի է նրանց չես տեսել։

ՍՕՆԱ. Մանանն էլի հասակիկ է։

ՇՈՒՇԱՆ Հասակիկ է։

ՍՕՆԱ. Սիրուն է։ (Վեր է կենում ու նայում է իրան հայելու մէջ)։

ՇՈՒՇԱՆ Սև սև աղջիկ է էլի։

ՍՕՆԱ. Զաւիկն էլի կաղում է։

ՇՈՒՇԱՆ (ծիծաղում է)։ Դէ, ի հարկէ, կաղում է։

ՍՕՆԱ. (հայելուց հեռանում է)։ Երանի տեսնէի նրանց։

ՇՈՒՇԱՆ Կը տեսնես, բալաս, կը տեսնես, համբերիր։

ՍՕՆԱ. Համբերիր, համբերիր, միշտ համբերիր։ Ինձ համար ուրիշ բան չի մնում բացի համբերելուց։ (Մօտենում է լուսամուտին եւ նայում դէպի դուրս)։ Ի՜նչ գեղեցիկ օր է, ինչ պայծառ է երկինքը։ Արար աշխարհը ուրախ, զուարթ։ Բայց այն ի՞նչ է հեռուում։ Մի կտոր սև ամպ։ Նա կամաց կամաց բարձրանում է, հորիզոնը ծածկում։ Ա՜հ, սարերից զով փչեց, տեսէք, տեսէք, արևի շողերը թռչկոտում են դաշտերի վրայ։ Կարծես, ճերմակ աղաւնիներ լինեն կատուրների վրայ։ Լոյս ու խաւար կռուելու են շուտով։ Ա՜հ, տրաքեց սիրտս, տրաքեց։ (Գլուխը թեռում է լուսամուտի շրջանակին)։

ՇՈՒՇԱՆ (մեկուսի, տանջանքով)։ Անբաղդ երեխայ, որքա՜ն է տանջւում։ (Արխալուղը վերջացրել է, գցում է թախտի վրայ ու ոտի ելնում։ Նայում է Սօնային խորին վշտով։ Լռութիւն)։ Ինչի՞ մասին ես մտածում, որդի։ (Պատասխան չի ստանում, ինչ լռութիւնից յետոյ)։ Աա՜, ինչի՞ մասին ես մտածում։

ՍՕՆԱ. (գլուխը բարձրացնում է)։ Մամա, դու ինձ չես սիրում։

ՇՈՒՇԱՆ Էլի՛ ասացիր։ Այդ ինչ կասկած է, որ ընկել է սիրտդ։

ՍՕՆԱ. Այո, մայր, չես սիրում։ Հայրիկն էլ չի սիրում։ (Ձեռը երկինք բարձրացնելով)։ Իսկ Նա... Նա վաղուց է ատում ինձ։ Ձը գիտեղ ինչու համար եմ ապրում, ո՛ւմ համար։

ՇՈՒՇԱՆ Հանգստացիր, որդի, ուշքդ վրէդ բեր։

ՍՕՆԱ. (գգուած)։ Հանգստացիր, հանգըստացիր, հեշտ է ասել։ Կրակն ընկել է այստեղ։ (Ցոյց է տալիս կուրծքը)։ Այրում է, այրում է

գիշեր-ցերեկ։ Ահ, երանի մոխիր դառնայի ու վերջանայի։

ՇՈՒՇԱՆ. Թող մոխիր դառնան չարերն ու չարագործները։ Դու ի՞նչ մեղք ես գործել։ Օրը մինչև կէս գիշեր Աստծու փէշերը բռնած, աղօթում ես։ Հերիք չէ՞, որ չի օգնում քեզ, ինչո՞ւ պիտի մոխիր դարձնի։

ՍՕՆԱ. Մամա, դու որանչում ես Աստծու դէմ։ Զգոյշ, նա մեզ աւելի կը տանջի։

ՇՈՒՇԱՆ. Թող տանջի, բայց ինձ, ոչ թէ քեզ։ Ի՞նչ թագցնեմ, որդի, այն օրից, որ դու անբաղդացել ես, հաւատս թուլացել է։ Ես սկսել եմ մտածել, որ Աստուած իսկի գոյութիւն էլ չունէ։

ՍՕՆԱ (խորից կըսամբաւիով)։ Մամա, կայ Աստուած, կայ։

ՇՈՒՇԱՆ. Ո՞ւր է որ կայ, ինչո՞ւ չի լսում նա մեզ, ինչո՞ւ։

ՍՕՆԱ (աւելի գրգռուած)։ Լռիր, մամա, լռիր։

Սարսափելի կայծակ ու որոտ։

ՍՕՆԱ (սարսափով)։ Այ, տեսա՞ր, տեսա՞ր։ Նա բարկացաւ։ Նա կատաղեց։ (Զոհում է)։ Տէր, մեղայ Քեզ, Տէր, մեղայ Քեզ։ Տէր, մի պատժիր մօրս, ինձ պատժիր, որովհետև ես եմ մեղաւոր։ Նա իմ պատճառով անարգեց Քեզ...

ՇՈՒՇԱՆ. Ահ, ես խելքս կորցրել եմ, ոչ

ասածս եմ իմանում, ոչ արածս։ Լաւ, վեր կաց, էլ չեմ ասիլ։

Նորից կայծակ ու որոտ։

ՍՕՆԱ. Նա աւելի կատաղեց։ (Ոտի ելնելով)։ Որ այնպէս է, թող կատաղի ինձ վրայ։ (Արագ քայլերով մօտենում է լուսամուտին, բայց է անում, դէպի վեր նայելով)։ Տէր, ներիր մօրս։ Տէր, իմ գլխին թափիր կրակդ։

ՇՈՒՇԱՆ. Հեռացիր այդ տեղից, կայծակը կարող է քեզ խփել։ (Մօտենում է Սօնային ու թեւից բռնում։

ՍՕՆԱ. Թող խփէ, իմ ուզածն էլ այդ է։

Նորից որոտ ու կայծակ, աւելի զօրեղ։ Ցետոյ շարունակում են աւելի թոյլ, բայց անընդհատ։

ՇՈՒՇԱՆ. Այ, տեսա՞ր, նա ընկաւ մեր հարևան կտուրի վրայ։ Թթի ծառը գլորեց գետին։ Հեռու, հեռու, ասում եմ։ (Ուզում է Սօնային հեռացնել լուսամուտից)։

ՍՕՆԱ. Թող ինձ, թող ինձ, ես ուզում եմ մեռնել։

ՇՈՒՇԱՆ (բաց թողնելով Սօնային)։ Նա խելագարւում է, ի՞նչ անեմ, ի՞նչ անեմ։

ՍՕՆԱ. Դէ եկ, երկնային պատիժ, եկ, ինչո՞ւ ես ուշանում, բաւական է որքան տանջեցիր ինձ։ Եկ, իմ արժանի պատիժ, եկ, կործանիր մեղաւորիս։ Ազատիր ինձ իմ ցաւերից, խղճա

ինձ, խփիր, խփիր, խփիր գլխիս, աղաչում եմ, պաղատում եմ։ Ահ, չեմ ուզում. չեմ ուզում։ Դէ, տանջիր, տանջիր. որքան կարող ես։ (Թուլացած ընկնում է յատակի վրայ եւ գլուխը բրունում է ձեռներով)։

ՏԵՍԻԼ II

ՆՈՑՆՔ եւ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (հագնւած է այնպէս, ինչպէս առաջին Արարւածում, միայն ոտներին չուստեր: Գլխին գցած է մի դատարկ տոպրակ աննշմարելից պատսպարելու համար: Մազի փոխարէն գրծին սեղմել է մի հաստ գաւազան)։

Պապրում էր սև օձի պէս սուր թուրը,
Սլանում էր բազէի պէս քեօհլան ձին,
Քամուն տւեց բերնից վազող փրփուրը,
Կատաղել էր, կոտորում էր Քեօր Օղլին։

ՇՈՒՇԱՆ. Եկ, Դանիէլ աղբեր, եկ, ինձ ապաւիր։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Երկինքը կատաղել է երկրի դէմ։ Սաթայէլը սարսափում է։ Հրեշտակները կոտորում են չարերին Աստծու հրամանով։ (Վերցնում է գլխից տոպրակը, մի կողմ գցում, ոտները սրբում է դռների մօտ եւ ներս մտնում)։

ՍՕՆԱ. (Թոյլ, գլուխը գրծին թեքած) Ինչո՞ւ ես եկել, անբաղդ, այդ սարսափելի արհաւիրքին։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Ասլան Դանիէլի համար արհաւիրք չը կայ, կայծակ չը կայ, կարկուտ չը կայ։ (Սօնային)։ Վեր կաց ոտքի, լուր եմ բերել, սիրուն բալաս, մօրդ համար։ Ուրախ լուր է, բաղդաւոր ես, Շուշան բաջի։ (Սօնային)։ *Վեր կաց, վեր կաց, շորերդ հագիր, նոր նոր շորեր, սիրուն աղջիկ։* (Բռնում է Սօնայի ձեռից ու բարձրացնում է ներս)։

Կայծակ եւ որոտ կամաց կամաց դադարում են։

ՍՕՆԱ. (հպատակելով Գիժ-Դանիէլին, լուռ վեր է կենում)։

ՇՈՒՇԱՆ. Ի՞նչ լուր ես բերել այս անբաղդ օրին, Դանիէլ աղբեր։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. (Մեղմիկ Սօնային)։ *Դու գնա, քիչ յետոյ կասի մայրդ։ Գնա, գնա, գնա, այ, այնտեղ։* (Բռնում է Սօնայի թեւից եւ ուղղում ներս դէպի ձախ կողմի դռները)։

ՏԵՍԻԼ III

ՇՈՒՇԱՆ եւ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (խորհրդաւոր)։ *Պէտք է գայլին, Շուշան բաջի, հեղեղը չը թողեց։ Հէնց որ անձրևը կտրւի, կը գան։*

ՇՈՒՇԱՆ. Ձեմ հաւատում իմ բաղդին։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (վշտացած)։ *Ասլան Դանիէլը*

սուտ չի խօսում, մեղք մի արա։ Աչքովս տեսայ, ականջովս լսեցի, գալու են։ Համ կը տեսնեն—կը հաւանեն, համ էլ նշան կը տան—կը նշանեն։ Էյ, Մանիշակ, ուրախացիր, Մուրադը քեզ սիրել է ուխտի գնալիս։ Գիշերները նա քուն չունէ, ցերեկները դադար չունէ, ես լաւ գիտեմ։ Էէյ, Ասլան Դանիէլը շատ բան գիտէ։ Դէ շուտ արա, բաղդաւոր մայր, պատրաստուիլն տես։

ՇՈՒՇԱՆ. (ուրախութիւնից շփոթելով)։ *Ա՛հ, ուրեմն, ճշմարիտ է։ Ովքեր են գալու, քանի՞ հոգի։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. *(գաւազանը կռան տակ բռնելով, մատներով հաշուում է)։ Տես, դա մեռած եղբօրս կնիկը—չորաթան Զառնիշանը—մէկ, տես, դա նրա մեծ որդին չոփուռ Կարապետը—երկու, տես, դա էլ նրա կնիկը, չար Զաւահիրը—երեք։ Մինդարներ ունի՞ս։*

ՇՈՒՇԱՆ. *Մինդարները շատ ունիմ, Դանիէլ աղբեր, բայց ինչո՞վ պատուեմ—այդ ասա։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ։ *Մի բաժակ չայ ամեն մէկին, քիչ մուրաբա, մի բաժակ էլ փունջ օղիով, բաւական է։ Իմացա՞ր։*

ՇՈՒՇԱՆ։ *Շաքար չունիմ, չայ ունիմ, օղի չունիմ։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. *Փող էլ չունի՞ս։*

ՇՈՒՇԱՆ. *Մի քիչ ունիմ, գնամ բազար։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. *Դէ, շուտ գնա։ Անձրևը դադարեց, հրէս կըզան։ Ես գնամ, տեսնեմ. հէնց որ անից դուրս կը գան, կըվազեմ ուքեզ կասեմ։ (Տօնը փոխելով, մեկուսի)։ Էյ, հարիֆներ, ճամբա ուէք, ծափ ուէք, պար եկէք, Մանիշակի բաղդն է գալիս։ (Մօտենում է Շուշանին ու ծոցից դուրս բերելով մի ուի, ցոյց է տալիս)։ Տեսնո՞ւմ ես։*

ՇՈՒՇԱՆ. *Այդ ի՞նչ է։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. *Յետոյ կիմանաս։ (Ցոյց տալով դէպի խորը)։ Այ, այնտեղից կըլսես։ Մանիշակս շատ էր սիրում։ Մի վախենար, ես նրբանց աչքին չեմ երևալ։ Զորաթանն ինձ չի սիրում։ Էյ, Քեօռ օղլին եկաւ, մէյդան բաց արէք։ (Տոպրակը վերցնում է ու դուրս վազում խորի դռներով)։*

Աղձրեւը դադարում է։

ՏԵՍԻԼ IV

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՍՕՆԱ

ՇՈՒՇԱՆ *(Գիժ-Դանիէլի գնալուց յետոյ արագ քայլերով մօտենում է ձախ կողմի դռներին)։ Սօնա։*

ՍՕՆԱ։ *Համմէ։* (Գալիս է ձախ կողմի դռներով)։

ՇՈՒՇԱՆ (ցտապ ցտապ)։ Շուտ արա, հին մինդարները վերցրու, նորերը գցիր, յետոյ եւրեսդ լւացիր վարագի սապոնով, նոր աշխատելդը գնա։ Շուտ շուտ։ (Ելնում վերցնում է թախտի վրայից)։

ՍՕՆԱ. Ինչ է պատահել։

ՇՈՒՇԱՆ. Լսիր, որդի, մի՞տդ է այն օրը, երբ մենք գնում էինք սուրբ Կարապետի մասունքին ուխտի։

ՍՕՆԱ (գուժած)։ Ինչ, սուրբ Կարապետ, ուխտ։ Չեմ յիշում։

ՇՈՒՇԱՆ. Դու ամեն բան մոռանում ես։ Լսիր։ Այդ օրը ճանապարհին մենք պատահեցինք մի խումբ ուխտաւորների։ Նրանց մէջ կար մի ձիաւոր։ Նա մի քանի անգամ մօտեցաւ մեզ ու խօսեց։ Այդ ձիաւորը Դանիէլի եղբօր որդին էր։

ՍՕՆԱ. Լաւ, յետոյ։

ՇՈՒՇԱՆ. Նա քեզ հաւանել է։ Հիմայ նրա կողմից խնամախօսներ են գալու։ Մի ամիս է Դանիէլը գնում գալիս էր, այս մասին խօսում— չէի հաւատում։ Երևի, Աստած ուզում է մեզ խնայել։

ՍՕՆԱ. Մամա, ինձ պիտի նշանեն։

ՇՈՒՇԱՆ. Ի հարկէ, քեզ ոչ թէ ինձ։

ՍՕՆԱ. Մամա, նրանք գիտեն, որ ես ցաւագար եմ։

ՇՈՒՇԱՆ. Ինչի՞ է հարկաւոր, որ իմանան։

ՍՕՆԱ. Չէ, մամա, այդ անկարելի է, ես այդ չեմ կարող անել։

ՇՈՒՇԱՆ. Գժւե՞լ ես, աղջի։ Հազիւ բաղդդ բացել է ու դու նրան հակառակո՞ւմ ես։

ՍՕՆԱ. Մամա, մեղք է։ Եթէ նրանք իմանան, որ ես ընկնաւոր եմ, ոտ չեն դնի մեր տունը։

ՇՈՒՇԱՆ. Չեն իմանալ։ Դանիէլը Մանիշակի անունով է երդւել, որ չի ասիլ։

ՍՕՆԱ. Բայց ես կասեմ, մամա, ես։

ՇՈՒՇԱՆ (Զայրանալով)։ Ձայնդ կտրիր, մի թողնիր ինձ կրակի մէջ։

ՍՕՆԱ. Մամա, եթէ իմանամ, որ դու իմ պսակւելով կրակից կազատւիս, կլուռեմ, բայց չէ՞ որ պսակւելուցս յետոյ նրանք կիմանան, որ ես ընկնաւոր եմ։

ՇՈՒՇԱՆ. Պսակւելուցդ յետոյ էլ դու չես ուշաթափւիլ։

ՍՕՆԱ. Չեմ ուշաթափւիլ։

ՇՈՒՇԱՆ. Ի հարկէ, հէնց այդ է պատճառը, որ ուզում եմ շուտով քեզ մարդու տալ։

ՍՕՆԱ. Դու ասում ես, պսակւելուցս յետոյ չեմ ուշաթափւիլ։

ՇՈՒՇԱՆ. Հա, ասում եմ։

ՍՕՆԱ. Մամա, պարզ խօսիր, ես ոչինչ չեմ հասկանում։

ՇՈՒՇԱՆ. Որդի, բաները կան, որոնց մասին չի կարելի պարզ խօսել։ (Մօտենում է պատի խորհին եւ սկսում է ինչ-որ փնտրել)։

ՍՕՆԱ. (անհամբեր)։ *Բայց ես ուզում եմ իմանալ, մամա, ամեն բան ուզում եմ իմանալ։*

ՇՈՒՇԱՆ Օհ, հոգիս բերանս բերեցիր։ (Խորհրդաւոր, ձայնը ցածացնելով)։ *Դէ լսիր, քո ցաւըն այնպիսի ցաւ է, որ միայն մարդու գնալով կարող ես նրանից ազատուել։ Հիմա իմացա՛ր։* (Նորից փնտրում է խորհի մէջ)։ *Ո՞րտեղ եմ դրել իմ հոգեպարուսոյը։ Ահա, գտայ։*

(Վերցնում է խորհից մի փոխրիկ կարմիր կապոց, բաց է անում, մի բանի դրամներ վերցնում ու նորից կապոցն իւր տեղն է դնում)։

ՍՕՆԱ. (ոտքի մատծել է)։ *Մամա, ճշմարի՞տ ես ասում, թէ՞ ինձ խաբում ես։*

ՇՈՒՇԱՆ. Երբեւէ եմ արեւովդ, որ սուտ չեմ ասում։ Փորձառու պառաւներն են հաւատացնում։ Այ, չոլախ անթառամի ապխիկը քեզ պէս չէ՛ր իւր ծնողների տանը։ Հէնց որ պատկեց, ցաւը կարեց։ Կառողջանաս, որդի, կարողջանաս։

ՍՕՆԱ. (Աչքերը դէպի վեր բարձրացնելով)։ *Տէր, մեծ է քո գօրութիւնը։ Դու ամեն բան կարող ես ածել։ Լաւ, մամա, լաւ։* (Ուրախ ուրախ վերցնում է արխալուղը եւ գնում ձախ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ V

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՈՍԿԱՆ

ՇՈՒՇԱՆ (հայելուն ուղղում է դէպի խորհի դռները։ Այնտեղ հանդիպում է Ոսկանին)։ *Եկ, ա մարդ, եկ։ Լաւ է, որ հարբած չես։*

ՈՍԿԱՆ (ութ տարւայ մէջ ծերացել է)։ *Սատկած լինէի աւելի լաւ կըլինէը ինձ համար, քան արթուն։ Չ՛ըմ, ի՞նչ է պատահել, որ ուրախ ես։*

ՇՈՒՇԱՆ. Կասեմ, համբերիր, լաւ բան է պատահել։

ՈՍԿԱՆ (դառը ծաղրով)։ *Լաւ բան, լաւ բան։ Ի՞նչ լաւ բան կարող է լինել քանի որ այստեղս* (ցոյց է տալիս կոկորդը) *չորացել է։*

ՇՈՒՇԱՆ. Շուտով կըթրջես, այսօր, կարող ես։ Եթէ հիւրեր կան, մարդավարի ընդունիր։ (Շտապով գնում է խորհի դռներով)։

ՏԵՍԻԼ VI

ՈՍԿԱՆ մենակ, յետոյ ՍՕՆԱ

ՈՍԿԱՆ (մենակ)։ *Ի՞նչ, հիւրե՞ր։* (Սկսում է դէս ու դէն նայելով ինչ որ փնտրել։ Թախտի

տակից դուրս է բերում մի զոյգ չմուշկներ, նայում է արհամարհանքով, յետ շպրտում։ Ուզում է սնդուկը բանալ, փակ է, բարկանում է)։ *Ձը կայ, բան չկայ։*

ՍՕՆԱ (գալիս է ձախ կողմի դռնեռով նոր արխալուղ նագած, կոճակները կապելով)։ *Բարով, հայրիկ։* (Վերցնում է պատերի տակից հին միջոցները, դնում է թախտի վրայ, փոխարէնը նորերը գցում, վերցնելով թախտի վրայից)։

ՈՍԿԱՆ Բարով, բարով։ Այդ ինչ է, նոր արխալուղ ես հագել։

ՍՕՆԱ Այո, հայրիկ։

ՈՍԿԱՆ Լաւ է, լաւ է, սազում է։ Պէտք է շնորհաւորել, Սօնա, չէ։

ՍՕՆԱ Շնորհակալ եմ, հայրիկ։

ՈՍԿԱՆ Բա, այդպէս չոր ու ցամաք։

ՍՕՆԱ Ի՞նչ ես ուզում, հայրիկ։

ՈՍԿԱՆ (մատը զարկում է իւր կոկորդին)։ *Մ՛յ։*

ՍՕՆԱ (ծիծաղելով)։ *Զունեմ, հայրիկ, չունեմ դրանից։*

ՈՍԿԱՆ Գիտեմ որ չունես, բայց փող կունենաս։

ՍՕՆԱ, Հայրիկ, փող էլ չունեմ։

ՈՍԿԱՆ. Դու սուտ ես ասում. Սօնա չան, գիտես, սուտ ասելը լաւ բան չէ։

ՍՕՆԱ. Գիտեմ, հայրիկ, բայց...

ՈՍԿԱՆ. Բայց մայց չեմ իմանում։ Ծոյց տուր մօրդ փողերի տեղը։

ՍՕՆԱ. Հայրիկ, ոչ ես, ոչ մայրս փող չունինք։

ՈՍԿԱՆ. Դէ, շուտ արա, ասա, որտեղ է դրել։

ՍՕՆԱ. Հայրիկ, քիչ խմիր, խնայիր մեզ։

ՈՍԿԱՆ. Խնայիր։ Ձեզ։ Դուք ինձ խնայո՞ւմ եք մայր ու աղջիկ։ Երեք օր է չեմ խմել, հասկանո՞ւմ ես, երեք օր ու գիշեր։ Դէ, շուտ, եթէ ապրօր էլ չը խմեմ, կարող եմ խելագարուել։

ՍՕՆԱ. (Աղեռսաձոով)։ *Հայրիկ։*

ՈՍԿԱՆ. Հայրիկ, հայրիկ, ես ինչ հայրիկ եմ քեզ համար. շունը, կատուն, մուկն աւելի ինձանից է քո աչքում, քան ես։ Դու ինձ չես սիրում։

ՍՕՆԱ. Մեղք մի գործիր, հայրիկ, ես սիրում եմ քեզ, արևդ վկայ։

ՈՍԿԱՆ. Սուտ, ես արև չունեմ։ Իմ արևը վաղուց է խաւարել։ Դէհ, ասա փողերի տեղը, թէ չէ՝ կտեսնո՞ւմ ես։ (Ցոյց է տալիս բռունցքը)։

ՍՕՆԱ (վախենալով)։ *Ամէն, մի արա, խնայիր։* (Գոհում է)։

ՈՍԿԱՆ. կանեմ—եթէ թարսեաս։ Դէ շուտ, վեր կաց, շուտ, ցոյց տուր, թէ չէ...

ՍՕՆԱ (արհաճալով)։ *Որ այդպէս է, խփիր,*

հայրիկ, խփիր։ Խփիր, բայց այնպէս, որ էլ աեղից չը վերկենամ։

ՈՍԿԱՆ. Անէծք քեզ չար սատանայ, աչքերս մթնում են։ (Իւիւն իւր հետ կռւում է)։ *Վեր կաց։ Աստուած ինքն է խփել քեզ։* (Հեռանում է Սօնայից)։

ՍՕՆԱ (վեր է կենում դանդաղօրէն եւ մի անկիւն քաւում)։

ՈՍԿԱՆ (նստում է թախտի վրայ)։ *Այդպէս, այդպէս, ուրեմն, իմ հարատաս ազգիկն էլ չի հասկանում իմ դրութիւնը։ Ա՛ա, ոչ ոք, ոչ ոք չի հասկանում, թէ ինչ է կատարւում այստեղ* (զարկում է իւր կրծքին), *երբ հարբում եմ։ Ի՞նչ անեմ, Տէր Աստուած, մի բան էլ չը կայ, որ գրաւ դնեմ կամ ծախեմ։* (Խեղճանում է, ոտքի ելնելով մօտենում է Սօնային)։ *Սօնա, Սօնա, խղճա հօրդ, խղճա։ Այս վերջին անգամն է, հաւատա, վերջին անգամը։*

ՍՕՆԱ (խորին տանջանքով)։ *Հայր, հայր։*

ՈՍԿԱՆ. Չէ, մի՛ ասա, դու ինձ չես խնայում։ Էհ, ինչ արած, ուրիշ ճար չունիմ։ (Բարձրանում է սնդուկի վրայ, ձեռով շարժում է պատին խփած բեւեռը)։ *Մնում է այս։ Պինդ է, կըպահի ինձ։* (Դուրս է բերում իւր գրպանից մի մեծ գոյնզգոյն բաճկինակ)։ *Այս էլ պինդ է,* (ուզում է բաճկինակը կապել բեւեռին իբրեւ կախուելու համար)։

ՍՕՆԱ. Հայրիկ, այդ ինչ ես անում։

ՈՍԿԱՆ. Ոչինչ, որդի, ոչինչ, կըտեսնես։

ՍՕՆԱ (սարսափելով)։ *Հայրիկ, թող, թո՛ղ այդ։*

ՈՍԿԱՆ (շարունակելով իւր գործը)։ *Թո՛ղ, թող; էլ թողնելու բան մնաց։ Հերիք է ինչքան ապրեցի ու տանջուեցի։*

ՍՕՆԱ. (մօտենում է ու քաւում Ոսկանի չուխայի փեշերից)։ *Թող, ասում եմ, ցած եկ։*

ՈՍԿԱՆ. Ձեմ ուզում ապրել, չեմ ուզում։

ՍՕՆԱ. Լաւ, հայրիկ կասեմ փողերի տեղը, կասեմ։

ՈՍԿԱՆ (կեղծ յամառելով)։ *Որ քաշուվդ մին ոսկին տաս, էլի չեմ ուզիլ, բաւական է ինչքան տանջուեցիր։* (թոյլ ընդդիմադրութիւն է ցոյց տալիս)։

ՍՕՆԱ. Որ այդպէս է, աւելի լաւն է ես կը կախուեմ։ (Հրում է Ոսկանին ցած եւ իւիւն է բարձրանում սնդուկի վրայ)։

ՈՍԿԱՆ. Դէ լաւ, լաւ, չեմ կախիլ։ Ցած եկ։ (Գոռում է)։ *Ցած եկ։* (Իջեցնում է Սօնային)։ *Դէ, ցոյց տուր փողերի տեղը։*

ՍՕՆԱ (դուռ իջնում է ցած սանդխից, բաճկինակը մի կողմ շպրտելով, հեռանում է եւ հայեացքը ձգում խորշի վրայ)։

Դադար։

ՈՍԿԱՆ (հետեւելով Սօնայի հայեացքին)։ *Հաա,*

այնտեղ՝ է։ Ես գիտէի, որ այնտեղ պիտի լինի։ (Մօտենում է խորհին եւ փնտրում)։ *Բայց ո՛ւր է, չեմ տեսնում։*

ՍՕՆԱ. (յուզած, շփոթած, հազիւ արտասանելով բառերը)։ *Այնտեղ է, կարմիր կապոցիս։*

ՈՍԿԱՆ. Կարմիր կապոցի մէջ։ Հասկացայ։ Ահա. (Դնում է կարմիր կապոցը, արագ արագ բաց է անում, զննում է մի քանի առժամբէ եւ պղնձէ դրամներ)։ *Շատ չէ, բայց հերիք է այսօրւայ համար։* (Կապոցը մի կողմ է շպրտում)։ *Շնորհակալ եմ, աղջիկս, դու քո հօրն ազատեցիր շատ նման խեղդւելուց, մի վախենար, դրա տեղը ոսկիներ եմ դնելու, պարտք եմ վերադարձնում, մօրդ չասես.* (Փողերը արխալուղի գրպանը դնելով, բայերն ուղղում է դէպի խորհի դռները)։

ՏԵՍԻԼ VII

ՆՈՑՆՔ ԵՒ ՇՈՒՇԱՆ

ՇՈՒՇԱՆ (գալիս է խորհի դռներով ձեռքին թէյ բոլթի մէջ։ Տեսնելով Սօնային զուսպ, անշարժ եւ Ոսկանին դուրս շտապելիս, նայելով յատակի վրայ ընկած կապոցին, իսկոյն հասկանում է բանի էութիւնը)։ *Դող, դող, ո՛ւր ես փախչում։* (Բռնում է Ոսկանի չուխայի փեշից)։

ՈՍԿԱՆ. Թո՛ղ։ (Ուզում է ազատել)։

ՇՈՒՇԱՆ. Չեմ թողնիլ։ Դա խեղճ աղջկադ ձեռքի աշխատանքն է։ Օրը մինչև կէս գիշերը գուլպաներ է հիւսել, աներում ծախել եմ, կոպէկ կոպէկ ժողովել։ Չեմ թողնիլ, որ տանես, լակես։

ՈՍԿԱՆ. Թող, ասում եմ։ (Զարկում է Շուշանին եւ գետնի վրայ գցում։ Ուզում է փախչել)։

ՏԵՍԻԼ VIII

ՆՈՑՆՔ ԵՒ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (գալիս է խորհի դռներով)։ *Գալիս են, գալիս են։*

ՇՈՒՇԱՆ. Բռնիր նրան, Դանիէլ աղբեր, մի թողնիր։ (Ոտքի է ելնում)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (Բռնում է Ոսկանի օձիքից)։ *Ո՛ւր ես փախչում։*

ՇՈՒՇԱՆ. Նա գողացել է Սօնայի փողերը, խլիր ձեռքից։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Տուր, տուր Մանիշակիս փողերը։

ՈՍԿԱՆ (Աշխատելով ազատել Գիժ-Դանիէլի ձեռքից)։ *Կորիր, գիժ։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Տուր, ասում եմ, թէ չէ՝

վզիդ օձեր կըփաթաթեմ։ (Ուզում է խեղդել)։

ՈՍԿԱՆ (փողերը գրպանից դուրս է բերում ու տալիս է Գիժ-Դանիէլին)։ Դէ լաւ, առ։ Դուք Աստուած չունիք։

ՇՈՒՇԱՆ. Տեսնեմ բոլորն է։ (Փողերն առաջ համրում է, մի մասը տալիս է Գիժ-Դանիէլին)։ *Դրուստ է։ Տար, Դանիէլ ապրեր, սրանով մի չարէք օղի գնիր հիւրերի համար։ Շո՛ւտ։ Սպասիր, շիշ տամ։* (Վերցնում է պատի խորշից մի դադարակ գրաճին եւ տալիս է Գիժ-Դանիէլին)։ *Ահա։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (փողերն ու գրաճինը վերցնելով)։ Աչքիս վրայ։ (Ոսկանին)։ *Էյ, ուստա Ոսկան, խելօք նստիր։ Մարդ է գալու, Մանիշակիս չը լացացնես, պատառ պատառ կանեմ, հում-հում կուտեմ։ Ֆարհադ, Ֆարհադ, քեզ եմ խնդրում, քեզ ապաչում, դու ինձ սևերես չը թողնես։* (Գնում է շտապով խորհի դռներով)։

ՏԵՍԻԼ IX

ՆՈՅՆՔ ԱՌԱՆՑ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼԻ

ՈՍԿԱՆ. Օղի ասացիր։ Հէր օրհնած, ես հօ քացախ չէի առնելու։ (Վազելով դէպի խորհի դռները)։ Էյ, Դանիէլ ապրեր, շուտ բեր։ (Ցեց է գալիս)։

ՇՈՒՇԱՆ (վերցրել է յատակից թէյի կապոցը, մօտենում է Սօնային)։ *Ինչո՞ւ ես տեղն ու տեղդ քարացել։ Անասունը վախեցրե՞լ է քեզ։ Լաւ, ուշքի եկ։*

ՍՕՆԱ (նախընթաց տեսարանի սկզբում, ձեռները վեր բարձրացրած, լուռ աղօթել է։ Ապա ձեռները դրել է կրծքին ու աչքերը յառել աւետրոց տարածութեան մէջ այնպէս, որ, կարծես, ոչինչ չի զգում ու տեսնում։ Քիչ սթափուելով)։ Ա՜մ...

ՇՈՒՇԱՆ. Ուշքի եկ։ Սամավար դրե՞լ ես։

ՍՕՆԱ. Սամավա՞ր, աաա՜, ինչ։

ՇՈՒՇԱՆ. Ո՞րտեղ ես, խեղճ երեխայ։

ՍՕՆԱ. Սամավար, սամավար։ (Ձակատը դրսում է, ուժը ժողովում է։ Յանկարծ ճչում է)։ *Մամա, մամա։* (Փաթաթվում է մօրը)։

ՇՈՒՇԱՆ (սառսափած գրկում է Սօնային)։ *Ի՞նչ պատահեց, աղջիկս։*

ՍՕՆԱ. Վախենում եմ, վախենում եմ նրանից։ (Յոյց է տալիս Ոսկանին)։

ՇՈՒՇԱՆ. Մի՛ վախենար, որդի, հայրդ է, հայրդ։

ՍՕՆԱ. Ոչ ոչ, նա կը խեղդէ իրան, կը խեղդէ, մի՛ թողնիր։

ՇՈՒՇԱՆ. Հանգստացիր, որդի, հանգստացիր։

ՍՕՆԱ. (ուժի գալով)։ *Լաւ լաւ, թող ինձ,

թող ինձ։ Սամավար պիտի դնեմ։ (Գնում է ձախ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ X

ՇՈՒՇԱՆ ԵՒ ՈՍԿԱՆ

ՇՈՒՇԱՆ (Թէյը դրել է պատի խորշի մէջ)։ *Տեսնո՞ւմ ես, տեսնո՞ւմ ես, անասուածծ։ Այնքան արիը, որ քեզանից վախենում է ինչպէս կատաղի գազանից։ Գոնէ այսօրւայ օրը չը սևացնէիր։ Չէ որ գալիս են աղջկադ նշանելու։*

ՈՍԿԱՆ. Ի՞նչ, նշանելո՞ւ, ո՛վ, ո՛ւմ համար։

ՇՈՒՇԱՆ. Դանիէլի եղբօր որդու համար։

ՈՍԿԱՆ. Մանասանց Մուրադի՞։ Ճշմարիտն ես ասում։

ՇՈՒՇԱՆ. Կը տեսնես էլի։

ՈՍԿԱՆ. Հէը օրհնած, ասա, որ ես էլ ուրախանամ էւ։ Լա՛ւ, լա՛ւ։ Բայց չէ, դեռ թող տեսնենք. հարկաւոր է տալ, թէ չէ։ (Մտածում է)։ *Ոչինչ, ոչինչ, Մուրադը վատ տղայ չէ։* (Ներս պարս)։ *Ես համաձայն եմ։*

ՇՈՒՇԱՆ (ձեռով մի արհամարհական շարժումն է անում)։

ՈՍԿԱՆ. Հրամանքս, համաձայն եմ և սաւիս եմ իմ հայրական օրհնութիւնը։ Մուրադը լաւ տղայ է, վաճառական է, փող ունէ։ Փող ունե-

նալը լաւ բան է։ (Տօնը փոխում է, ներս)։ *Բայց թող շատ էլ չը պարծենայ հա, թէ չէ՝ չեմ տալ նրան իմ աղջկան։ Թքել եմ փողի վրայ։ Դու պատուից խօսիր, ով չի ճանաչում նալբանդ Ոսկանին։*

ՇՈՒՇԱՆ. Լաւ, լաւ, քիչ փքուիր քո սև ձեռներով։ Կարծեմ, գալիս են, առաջ գնա, համեցէք արա։

ՏԵՍԻԼ XII

ՆՈՅՆԻ, ՋԱՌՆԻՇԱՆ, ԿԱՐԱՊԵՏ ԵՒ ՋԱՎԱՀԻՐ

ՈՍԿԱՆ (մօտենում է խորհի դռներին)։ *Ներքանք են։* (Դէպի դուրս)։ *Համեցէք, խնամիներ, համեցէք։*

ՇՈՒՇԱՆ (Մեկուսի)։ *Ըը, հողս գլուխդ, դեռ ներս չեն մտել, արդէն խնամիներ են։*

ՋԱՌՆԻՇԱՆ (գալիս է խորհի դռներով աոաջից չարշաի, գլխին շալ։ *55* տարեկան շատ ցիհար, խորոմներով ծածկած դէմոով, պապուն աչքերով կին է։ Ձմուռները բողում է դռների մօտ)։ *Բարով։* (Ոչ ոքի ձեռ չի տալիս)։

ՇՈՒՇԱՆ. Բարով հազար բարի եկար։

ՈՍԿԱՆ (դէպի դուրս)։ *Համեցէք, համեցէք, խնամիներ։*

ԿԱՐԱՊԵՏ (ներս է մտնում խորհի դռներով։

Ամուր կազմ ածով, դուրս ցցած այտերով, գեհ-
ին պէմով տղամարդ է, չեչոս երեսով, որ սափ-
րած է։ Հագած է երկայն թեւաւոր չուխայ,
գլխին սրածայր գլակ, որ ներս մտնելիս վերց-
նում է։ Զմուշկները թողնում է դռների մոս։
Ներս մտնելիս չուխայի թեւերը ուսերից իջեց-
նում է իբրեւ յարգանք տանտիրոջ)։ *Բարով։* (Ոչ
ոքի ձեռ չի տալի)։

ՇՈՒՇԱՆ. Բարով, հազար բարի։

ՈՍԿԱՆ (դռների մոս)։ *Համեցէք, համեցէք,
խնամի։*

ՋԱՎԱՀԻՐ (գալիս է կառապետից յետոյ գոյ-
ներզգոյն մեծախոհ չարշաւով, որ ներս մտնե-
լիս վերցնում է։ Զար դէմով, չար աչերով, ար-
ծուաքիթ կին է, որի շրթունքների վրայ շարու-
նակ խաղում է մի տեսակ արհամարհանքի եւ
նախանձի ժպիտ։ Հագնուած է իբրեւ ասիացի
կին, բայց ոտներին եւրոպական կօշիկներ, ո-
րոնց արբում է դռների մոս)։ *Բարով։*

ՇՈՒՇԱՆ. Բարով հազար բարի։ (Հիւրերին
հրաւիրում է նստել միջոցարների վրայ)։ *Համե-
ցէք, համեցէք։*

ԱՄԵՆՔԸ (նստում են, բացի Շուշանից։ Ո-
սկանը նոտում է ամենից յետոյ)։

Լռութիւն երկարատեւ։

ԿԱՐԱՊԵՏ (նայել է առաստաղին)։ *Ձեր
կառքը կաթո՞ւմ է։*

ՈՍԿԱՆ. Չի կաթում. պինդ է շինած։

ԿԱՐԱՊԵՏ. Անձրևը անձրև չէր, ջրհեղեղ էր։

ՈՍԿԱՆ. Շատ թունդ էր։

*ԿԱՐԱՊԵՏ. Ի՞նչպէս էր որոտում երկինքը,
ինչպէս։*

ՈՍԿԱՆ. Եղիա Մարգարէի փուրգոններէր։

ՋԱՌՆԻՇԱՆ. Փուրգո՞նը։

*ՈՍԿԱՆ. Հրամանքա, խնամի։ Տարեայ այս
ժամանակները Եղիա Մարգարէն մեկ-մեկ փուր-
գոն է նստում, դուրս է գալիս երկինք, դէս ու
դէն չափ չափ անում։ Հանգուցեալ հայրս էր
ասում։*

ԿԱՐԱՊԵՏ (մեկուսի ծիծաղում է)։

ՇՈՒՇԱՆ (նստելով Ոսկանի մոս)։ *Շատ մի
խօսիր։*

*ԿԱՐԱՊԵՏ. Ուստա Ոսկան, ասենք թէ որո-
տումը եղիա մարգարէի փուրգոնիցն է, կայծա-
կը որտեղից է։*

ՈՍԿԱՆ. կայծակը չախմախի քարից է։

ԿԱՐԱՊԵՏ. Չախմախի քարից։

*ՈՍԿԱՆ. Հրամանքա։ Երբ որ Մովսէս Մար-
գարէն ուզում է չիբուխ քաշել, չախմախ է
խփում, կայծակ է առաջանում։* (Անհամբեր
սպասելով Գիժ-Դանիէլին, նայում է դէպի խոր-
հի դռները)։

ԿԱՐԱՊԵՏ (Հեգնօրէն)։ *Անձրև է ի՞նչ է, ուս-
տա Ոսկան։*

ՈՍԿԱՆ (ձանձրոյթով)։ *Անձրևն էլ չուբ է էլի, թափւում է։* (Առանձին Նուշանին)։ *Այդ չոփուռը զահլէս տանելու է։*

ՇՈՒՇԱՆ (առանձին Ոսկանին)։ *Քիչ խօսիր։* (Վեր է կենում, պահարանի խորից վերցնում է թէյ, շաքար, թէյի ամաններ, տանում է ձախի դռներով եւ իսկոյն յետ է գալիս)։

ԿԱՐԱՊԵՏ (Զաւնիբանին)։ *Ա մեր, դէ ինչ հարկաւոր է երկարացնել, ասա, ինչու համար ենք եկել։*

ԶԱՒՆԻՇԱՆ (Ոսկանին)։ *Աղջիկդ տանն է։*

ՈՍԿԱՆ. Տանն է, խնամի։

ԶԱՎԱՀԻՐ. Դեռ խնամիները չենք։

ՈՍԿԱՆ. Միևնոյնն է։

ԿԱՐԱՊԵՏ. Դէ, ցոյց տուէք, տեսնենք։ Մուրադն ամբողջ քաղաքին է յայտնի։ Մեզ էլ հօ ով չի ճանաչում։ Տեսնենք ձեր ապրանքն ինչ է։

ՈՍԿԱՆ (ոգեւորելով)։ *Մեր ապրանքը խաւսակ ոսկի է։ Դէ ինձ էլ ճանաչում էք։ Ո՛վ չի ճանաչում Պլուզանց Ոսկանին։ Մեր քաղաքում եթէ հինգ մարդ կայ, մէկն էլ ես եմ։ Մադրաւեցի Տէր-Սարգսին հարցրէք, նա կասէ, թէ ես ինչ մարդ եմ։*

ՇՈՒՇԱՆ (մօտենալով ձախ կողմի դռներին)։ *Աղջի Սօնա, թէյ բեր հիւրերի համար։*

ԿԱՐԱՊԵՏ. Պլուզանց Ոսկանին, ի հարկէ, ճանաչում ենք, բայց մեզ նրա աղջիկն է հարկաւոր։

ՈՍԿԱՆ. Այ հիմայ կըտեսնես։ (Նայելով խորի դռներին)։ *Ի՞նչ տեղ ճաց այդ անիծւած Դանիէլը։* (Վեր է կենում, խորի դռներով նայում է դուրս եւ յետ է գալի ու նստում)։

ՏԵՍԻԼ XII

ՆՈՅՆՔ եւ ՍՕՆԱ

ՍՕՆԱ (գալիս է ձախ կողմի դռներով ձեռին մատուցարան, վրէն հինգ բաժակ թէյ, մի կապտագոյն ապակեայ շաքարաման։ Սկսում է թէյ բաժանել, նախ հիւրերին ապա տնացիներին)։

ՀԻՒՐԵՐ (երեքն էլ խորին ուշադրութեամբ դիտում են Սօնային նրա երեւալու վայրկեանից)։

ԶԱՎԱՀԻՐ (Սօնային փորձելու համար)։ *Դուռ էլ նստիր մեզ հետ թէյ խմիր։*

ՍՕՆԱ (գլուխ է տալիս, ձեռները կրծքին դնելով, հեռանում է ու մի կողմ կանգնում)։

ՇՈՒՇԱՆ. Պտիկը մեծերի մօտ չի նստիլ։

ԶԱՎԱՀԻՐ. Աղջի, մայրդ լաւ ասաց։ (Թէյ է խմում մի կում)։

ՍՕՆԱ. Մեծերի ոտը մեր գլուխն է։

ԿԱՐԱՊԵՏ. Աֆարիմ աղջիկ։ (Թէյ է խմում)։

ԶԱՒՆԻՇԱՆ (Զաւանիրին)։ *Ասել պիտէ.*

(Թէյ է խմում)։

ՋԱՎԱՀԻՐ. Չէ, համը չէ։

ՈՍԿԱՆ (Կարապետին)։ Հըը, տեսա՞ր։ (Դէպի խորհի դուռերը նայելով, անհամբերութեան նշան է անում)։

ՋԱՌՆԻՇԱՆ (Սօնային)։ Աղջի, մին տես էլի անձրև գալիս է։

ՍՕՆԱ (աչխոյժ հայեացքով գնում է դէպի խորհի դուռերը եւ, նայելով դէպի դուրս, յետ է գալիս)։ Անձրևը կտրեւ է։

ՀԻՒՐԵՐ (դիտել են Սօնայի հայեացքը)։

ՋԱՌՆԻՇԱՆ (մեկուսի Ջավահիրին)։ *Մանգալը լաւ է։*

ՋԱՎԱՀԻՐ. Զոլախ չէ։ (Մի սուր հայեացք է ձգում Սօնայի վրայ)։

ՋԱՌՆԻՇԱՆ (Սօնային)։ *Մօտեցիր ինձ, աղջի։ Էլի մօտ, էլի, այ այսպէս։ Կռացիր։* (Նայում է Սօնայի մազերին ու շօշափում)։ *Այդ ինչ սիրուն ճուտիկ ունիս։*

ՈՍԿԱՆ. Ինքն է կարել։

ՋԱՌՆԻՇԱՆ. Գնա, որդի, գնա գործիդ։ (Ջավահիրին)։ *Մազերն էլ լաւ են։*

ՋԱՎԱՀԻՐ. Մաստուշկի մազեր են։ (Նայում է Սօնայի երեսին սուր հայեացքով)։

ՍՕՆԱ (հանդիսպելով Ջավահիրի հայեացքին, ցնծուում է ու յետ դառնում)։

ՈՍԿԱՆ (բոլորովին ձարձրացել է)։ *Ինչ էք այդքան մնդզում։ Տեսաք, որ ոչ համը է, ոչ չօլաղ, ոչ էլ քաշալ։ Ես ձեզ աղջիկ եմ տալ, որ...*

ՇՈՒՇԱՆ (Ոսկանի բերանը բռնելով)։ Դեռ չենք տալ։

ՈՍԿԱՆ (ուշադրութիւն չը դարձնելով Շուշանի վրայ)։ *Աղջիկ, որի նմանը չըկայ մեր քաղաքում։ Խելք ասես—ծով, շնորք ասես—էլ աւելի։ Այս ահագին տունը նրա վզին է, տօլմա ու փլաւ է եփում, որ ուտելիս մատներդ հետն ես ուտում։*

ՇՈՒՇԱՆ։ Կարճ կապիր, մարդ։

ՈՍԿԱՆ (ուշադրութիւն չը դարձնելով Շուշանի վրայ, աւելի ոգեւորուած)։ *Էլ չեմ խօսում կարել-հիւսելու մասին։ Ասեղը ձեռքում պապար պապար է անում։ Մի խօսքով մեր պապերի խօսքն է. «Լաւ սունկը արմատից է ճանաչւում»։ Չէ՞ որ մենք էլ այս քաղաքում մի յայտնի օջաղ ենք։* (Դարձեալ մտիկ է անում խորհի դուռերին ու անհամբերութեան նշան է անում)։

ՍՕՆԱ (հօր զովասանքից շփոթուած, վերցնում է դադարկ բաժակները եւ մատուցարանի նետ տանում ձախ կողմի դուռերով)։

ՇՈՒՇԱՆ. Էհ, աղջիկ է էլի, շատ որ գովենք, պարծանք կըլինի։ (Նկատելով լուսամտի առջեւ Գիժ-Թանիէլին, շտապով վեր է կենում,

ստանում է օղու շիշը, տանում է ձախ կողմի դռներով եւ իսկոյն յետ է գալիս)։

ՈՍԿԱՆ (օղու շիշը տեսել է, վեր է կացել, ուզում է գնալ ձախ կողմի դռներով)։

ՇՈՒՇԱՆ (վերադառնալով. խիստ եղանակով Ոսկանին)։ *Տեղդ նստիր, ամօթ է։*

ՈՍԿԱՆ (նստում է)։

ՀԻՒՐԵՐ (խորհրդակցել են իրարու հետ)։

ՋԱՌՆԻՇԱՆ. Շուշան, աղջիկդ դրսից ինձ դիւր եկաւ, եթէ ուրիշ պակասութիւն չունէ, ապրանքը մերն է։

ՈՍԿԱՆ. Ինչքան դրսումն ես տեսնում, երկու այնքան էլ ներսումն է։

ՇՈՒՇԱՆ. Լաւ-ւաս, դա է։

ԿԱՐԱՊԵՏ. Չ՞բա, ինչ ես ասում, ա մեր։

ՋԱՌՆԻՇԱՆ. Դէ, ինչ ասեմ, Աստուած մեզ օգնէ։

ՈՍԿԱՆ. Աա, Աստուած շնորհաւոր անէ, պրծաւ գնաց։ (Շուշանին)։ *Ա կնիկ, օղի բեր, տեսնենք։*

ՇՈՒՇԱՆ. Ծանր պահիր քեզ։

ՋԱՌՆԻՇԱՆ. Դէ լաւ, Աստուած շնորհաւոր անէ։

ՈՍԿԱՆ (տապով)։ *Ամէն, ամէն։ Շուշան, ինչ ես քարացել, շարժուիր։*

ՇՈՒՇԱՆ (մօտենում է ձախ կողմի դռներին)։ *Սօնա, փունջը բեր։*

ՏԵՍԻԼ XIII.

ՆՈՅՆՔ, ՍՕՆԱ. եւ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ

ՍՕՆԱ. (բերում է մատուցարանի վրայ հինգ բաժակ փունջ, մուրաբաներ եւ բաժանում)։

ՈՍԿԱՆ (Սօնային)։ *Արդաղ բեր այստեղ, շիշը, շիշը։*

ՍՕՆԱ. (գնում է ձախ կողմի դռներով եւ իսկոյն յետ է գալիս օղու շիշը ձեռքին, որ դնում է մէջտեղ)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. (երեւում է լուսամտի առջեւ։ Շշնջիւնով)։ *Շուշան բացի։*

ՇՈՒՇԱՆ (շտապով մօտենում է լուսամտին)։ *Ներս եկ, Դանիէլ աղբեր։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Չէ, այստեղից։ Աչքդ լոյս։ (Մի մեծ նուռ է տալիս Շուշանին)։

ԿԱՐԱՊԵՏ (տեսնելով Դանիէլին, բարկացել է)։ *Նա այստեղ ինչ է անում։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Գնում եմ, գնում եմ։ (Հեռանում է լուսամտից եւ բեմի ետեւում ևւագում է ուրիշ)։

ՇՈՒՇԱՆ. Նա Սօնային շատ է սիրում, ամեն օր գալիս է մեր տունն։

ԿԱՐԱՊԵՏ. Շատ էլ երես մի տուէք։

ՋԱՌՆԻՇԱՆ (գրպանից դուրս է բերում մի մատանի)։ *Մօտ եկ, աղջիկ։*

ՍՕՆԱ. (մտենում է Չաուխբաճիից)։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ձեռդ ցույց տուր։ (Աստանիից դնում է Սօնայի մատին)։ *Այս էլ քա նշանըր։ Դէ, հիմա Աստուած շնորհաւոր անէ։* (Փուճչ Ի. խմում)։

ԿԱՐԱՊԵՏ. Աստուած շնորհաւոր անէ։ (Փուճչ է խմում)։

ՈՍԿԱՆ. Բարով պսակենք։ (Օղի է խմում ծտապով)։

ՇՈՒՇԱՆ. Ամեն, Տէր Աստուած։

ՋԱՎԱՀԻՐ. Բարով չըփոշմանենք։ (Փուճչ է խմում, շարունակ նայելով Սօնային կատակածաւոր հայեացքով)։

ՍՕՆԱ (դարձեալ ցնցւում է Չախմիրի հայեացքից)։

ԿԱՐԱՊԵՏ. Այդ ո՞վ է շուխ ածում։

ՋԱՌՆԻՇԱՆ. Դանիէլը։

ԿԱՐԱՊԵՏ. Տանուտէրդ տարէ է նա շուխ չի ածում, այսօր ի՞նչ պատահեց նրան։

ՇՈՒՇԱՆ. Սօնային համար է ածում։ Նա իմ աղջկանը Մանիշակ է անւանում։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ա՛կնիկ, իսկ որ աղջիկդ նման է Դանիէլի աղջկան։

ԿԱՐԱՊԵՏ. Շատ է նման։

ՋԱՎԱՀԻՐ. Տայ Աստուած, որ բաղդով էլ նման չը լինի։

ՍՕՆԱ. (ճրճւացիով լսել է տուին)։ *Տէր Աստուած ինչ լաւ է ածում, ինչ լաւ է ածում։*

ՈՍԿԱՆ (երրորդ բաժակը օղու դատարկելուց յետոյ)։ *Ես միշտ ասել եմ, էլի ասում եմ, օրինաւոր մարդիկ պիտի իրանց նման օրինաւոր մարդկանց հետ խնամութիւն անեն։* (Նորից օղի է ածում բաժակի մէջ)։

ԿԱՐԱՊԵՏ. Եւ օրինաւոր էլ կոնծեն։

ՈՍԿԱՆ. Այ, դու էլ շատ օրինաւոր բան ասացիր։ կենացդ։ (Խմում է)։ *Մատրասեցի Տեր Սարգսին հօ ճանաչում ես, խնամի։*

ԿԱՐԱՊԵՏ. Ո՞վ չի ճանաչում գինու սրկաճորին։

ՈՍԿԱՆ. Մի օր կանգնել է, թէ...

ՋԱՌՆԻՇԱՆ (վեր է կենում)։ *Դէ, հիմա գընանք Մուրադին էլ շնորհաւորենք։*

ԿԱՐԱՊԵՏ (վեր է կենում)։ *Գնանք, նա մեզ անհամբեր սպասում է։* (Ոսկանին)։ *Խնամի, խօսքդ յետոյ կասես։*

ՈՍԿԱՆ. Վնաս չունի։ (Շտապով խմում է օղի)։

ՋԱՌՆԻՇԱՆ (Շուտանին)։ *Դէ, դուք ձեր պատրաստութիւնը տեսէք, հարսանիքի օրը մենք կընշանակենք։*

ՈՍԿԱՆ. Մենք պատրաստ ենք։ (Դարձեալ խմում է շտապով եւ վեր կենում)։

ՋԱՎԱՀԻՐ. Տայ Աստուած, որ չըփոշմանենք։ (Մի անգամ եւս սուր հայեացքով նա-

յում է Սօճայիին)։

ՍՕՆԱ (դարձեալ ցնցւում է)։

ՋԱՌԻՇԱՆ. Մնաք բարով։ (Գնում է խորհի դռներով)։

ԿԱՐԱՊԵՏ. Մնաք բարով։ (Գնում է խորհի դռներով)։

ՋԱՎԱՀԻՐ. Ասուած բարկն տայ։ (Գնում է խորհի դռներով հեգնական ժպիտն երեսին)։

ՇՈՒՇԱՆ. Գնաք բարով։ (Հիւրերին ուղեկցել է մինչեւ խորհի դռները)։

ՏԵՍԻԼ XIV

ՈՍԿԱՆ. Օ՜, վերջապէս, կորան։ (Շտապով վերցնում է օղու շիշը)։ *Այդ անիրաւ Դանիէլն էլ այնքան լաւ է ածում, որ մարդ ուզում է մէկի տեղ երկուսը խմել։*

ՇՈՒՇԱՆ (խորհի դռների մօտ, ձեռները դէպի վեր բարձրացնելով)։ *Փառք քեզ, երկնային Թագաւոր, փառք քո զօրութեանը։*

ՍՕՆԱ (փաթաթելով մօր պարանոցին, սաստիկ զգացած)։ *Մամա, մամա, սիրտս թրթռում է, գլուխս պտտում, աչքերս մթնում են։*

ՇՈՒՇԱՆ (գրկելով Սօճայի գլուխը)։ *Ուրախութիւնից է, որդի, ուրախութիւնից։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (նւագելով, երեւում է խորհի դռների մէջ։ Դէմքին ուրախ ժպիտ։ Շատ ոգեւորուած է)։

ՈՍԿԱՆ. Ածիր, ածիր, Դանիէլ աղբեր, սրտիցս ես խօսում։ (Խմում է)։

ՎԱՐԱԳՈՑՐ

ԱՐԱՐԻԱԾ ԵՐՐՈՐԴ

Ձառնիշանի բնակարանը։

Մի մեծ սենեակ առանց վառարանի։ Յորքի պատի մէջ երկու դռներ, աջակողմեանը տանում է դէպի կարապետի եւ Ջավահիրի սենեակը, ձախակողմեանը դէպի Մուրադի եւ Սջնայի սենեակը։ Այլ պատի մէջ դռները դէպի բազը։ Ձախ պատի մէջ երկու լուսամուտ, որոնց միջեւ մի հասարակ սեղան ու երկու հնաձեւ աթոռներ։ Բացի այդ սեղանից ու աթոռներից, սենեակի արտու զարդը անագարտ ասիական է։ Յատակը ծածկւած է գորգերով։ Այլ պատի առջեւ թախտ պարսկական գորգով ծածկւած։ Թախտի գլխին պատի վրայ հայելի։ Պատերի մէջ խորշեր գեղեցիկ բեհեզեայ կտորներով վարագուրւած։ Պատերի տակ շքեղ մինդարներ մութաքարեր եւ այլն։

ՏԵՍԻԼ Ի

ՋԱՎԱՀԻՐ եւ ԿԱՐԱՊԵՏ

ՋԱՎԱՀԻՐ (առանց շալի, ցնայիկ հագուստով, գլխին կանաչ բոռ։ Սենեակի յատակը աւելել է, աւելը գցում է այ կողմի դռներով դուրս եւ սկսում է ծալած գորգերն ուղղել եւ առ հասարակ սենեակը կարգի բերել)։

ԿԱՐԱՊԵՏ (գալիս է խորքի աջակողմեան դռներով չուխայով ու գդակով։ Ծխում է եղեգնեայ մունդշտուկից իւր ձեռքով շինած ծխախոտը)։ *Ես գնում եմ, Մուրադին կասես, որ այսօր թարաքամաները են գալու, թող մի քիչ շուտ գայ խանութ։*

ՋԱՎԱՀԻՐ (չար նախանձով ու գրգիռով)։ *Մուրադը մինչեւ որ իւր հարսից չկշտանայ, անից դուրս չի գալ։*

ԿԱՐԱՊԵՏ։ Օօ, քո լեզուն կտրւի, ասեղ է, ասեղ։

ՋԱՎԱՀԻՐ. Ջը գիտեմ ասեղ է թէ մախաթ իմ լեզուն, բայց ճշմարտախօս է։

ԿԱՐԱՊԵՏ. Բայց այդքան էլ կծել չի կարելի խեղճ կնոջը։

ՋԱՎԱՀԻՐ. Ըհ, խեղճ օձ կծի նրան։ Այն օրից, որ նա այս տունն է մտել, արիւնս պղտորւել է։

ԿԱՐԱՊԵՏ. Աբիւնդ նրան տեսնելու օրից է պղտորւել, որովհետեւ դու նրան նախանձում ես։

ՋԱՎԱՀԻՐ. Նրա ինչին եմ նախանձում. հարբեցող հօրը, թէ՞ ուրիշների թոնիրները լզող մօրը։

ԿԱՐԱՊԵՏ. Նա գեղեցիկ է, ահա թէ ինչն է քեզ կատաղեցնում։

ՋԱՎԱՀԻՐ (աւելն գգուելով)։ *Գեղեցիկ է, գեղեցիկ է։ Ինչը։ կարմիր մազերը, թէ՞ մաթ մաթ*

աչքերը, սպրդնած երեսը։ Սպասեցէք, սպասեցէք, դու էլ, եղբայրդ էլ, մայրդ էլ, մի օր նա ձեր գլխին մի փորձանք կբերէ, կըտեսնէք, սիրտս գուշակում է։

ԿԱՐԱՊԵՏ. Զար ես, Զավահիր, չար, ինչ ուզում ես — ասա։

ՏԵՍԻԼ II

ՆՈՅՆՔ ԵՒ ՁԱՌՆԻՇԱՆ

ՁԱՌՆԻՇԱՆ (գալիս է աջ կողմի դուռերով գլխին չարուղ։ Յուզած է)։ Այդպէս էլ անէրես մարդ, Տէր Աստուած, այդ ինչ փորձանք է։

ԿԱՐԱՊԵՏ. Հ՛րը, դու ինչու ես չարաչել։

ՁԱՌՆԻՇԱՆ չարուղը գլխից վերցնելով եւ Զավահիրին տալով)։ Քրոջս անից դուրս եկայ թէ չէ, պատահեցի ոչ բարով մեր խնամուն, նալբանդ Ոսկանին։ «Բարով»։ «Աստծուբարին»։ Խնամի, ասում է, ներողութիւն, որ երէկ չեկայ, այսօր ճաշին ձեզ մօտ եմ»։ Մին հարցնող լինի, ո՞վ է քեզ ճաշի կանչել երէկ կամ այսօր։

ՁԱՎԱՀԻՐ (Կարապետին չարախնդութեամբ)։ Տեսնում ես, այդ էլ հօ ես չեմ ասում, որ լեզուս չար անուանես։

ԿԱՐԱՊԵՏ. Էէ, մայր, շատ շուտ սկսեց ձեր մէջ խառնակութիւնը։ Դէ, ես կանանց հետ

վիճելու գլուխ չունեմ։ Գնացի։ (Գնում է աջ կողմի դուռերով)։

ՏԵՍԻԼ III

ՁԱՌՆԻՇԱՆ ԵՒ ՁԱՎԱՀԻՐ

ՁԱՎԱՀԻՐ (Ձառնիշանի չարուղը ծալել է ու մի կողմ դրել)։ Լոյսը բացելուց դէս ոտքի վրայ չեն նման չարչարւում եմ, իսկ նա իւր սենեակում դեռ սիլիկ-բիլիկ է անում իւր մարդու հետ։ (Մինդարւերը ուղղելիս դէս ու դէն է գցում)։

ՁԱՌՆԻՇԱՆ. Նրա բանը չոկ է, քոնը չոկ։ Դու տասը տարւայ հարս ես, նա մի՛ ամսւայ։ Ինչ կատարիը նրա դէմ։

ՁԱՎԱՀԻՐ. Դու էլ քիչ բռնիր նրա կողմը։ Տես, չը լինի վերջը զղջաս։

ՁԱՌՆԻՇԱՆ. Իսկի էլ չեմ զղջալ։ (Նստում է թախտի վրայ, գրպանից fրախոs է դուրս բերում ու fուշում)։ Ես էլ առաջ հակառակ էի, որ Մուրադը պսակւի մի հայթուխի աղջկայ հետ, հիմա տեսնում եմ, որ որդիս չի խաբւել նրանից մի անգամ տեսնելով ու սիրելով։ Սօնան ոչ միայն գեղեցիկ է, այլ և խոնարհ, խելօք, աշխատասէր։ Ինչ ես կատարել, մինդարները դէս ու դէն գցում։

ՁԱՎԱՀԻՐ. Մի ամիս չըկայ այս տունն

մանելը, ամենքիդ կախարդել է։ Ով գիտէ, վաղը կամ միւս օրը ինձ կը հրամայէք, որ նրան ծառայեմ աղախնի պէս։

ՋԱՌՆԻՇԱՆ. Օօ, Ջավահիր, շատ չարն ես։

ՋԱՎԱՀԻՐ (գրգռած)։ Դու էլ։

ՋԱՌՆԻՇԱՆ. Այո, չար ես։ Ես վախենում եմ, որ դու այդ անմեղ ապրկայ օրը սևացնես։

ՋԱՎԱՀԻՐ. Իսկ ես վախենում եմ, որ դու մի օր պիտի վայ տաս քո գլխին նրա պատճառով։ Սպասիր, սպասիր, եթէ չեմ մեռնիլ, կը տեսնեմ, որ ուրիշների տաճը նրա մասին ճըշմարիտ է։

ՋԱՌՆԻՇԱՆ (բարկանում է)։ Սուս, այդ մասին ոչ մի բառ։

ՋԱՎԱՀԻՐ. Ամբողջ քաղաքն է խօսում, ես ինչ մեղաւոր եմ։

ՋԱՌՆԻՇԱՆ. Խօսողների լեզուները չորանան։

ՋԱՎԱՀԻՐ. Թող չորանան, եթէ սուտ են ասում։

ՋԱՌՆԻՇԱՆ. Շատ մարդիկ ինձ չեն բամբասում։ Բայց ես այսօր կը խօսեմ նրա մօր հետ։

ՋԱՎԱՀԻՐ. Նա քեզ ճշմարտութիւնը չի ասել, կարող ես առաջուց երդուել։

ՋԱՌՆԻՇԱՆ. Դէ լաւ, քիչ պղտորիր արիւնս։ Գնա, հաւերին կուտ տուր։ Կարծեմ Մուրադը

գալիս է։ Ես էլ գնում եմ երեխաներիդ մօտ։ (Գնում է խորհի ձախակողմեան դռնեռով)։

ՋԱՎԱՀԻՐ (կատաղած)։ Տունը հաւաքիր, հաւերին կուտ տուր, այս արա, այն արա, իսկ նա այնտեղ պաչպաչէի իր մարդու հետ։ (Գնում է աջ կողմի դռնեռով)։

ՏԵՍԻԼ IV.

ՄՈՒՐԱԴ ԵՒ ՍՕՆԱ.

ՄՈՒՐԱԴ (գալիս է խորհի ձախակողմեան դռնեռով։ Համակրելի դէմքով երիտասարդ է սափրած երեսով։ Հագած է սեւ մեծամեծ արխալուղ, վրէն սիւրտուկ։ Ոտներին եւրոպական կօշիկներ։ Ձեւերը բաւեկիրթ են։ Գլխաբաց է)։ *Աղքատութիւնը մեղք չէ, Սօնա, աղքատութիւնից ամաչելն է մեղք։ Մենք էլ առաջ աղքատ էինք, բայց մեր աշխատանքով և Աստծու կարող զօրութեամբ մի կատր հաց ձեռք բերեցինք։ Ես իսկի չեմ ամաչում քո ծնողների աղքատութիւնից։ Թող նրանք գան-գնան, երբ ուզում են և որքան ուզում են։ Իմ տան դռները միշտ բաց են նրանց համար։* (Ծխախոտ է վառում ու ծխում)։

ՍՕՆԱ (գալիս է Մուրադի ետեւից խորհի ձախակողմեան դռնեռով։ Հագած է ըեղ տեղական հագուստ, ոտներին եւրոպական կօշիկներ)։

Շնորհակալ եմ, շնորհակալ եմ։ Ես էլ կաշխատեմ քեզ արժանի լինել։

ՄՈՒՐԱԴ. Դու աւելի լաւ և աւելի հարուստ մարդու էիր արժանի, քան ես։ Ահ, իսկի չեմ մոռանալ այն օրը, երբ քեզ տեսայ Սուրբ Կարապետի մասունքին ուխտի գնալիս։ Դու կանչ խոտերի մէջ վազվզում էիր մարալի պէս։ Ինչո՞ւ ոտաբաց էիր, ասա։ (Գրկում է Սօնային մի ձեռով, ծխախոտը մի կողմ ձգելով)։

ՍՕՆԱ. Մայրս էր հրամայել։ Նա ասում էր, որ ուխտի գնացող աղջիկը պիտի ոտաբաց լինի։

ՄՈՒՐԱԴ. Բայց ի՞նչ էր ուխտդ, Սօնա, ասի, կարելի՞ է իմանալ։

ՍՕՆԱ. Չը գիտեմ, մոռացել եմ։

ՄՈՒՐԱԴ. Մոռացե՞լ ես։ Գիտե՞ս, Սօնա, պէտք է ասել, որ դու առհասարակ մոռացկոտ ես։ Դու մինչև անգամ մեր հարսանիքի մասին էլ շատ բաներ չես յիշում, օրինակ, մեզ պսակող Տէր-Սարգսի հարբած լինելը։ Միտդ չէ՞, ինչպէս նա խորանից շուրջառը թարս գցած դուրս եկաւ։ (Ծիծաղում է)։

ՍՕՆԱ. Ոչ, միտս չէ։

ՄՈՒՐԱԴ. Մոռացկոտ ես, այդ ինչի՞ն է, ասի։

ՍՕՆԱ. Չը գիտեմ։

ՄՈՒՐԱԴ, Լաւ, ես քեզ կը յիշեցնեմ քո ուխտը։ Դու գնում էիր սրբին խնդրելու, որ նա շուտով քեզ համար մի լաւ փեսացու ուղարկի...

ՍՕՆԱ (ամօթխած)։ Լաւ, այդպիսի հանաքները մի արա։

ՄՈՒՐԱԴ. Աա, կարմրեցի՞ր, ուրեմն, իմացայ։ Դէ, ասա, ուխտդ լա՞ւ կատարեցիր (Բաց է թողնում Սօնային)։

ՍՕՆԱ (ամօթխած)։ Լաւ կատարեցի։

ՄՈՒՐԱԴ. Ինձ էլ լաւ կատարեցիր։ Ահ, հէնց որ հեռից քեզ տեսայ, մի ձայն ասաց. «Մուրադ, մօտեցիր այդ աղջկան»։ Ջիուս մարակեցի, մօտեցայ։ Ուզեցի երեսդ տեսնել, դու շալով ծածկեցիր։ Բայց աչքերդ բաց էին։ Տեսայ, սիրտս բաբախեց։ Յետոյ էլի տեսայ, վերջապէս, ուխտատեղում երեսդ էլ տեսայ։ Մի ձայն շարունակ ականջիս ասում էր։ «Մուրադ, նրան Աստուած է ուղարկել քեզ համար, եթէ ուզում ես բաղդաւորուել, այ քեզ կնիկ, առ նրան»։ Ուխտեցի առնել։ Հարցրի Դանիէլ հօրեղբօրս ծնողներիդ մասին, նա ասաց, թէ ովքեր են նրանք։ Հաւատա, Սօնա, ես աւելի ուրախացայ, երբ իմացայ, որ ծնողներդ աղքատ են։ Ես ասացի մտքումս, թող համ ես բաղդաւորուեմ համ էլ նրա ծնողները ուրախանան։ Մայրս, եղբայրս, մանաւանդ Ջավահիրը շատ հակառակեցին, բայց ես ասացի. «պիտի առնեմ»։ Ու առայ։

ՍՕՆԱ. Ի՞նչ կանէիր եթէ չուզենայի քեզ գալ։

ՄՈՒՐԱԴ. Մի օր ձի կընստէի ու քեզ կը

վախցնէի։ Մի՞թէ ես կարող էի տեսնել, որ մի ուրիշը տանէ քեզ։ (Գրկում է Սօնային ու համբուրում)։

ՍՕՆԱ (ազատելով Մուրադի գրկից)։ Լաւ, ամօթ է, կըտեսնեն։

ՄՈՒՐԱԴ. Ամօթ է, ինչն է ամօթ։ Սիրելը։ Ամօթ է սիրուց ամաչելը։ Գիտես, Սօնա, գեղեցկութիւնն Աստծու ամենամեծ պարգևն է, պարծեցիր նրանով։

ՍՕՆԱ. (ծոյլած, բայց ջիղերով)։ Ես գեղեցիկ եմ։

ՄՈՒՐԱԴ։ Ի հարկէ, մի՞թէ ինքդ չըգիտես։ Այդ սիրուն մազերդ, կապոյտ աչքերդ։ Ձուր չէ հօրեղբայր Դանիէլն ասում, թէ նրանք ուկէ թելեր են և կապոյտ փիրուզաներ։ Գիտե՞ս, Սօնա, երբ մտիկ եմ անում աչքերիդ, միտս է գալիս երեխայութիւնս։ Այն ժամանակ ես սիրում էի դաշտերում ու այգիներում պառկել կանանչ խոտի մէջ մէջքիս վրայ ու մտիկ անել կապոյտ երկնքին։ Որքան մտիկ էի անում, այնքան նա խորանում էր, այնքան խորանում։ Քո աչքերն էլ այդպէս են։ Ես բաղդաւոր եմ, Սօնա, այնքան բաղդաւոր, որ քիչ է մնում լաց լինեմ։ (Մի անգամ եւս գրկում է Սօնային ու համբուրում)։

ՍՕՆԱ (զգացուած)։ Ա՜հ։

ՄՈՒՐԱԴ (բաց թողնելով Սօնային)։ Ինչ-

չո՞ւ վախեցար, դու չես ուզում, որ ես քեզ համբուրեմ։

ՍՕՆԱ. Ոչ, այդ չէ, այդ չէ։ (Մանր հառաչում է)։ Ա՜հ...

ՄՈՒՐԱԴ. Դու հառաչեցիր։ Ասա, Սօնա, ինչ ես մտածում, ինչ ունիս սրտումդ։

ՍՕՆԱ. Ոչինչ, ոչինչ։ Բաղդաւորութիւնից գլուխս պտտեց։

ՄՈՒՐԱԴ. Հաւատա՛մ, Սօնա։

ՍՕՆԱ (մեկուսի)։ Աստուած իմ։ (Մուրադին)։ Հաւատա, Մուրադ, հաւատա։ Մայրս երէկ ասում էր, երբ մարդ շատ է բաղդաւոր, կարծում է, որ իրան մի անբաղդութիւն պիտի պատահի։ Ես վախենում եմ։

ՄՈՒՐԱԴ. Ոչ մի բանից մի վախենար, ոչ մի բանից։ Մայրդ էլ միամիտ է, դու էլ։

ՍՕՆԱ (իջնելով իրան)։ Լաւ, գնա գործիդ։ Մայրդ կարող է բարկանալ ինձ վրայ, մինչև հիմա մատ մատի չեմ խփել, օրը կեսօր է։

ՄՈՒՐԱԴ. Այս տանը ոչ ոք իրաւունք չունի քեզ վրայ բարկանալու, դու հանգիստ կաց։ Դէհ, ես գնացի, բեր այստեղ գդակս ու վերարկուս։

ՍՕՆԱ (շտապով գնում է խորքի ձախակողմեան դուռերով եւ իսկոյն յետ է գալիս Մուրադի փոքրիկ մորթէ գդակը ձեռքին)։ Գնա։

ՄՈՒՐԱԴ (հագնում է վերարկուն եւ գդակը ձեռքին գնում է աջ կողմի դռներով)։

ՍՕՆԱ (ուղեկցելով Մուրադին մինչեւ աջ կողմի դռները, նայում է նրա հետեւից)։ Ինչ լաւ մարդ է։ (Ցանկարծ ցնցում է։ Ձեռները վեր բարձրացնելով)։ Տէր, դու ինձ սևերես չանես նրա մօտ։

ՏԵՍԻԼ V

ՍՕՆԱ ԵՒ ՋԱՎԱՀԻՐ

ՋԱՎԱՀԻՐ (գալիս է աջ կողմի դռներով)։ Օհ, փառք Աստծու, գնաց։ Ես մինչև օրս չեմ տեսել մի մարդ ու կնիկ, որ միմեանց այդպէս կպած լինեն, ինչպէս դուք։ Ծուլութիւնը, սիրելիս, հարուստ ծնողների աղջկան միայն կարող է սազել։

ՍՕՆԱ. Ջավահիր, լաւ բան չէ, որ դու ամեն օր ծնողներիս աղքատութիւնը երեսովս ես տալիս։

ՋԱՎԱՀԻՐ. Ինչպէս չը տամ, քանի որ դու Մուստաֆա խանի աղջկայ պէս ես պահում քեզ այս տանը։ Սենեակը կարգի բերել ես։

ՍՕՆԱ. Այո։

ՋԱՎԱՀԻՐ. Դէ, գնա ճաշի պատրաստութիւն տես։ Ես երեխաները ուղիմ, նրանցով եմ զբաղուած։

ՍՕՆԱ. Շատ լաւ, ամեն բան կանեմ։

ՋԱՎԱՀԻՐ. Կանեմ, կանեմ, բայց ոչինչ չես անում։

ՍՕՆԱ. Ջավահիր, այդպէս բարկացած մի խօսիր հետս, ադաչում եմ։

ՋԱՎԱՀԻՐ. Տեսէք, տեսէք, դեռ համարձակւում էլ է ինձ խրատներ տալ։ Ըհ, խրատողիդ երեսին կպչես։ (Երկու ձեռներով ճանկ է անում)։

ՍՕՆԱ. Դէ լաւ, ես կռւելու սիրտ չունիմ։

ՋԱՎԱՀԻՐ. Շատ մի գոյը վրէս, լսում ես, շատ մի գոյը։ (Աչքերը չռում է Սօնայի վրայ)։

ՍՕՆԱ. Լաւ, ես ինչ ասացի քեզ, որ բարկացար։ Ի սէր Աստծու, այդպէս մի նայիր ինձ, ես քեզանից վախենում եմ։

ՋԱՎԱՀԻՐ. Դու ինձանից վախենում ես։ Ասելդ ինչ է, աա, ինչ է ասելդ։ Ուրեմն, ես կատաղած շունն եմ, քաղցած գայլ կամ գերեզմանները փորող բորենի, որ ինձանից վախենում ես, աա։

ՍՕՆԱ. Մեղայ քեզ, Տէր։ Լաւ, թող գնամ գործիս։

ՋԱՎԱՀԻՐ. Աներես, աներես, մի ամիս չը կայ այս տունն մտնելդ, արդէն աստմներդ ցոյց ես տալիս։ Օօ, ես գիտեմ, գիտեմ, դու տակն ու վրայ պիտի անես մեր խաղաղ կեանքը։ Աւելի լաւ է հեռանամ այստեղից, թէ չէ դու

կարող ես ինձ խեղդել։ (Քայլերն ուղղում է դէպի խորհի աջակողմեան դուռերը)։ *Մերուն Սօնա՝ պղտած աչքեր, դեղնած երես։*

ՍՕՆԱ. Ջավահիր, մի բոպէ...

ՋԱՎԱՀԻՐ. Ոչ մի բոպէ, ես պոռթ չունիմ քեզ նմաններուի հետ խօսելու։ (Գնում է խորհի աջակողմեան դուռերով)։

ՏԵՍԻԼ VI

ՍՕՆԱ, ՅԵՏՈՅ ՇՈՒՇԱՆ

ՍՕՆԱ (նայում է Ջավահիրի եետից տարակուսանքով, գլուխը շարժում, յետոյ մի վճռական շարժումն է անում եւ քայլերն ուղղում է դէպի աջ կողմի դուռերը։ Այնտեղ հանդիպում է Շուշանիկի)։

ՇՈՒՇԱՆ. Բարի լոյս։ (Գալիս է աջ կողմի դուռերով։ Հագուստ է համեմատաբար մաքուր, գլխին գցած է նոր շալ։ Համբուրում է Սօնայի ձեռ։ Անհանգիստ է, մի եւ նոյն ժամանակ, ուրախ)։ *Ո՞ւր էիր գնում։*

ՍՕՆԱ. Խոհանոց։

ՇՈՒՇԱՆ (շալը գլխից վերցնելով)։ *Սպասիր մի քիչ։ Աստ տեսնեմ ինչպէս ես։* (Նստում է թախտի վրայ)։

ՍՕՆԱ. Շատ լաւ եմ, մամա, շատ լաւ եմ։

ՇՈՒՇԱՆ (հառաչելով)։ *Դոհուիթիւն Աստծոյ,*

որդի։ Տեսայր, ասում էի, որ կամուսնանաս։ Այժմ ես էլ հաւատում եմ, որ մեր գլխին Աստուած կայ։

ՍՕՆԱ. Նա միշտ եղել է, կայ եւ կըլինի։ (Աչքերը բարձրացնում է վեր, երեսին խաչակնքում)։

ՇՈՒՇԱՆ. Մուրադից գոհ ես, լաւ է պահում քեզ։

ՍՕՆԱ. Աւելի լաւ, քան արժանի եմ։ Մուրադը ոսկէ սիրտ ունէ։

ՇՈՒՇԱՆ. Սկեսուրդ ինչպէս է վարվում քեզ հետ,

ՍՕՆԱ։ Նա սիրում է ինձ, ես էլ նրան եմ սիրում։ Նա լաւ կին է։

ՇՈՒՇԱՆ. Ուրախ եմ, որդի, ուրախ եմ։ Էհ, տեքօրդ կնիկն ինչպէս է։

ՍՕՆԱ (շփոթելով)։ Ջավահիրը... (Գլուխը թեռում է կրծքին)։

ՇՈՒՇԱՆ. Այո, Ջավահիրը։ Ինչո՞ւ լռեցիր, չըլինի թէ...

ՍՕՆԱ. Ոչինչ, մամա, նա էլ լաւ կին է, միայն թէ մենք դեռ միմեանց չենք սովորել։

ՇՈՒՇԱՆ. Աչխատիր նրա հետ հաշտ վարուել։ Քեզանից մեծ հարս է, պատիւը պահիր։

ՍՕՆԱՆ. Մամա, մի բան եմ ուզում խնդրել, չընեղանաս։

ՇՈՒՇԱՆ. Աստ, որդի, ես ոչ մի բանից չեմ նեղանալ։

ՍՕՆԱ (ինչ տատանելով)։ Աստ հայրիկին որ մի փոքր ծանր պահի իրան։

ՇՈՒՇԱՆ. Ի՞նչ է պատահել, հարբած եկել է ու անկարգություն արել։

ՍՕՆԱ. Ոչ, մամա, նա այստեղ հարբած չի գալիս, այլ ընդհակառակը։

ՇՈՒՇԱՆ. Գալիս է ու այստեղ հարբում, հաճ։

ՍՕՆԱ. Այո, մամա, հենց դրա համար էլ նրան չեն սիրում այս տանը։

ՇՈՒՇԱՆ. Դէ ինչ անեմ, որդի, նրա երեսի մեռոնը վաղուց է թափել։ Ամեն օր ասում եմ՝ «մի գնա, մի գնա», էլ գալիս է։ Մարդ շատ է նախատում քեզ նրա պատճառով։

ՍՕՆԱ. Ոչ, մամա, ընդհակառակը նա մի քիչ առաջ ինքն էր խնդրում, որ հայրս ամեն օր գայ մեզ մօտ։ Քեզ էլ էր խնդրում։ Սկեռուբս ու մանաւանդ Ջալահիրը չեն սիրում հայրիկին։

ՇՈՒՇԱՆ. Ախար նա ինչ սիրելու բան է, որ սիրեն, դէ, ինչ անեմ, որդի իմ խօսքը հօրդ վրայ չի ազդում, կարելի է քոնն ազդէ։ Աստ, որ չըգայ քո տունը։

ՍՕՆԱ. Օօ, ոչ, մամա, մի՛թէ աղջիկը կարող է հօրն արգելել իւր տունը գալու։

ՇՈՒՇԱՆ. Ուրեմն, ինչ անենք։ (Ցանկած յիշելով)։ Հա, էլի Դանիէլը կարող է մեզ օգնել։ Ես նրա հետ կըխօսեմ։

ՍՕՆԱ. Բայց, մամա, Դանիէլին էլ չեն սիրում այս տանը, բացի Մուրադից։

ՇՈՒՇԱՆ. Նա գալիս է այստեղ։

ՍՕՆԱ. Ամեն օր։ Գալիս է, առողջութեանս մասին հարցնում ու գնում։ Ահ, մամա, չըգիտես ինչքան եմ սիրում այդ անբաղդ մարդուն։ Լսո՞ւմ ես, դա նա է։

Բեմի եսեից։ (լսում է սազի ձայն)։

ՏԵՍԻԼ VII

ՆՈՅՆՔ ԵՒ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (բեմի եսեից սկսելով երգը, գալիս է, կանգնում աչ կողմի դռների մէջ։ Հագած է ոսներից կօշիկներ, ետպկի վրայ արխալուղ)։

Իգիթ տեսայ, ձի էր նստած, սիրեցի,
Կեանքս կըտամ, թողէք գնամ իմ եարին։
Մարալ տեսայ, խելքս գնաց, պաշտեցի։
Կեանքս կըտամ, թողէք առնեմ իմ եարին։
Բարով խանում խաթունիս, բարով կանանչ
սարերից, խորը ձորերից, սիրուն դաշտերից։

էհ, Շուշան բալիկ, աղջիկց բաղդաւոր է, Մուրադին սիրեց, Մուրադը բաղդաւոր է, աղջկապ սիրեց։ Մանիշակս ծիծաղում է, Մանիշակս ուրախ է, Մանիշակս պարում է։ (Դուրս է բերում ծոցից ճախարf ու տալիս է Շուշանին)։ Առ քեզ նշխարք, ժամ՝արը աւեց։ Երբ թխում էր, ես մօտն էի։

ՇՈՒՇԱՆ (ճախարfն առնելով, մի մասը տալիս է Սօնային, միւսն ուտում)։ Այո, Դանիէլ աղբերը, աղջիկս բաղդաւոր է։ Ես քեզանից շատ ու շատ շնորհակալ եմ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (Սօնային)։ Դու՛ ինչ կասես, Սօնա խանում, սիրուն բալա։ Աստ, աստ, ինչ հոգս ունիս, ինչ միաք ունիս։ Ով է քեզ հետ վատ վարուում։

ՍՕՆԱ. Ոչ ոք, Դանիէլ ապէր, ոչ ոք, ամենքն էլ ինձ հետ լաւ են վարուում, ամենքն էլ սիրում են ինձ։ Ես շնորհակալ եմ քո ազգականներից։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Պատառ պատառ կանեմ, հում հում կուտեմ։ (Տօնը փոխելով)։ Շուշան բալիկ, ինձ լսիր. առաջ Մանիշակիս չէի տեսնում երազում, հիմայ ամեն գիշեր տեսնում եմ, ամեն գիշեր։

ՍՕՆԱ. Աստ, Դանիէլ ապեր, ինչպէս ես տեսնում նրան, ո՞րտեղ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Տեսնում եմ նրան սիրուն

հագստով, գլխին կարմիր թոռ, հագին բեհեզեայ արխալուղ, կրծքին ու ճակատին ոսկիներ, ձեռքին սպիտակ ծաղիկ, երեսին անուշ ծիծաղ։ Հարցնում եմ, ինչ ես անում, բալաս, ո՞ւր ես գնում։ Ասում է. «գնում եմ հարսանիք»։ Ո՞ւմ հարսանիքն ես գնում։ Ասում է. Սօնայինը։ Նա իմ քոյրն է, ազիզ քոյր, մինիկ քոյրը, աչքիս լոյսը»։ «Էյ, հայրը, ասում է, եանրան սիրում եմ, դու էլ սիրիր, գնա ամեն օր նրա մօտ, պահիր, պահպանիր, թէ չէ կընեղանամ, շատ կընեղանամ»։ (Առաջ է գալիս)։

ՍՕՆԱ (մեկուսի)։ Ախ, սիրտս մղկտում է երբ նա խօսում է։ (Գնում է աջ կողմի դուռերով)։

ՇՈՒՇԱՆ. Ուրախ կաց, Դանիէլ աղբեր, Սօնան քո Մանիշակն է։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (ոգեւորուած, սազը բարձրացնելով վեր, երգի եղանակով)։ Սօնա, Սօնա, Ովսաննա, սիրուն Սօնա, Ովսաննա։ (Տօնը փոխելով)։ կուզես, որ նրա համար սազ ածեմ։

ՇՈՒՇԱՆ. Ածիր, Դանիէլ աղբեր, Սօնան շատ է սիրում։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Ականջ դիր։ Լէյլիի երգն եմ ածելու, երազումս եմ լսել։ (Նւագում է առաջ երեսը դէպի հասարակութիւն, յետոյ դէպի Սօնան)։

ՍՕՆԱ (վերադառնում է աջ կողմի դուռերով եւ գլուխը յենելով դուռերի շրջանակին, հիաց-

մուճոով ականջ է դնում, արխալուղի ծալած թեւերն ուղղելով, յեոոյ ձեռները կախ գցելով)։ *Նաիր, նաիր, Դանիէլ ապեր։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (նւագելով)։ Չէ չէ չէ։ Աստան Դանիէլը ցերեկները չի նաոում, չի պառկում, չի քնում։ Նա մինչև կէս գիշեր թափառում է փողոցները, դաշտերը, սարերը, ձորերը։ Ծառերից պտուղ է քաղում, աղբիւրներից ջուր է խմում։

ՍՕՆԱ. Ի՛նչ լաւ ես ածում։ (Յափշտակւած է լսում)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Նա կանգնում է աւերակների վրայ, սուգ է անում, ողբ կարդում։ Աստւած ինքն է հրամայել։ Ես անտուն եմ, անտէր։ Ես էլ ունէի տուն ու տեղ։ Ես էլ սիրում էի կնոջս Մուրադի պէս։ Աստւած չուզեց, որ ապրեմ, աչքերս հանեց, դէն գցեց։ Սօնա խաթուն, ուրախ կաց, խեղճ է մայրդ, թող ապրի, քեզ տեսնելով մխիթարւի։ (Երգում է)։

Էյ ժողովուրդ, երգս լսէք
Ես բիւլբիւլ եմ Գիւլիստանի բաղերից,
Էյ ժողովուրդ, դարդս լսէք,
Ես բայղուշ եմ Դաղստանի սարերից... և այլն։

ՍՕՆԱ (հանդարս լալիս է յուզմունքից)։

ՏԵՍԻԼ VIII

ՆՈՅՆՔ ԵՒ ՈՍԿԱՆ, ՅԵՏՈՅ ՋԱՒՆԻՇԱՆ ԵՒ ՋԱՎԱՀԻՐ

ՈՍԿԱՆ (Ներս է մտնում աջ կողմի դռներով։ Հագնւած է առաջւայ պէս։ Հարբած չէ, բայց տրամադրութիւնն ուրախ է)։ *Բարով ժողովրդին։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Եկ, եկ, ուստա Ոսկան, լսիր ինձ, ուրախացիր։

ՈՍԿԱՆ. Ածիր, ածիր, Դանիէլ աղբեր, քեֆը լաւ է, ուրախ եմ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (մի ինչ ես նւագում է եւ Ջաւնիշանին ու Ջավահիրին տեսնելով դադարում)։

ՋԱՒՆԻՇԱՆ եւ ՋԱՎԱՀԻՐ (գալիս են խորքի աջակողմեան դռներով, կանգ են առնում եւ զարմացած, անշարժ լսում մի ինչ վայրկեան)։

ՇՈՒՇԱՆ (Ոսկանին)։ *Ինչո՞ւ եկար, գնանք, գնանք։* (Բռնում է Ոսկանի թեւից, ուզում է դուրս տանել)։

ՈՍԿԱՆ (մատը բարձրացնելով)։ *Նիստօժ, սմիռնիյ։*

ՇՈՒՇԱՆ (լսելով Ջաւնիշանի ձայնը, ցրնցում է)։

ՋԱՒՆԻՇԱՆ (Գիժ-Դանիէլին, որ դադարել է նւագել)։ *Ածիր էլի, ինչո՞ւ դադարեցիր։*

ՋԱՎԱՀԻՐ. Այստեղ մարիկ արէք, հաւաքւել են ու մեր տանը հարսանիք սարքել։

ՈՍԿԱՆ. Խնամիներիս բարով հազար բարի։ (Ջաւնիշեանին)։ Տեսա՞ր, ասացի կըգամ—եկայ։ Մուրադն էլ խնդրեց, որ գամ, շատ խնդրեց։

ՋԱՎԱՀԻՐ. Քեզ ոչ ոք չի խնդրել, մի հնաբիր քեզանից։

ՈՍԿԱՆ. Աա, ինչ։

ՋԱՒՆԻՇԱՆ (Ջավահիրին)։ Դու սուս կաց։

ՋԱՎԱՀԻՐ. Ինչո՞ւ պիտի սուս կենամ։ Ամեն օր ցեխոտ ոտներով գալիս է, մեր գորգերը կեղտոտում։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Յուլիանոսը չար է։ (Ոտները արբում է դուների մոս)։

ՈՍԿԱՆ. Ցեխոտ ոտներո՞վ, ինչ ասացի՛ր։

ՍՕՆԱ (մեկուսի)։ Աստուած իմ, նրանք կըռւելու են։

ՈՍԿԱՆ (Ջաւնիշեանին)։ Խնամի, լսեցի՛ր, նա ինձ անպատիւ արաւ։

ՋԱՒՆԻՇԱՆ. Հանդարտ, խնամի, կռիւ մի անիր, Աստուած սիրես։

ՇՈՒՇԱՆ (Ոսկանին)։ Գնանք, մարդ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Գնանք, ուստա Ոսկան։

ՈՍԿԱՆ. Մին թողէք տեսնեմ է։ (Ջավահիրին)։ Ո՛ւմ ես անպատուում, ասա։ Ո՛վ ես դու։ Ես քո տունն եմ եկել, որ խօսում ես։ Իմ խնամին նա է։ (Յոյց է տալիս Ջաւնիշեանի վրայ)։ Դու ինչ ես։

ՍՕՆԱ. (Շուռանալով)։ Մայա, տար նրան այստեղից։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Գնանք, ուստա Ոսկան, գընանք։ Ժամհարն մեզ ճաշի է կանչել գնանք։

ՈՍԿԱՆ ուշադրութիւն չդարձնելով Դանիէլի վրայ, Ջաւնիշեանին ու Ջավահիրին)։ Ի՞նչ էք հպարտանում ձեր հարստութիւնով, հէ, դուք կարծում էք Պուզանց Ոսկանը իսկի ձեզ նման հարուստներ չի տեսել։ Ցետ տուէք ինձ աղջկաս, յետ տուէք։

ՋԱՎԱՀԻՐ (չարախինդ)։ Իւր ալմազ ու բռիլեանտը յետ է պահանջում. մեծ բան է։

ՋԱՒՆԻՇԱՆ (Ջավահիրին)։ Դու լռիր, (Ոսկանին մեղմ)։ Խնամի, մի նեղանար, դեռ ճաշի ժամանակ չէ, առաւօտ է, տունը կարգի չենք բերել։

ՈՍԿԱՆ. Հերիք է, գիտեմ ինչ պատուհներ էք։ Թքել եմ փող ունեցողների վրայ։ Փողն ինչ է։ Ջեռքի կեղտ, այնպէս չէ, Դանիէլ աղբեր։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Փողը սատանայի նշխարք է, ով որ ուտի—դժոխք է գնալու։

ՈՍԿԱՆ. Լսեցի՛ք, չը կարծէք, որ նա գիժ է։ Նա ձեր ամենքից խելօք է։ (Սօնային)։ Դու ինչու չես խօսում, հէ։ Դու էլ նրանց կողմն ես, Մարդուդ ասա, որ բաժանուի դրանցից։

ՋԱՌՆԻՇԱՆ. *Մեղայ քեզ, Տէր, համբերութիւնս սպառուում է։*

ՋԱՎԱՀԻՐ. *Ծառային կանչիր, թող դուրս անի։*

ՈՍԿԱՆ. *Գնում եմ, գնում եմ, սատանայի փորոտիք։ Դանիէլ, տար ինձ ժամհարի մօտ։* (Բռնում է Դանիէլի թեւը)։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (սազը բարձրացնելով օդի մէջ, սպառնում է Ջառնիշանին ու Ջավահիրին, աչքերը ոլորելով)։ *Էյ, չար Յուլիանոսներ, գլուխներդ քուֆթա կըշինեմ եթէ Մանիշակիս երեսին խօսէք, կամ նեղացնէք նրան։ Գնանք, ուստա Ոսկան։* (Գնում է աջ կողմի դռներով)։

ՈՍԿԱՆ (գնում է աջ կողմի դռներով Գիժ-Դանիէլի հետ)։

ՍՕՆԱ (աչքերը սրբելով, գնում է խորքի ձախակողմեան դռներով)։

ՏԵՍԻԼ IX

ՋԱՌՆԻՇԱՆ, ՇՈՒՇԱՆ ԵՒ ՋԱՎԱՀԻՐ

Լռութիւն, ակոթում։

ՋԱՎԱՀԻՐ (Շուշանին)։ *Նստիր, խնամի։*

ՇՈՒՇԱՆ (վշտացած)։ *Էհ, դրանից յետոյ էլ ինչ նստեմ։ Մնաք բարով։* (Քայլերն ուղղում է դէպի աջ կողմի դռները)։

ՋԱՌՆԻՇԱ. *Սպասիր, բան ունիմ ասելու։* (Ջավահիրին)։ *Դու գնա երեխաներիդ մօտ։*

ՋԱՎԱՀԻՐ. *Լաւ հարս բերեցինք մեր տունն, լաւ խնամիներ ձեռք բերեցինք, ինչ ասել կուզի։* (Գնում է աջակողմեան դռներով)։

ՏԵՍԻԼ X

ՋԱՌՆԻՇԱՆ ՇՈՒՇԱՆ, ՅԵՏՈՅ ՋԱՎԱՀԻՐ

ՋԱՌՆԻՇԱՆ. *Նստիր։* (Նստելով թախթի վրայ, Շուշանին ֆթախոց է առաջարկում)։ *Լաւ, մի նեղանար, ինչ որ պատահեց, պատահեց։ Խօսենք մի աւելի մեծ ցաւի մասին։*

ՇՈՒՇԱՆ (նստել է, ֆթախոց վերցրել։ Ցրցցում է)։ *Մեծ ցաւի՞։ Ի՞նչ ցաւ։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Խնամի, ասում են, որ աղջիկդ ցաւագար է։*

ՇՈՒՇԱՆ (գունատելով)։ *Ասո՞ւմ են։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Այո, ասողն էլ մէկը չէ, երկուսը չէ։ Մի քանի տեղերից ենք լսել։*

ՇՈՒՇԱՆ. *Զորանայ ասողի լեզուն։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Իհարկէ, չորանայ, եթէ սուտ է։*

ՇՈՒՇԱՆ. *Սուտը սատանայից է, ճշմարտութիւնն Աստծուց։*

ՋԱՌՆԻՇԱՆ *Դա մի խօսք չէը, որ ասացիր,*

Խնամի, հարցիս կարճ-կարաւկան պատասխան տուր. աղջիկդ ընկնաւո՞ր է։

ՇՈՒՇԱՆ. Դէ ինչ պատասխանեմ, խնամի, մի ամիս է նա ձեր տանն է, ընկնո՞ղ է այդ մի ամսւայ մէջ։

ՋԱՌՆԻՇԱՆ. Գոհութիւն Աստծու, դեռ չենք տեսել։

ՇՈՒՇԱՆ. Յոյս երկնաւորից, որ չէք էլ տեսնել։ Զար լեզուները ուր չեն բամբասում։

ՋԱՌՆԻՇԱՆ. Աստենք այդ էլ ճշմարիտ է։ Մեր քաղաքում բաղդաւոր կանանց մասին ինչ սուտ տասս-տարածում են։ Ամենքը նախանձում են աղջկադ, որ իմ տանն է արժանացել։ Ուրեմն, սուտ է։ փառք Աստծու. հիմա հանգիստ կարող եմ քնել։ Դէ, մարդուդ համար կընկերես։ Ինքդ էլ տեսար, որ նա ինքը մեզ անպատւեց։

ՇՈՒՇԱՆ. Այդ մէկը բաշխեցէք, կաշխատեմ, որ նա այս տունը ոտ չդնէ։ (Վեր է կենում)։

ՋԱՌՆԻՇԱՆ. Մնացիր մեզ մօտ ճաշելու։

ՇՈՒՇԱՆ. Շնորհակալ եմ, խնամի, գնամ։ Մնաս բարով։ (Քայլերն ուղղում է դէպի աջ կողմի դռները։ Լսելով հարեւան սենեակից ճչի ու թրմփոցի ձայն, կանգ է առնում, ցրնցելով)։ Ա՜հ։

ՋԱՌՆԻՇԱՆ. Այդ ո՞վ էր, ի՞նչ պատահեց։

ՇՈՒՇԱՆ (ետապ քայլերով գնում է խորհի ձախակողմեան դռներով)։

ՋԱՌՆԻՇԱՆ (վեր է կենում, մօտենում է խորհի աջակողմեան դռներին)։ *Ջավահիր, Ջավահիր։*

ՋԱՎԱՀԻՐ (գալիս է ետապով խորհի աջակողմեան դռներով)։ *Ի՞նչ պատահեց։*

ՋԱՌՆԻՇԱՆ (ցոյց տալով խորհի ձախակողմեան դռները)։ *Կարծեմ, ձայնն այնտեղից եկաւ։*

ՋԱՎԱՀԻՐ (ետապ քայլերով գնում է խորհի ձախակողմեան դռներով եւ ետս չանցած յետ է գալիս մի չարախինդ ծիծաղով)։

ՋԱՌՆԻՇԱՆ (մնալով մենակ, անհարժ կանգնած է բեմի կենտրոնում)։ *Սիրտս կասկած ընկաւ։* (Չաւանիրին)։ *Ի՞նչ է պատահել։*

ՋԱՎԱՀԻՐ. Գնա, ինքդ տես։

ՋԱՌՆԻՇԱՆ (գնում է խորհի ձախակողմեան դռներով եւ իսկոյն յետ է գալիս։ Գունատ, տանջանքով)։ *Տունը քանդո՞ւի տունս քանդողի, այդ ինչ եղաւ։*

ՋԱՎԱՀԻՐ. (չարախինդ)։ *Տեսա՞ր, դէ հիմա էլ ասա, որ լեզուս չար է։ Տէր, փառք քեզ, որ ինձ սևերես չըթողեցիր։*

ՋԱՌՆԻՇԱՆ. Բերանը փրփուր է կապել։ կապաել է, խրխռում է։ Ինչ անեմ հիմայ, Տէր Աստուած, ինչ պատասխան տամ որդուս։

ՋԱՎԱՀԻՐ. Ինչի՞ դու պիտի պատասխան տաս կամ ես։ Մեղաւորն ինքն է. ուզեց ան-

պատճառ պսակվել մի ընկնաւորի հետ և պսակուեց։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ինչ իմանար խեղճ տղան, ինչ իմանար։ Դէ, գնա, մի մարդ ուղարկիր, որ նրան կանչէ այստեղ։

ՋԱՎԱՀԻՐ. Պէտք է կանչել, իհարկէ։ Թող գայ, ինքն իւր աչքով տեսնէ։ (Գնում է աջ կողմի դուռերով եւ իսկոյն յետ է գալիս)։

ՋԱՌՆԻՇԱՆ (նորից մօտենում է խորհի ձախակողմեան դուռերին, նայում է ու յետ է գալիս)։ Ուշքի է գալիս։

ՋԱՎԱՀԻՐ. Հէնց առաջին օրը, որ նրան տեսայ իրանց տանը, սիրտս կապած ընկաւ։ Նրա սպրանած դէմքը, մաթ մաթ աչքերն ինձ վախեցրին։ Ես ամեն օր կարապետին ասում էի. այդ կնիկը մի ցաւ ունէ, մի ցաւ ունէ։ Նա բարկանում էր վրէս ու ասում. «լեզուս կարճ պահիր»։ Դէ հիմա թող նա էլ իմանայ։

ՋԱՌՆԻՇԱՆ (յուսահատորէն)։ Զար ոգին տուննա մտաւ, գուբ չէին իմ խառն երազները։

ՋԱՎԱՀԻՐ. Հիմա ամեն ինչ տակն ու վրայ է լինելու այս տանը։ Աստուած ինքը մեզ փրկէ ու ազատէ։ (Մօտենում է խորհի ձախակողմեան դուռերին, նայում)։ Գլուխը բարձրացրել է, պլոզ աչքերով դէս ու դէն նայում։ Մայրը, մօտը չոքած, լաց է լինում։

ՋԱՌՆԻՇԱՆ. Կանչիր նրան այստեղ։

ՋԱՎԱՀԻՐ (դէպի խորհի ձախակողմեան սենեակը)։ Համեցէք, խնամի, համեցէք, սկեսուրս կանչում է։ (Գալիս է բեմի կենտրոնը, դէպի խորհը, միշտ չարախինդ ժպիտն երեսին)։

ՏԵՍԻԼ XI

ՆՈՅՆՔ, ՇՈՒՇԱՆ եւ ՄՈՒՐԱԴ

ՄՈՒՐԱԴ (միջնէն Շուշանի երեւալը, գալիս է շտապով աջ կողմի դուռերով)։ Ի՞նչ է պատահել։

ՋԱՎԱՀԻՐ. Կնիկդ ընկնաւոր է։

ՄՈՒՐԱԴ (սարսափած)։ Ընկնաւո՞ր։

ՋԱՌՆԻՇԱՆ. Գնա տես, որդի։ Այնտեղ է, իւր սենեակում։

ՄՈՒՐԱԴ (շտապով գնում է խորհի ձախակողմեան դուռերով)։

ՇՈՒՇԱՆ (երեւում է խորհի ձախակողմեան դուռերի մէջ։ Գունատ է, ընկճուած, հազիւ խոյերը փոխում է)։

ՋԱՌՆԻՇԱՆ (խորհին դառը կշտամբանքով ու հեգնութեամբ)։ Բաղդաւոր աղջկայ բաղդաւոր ծնողին փառք ու պարծանք։ Բարով հաղար բարի, այ խնամի։ Մօտեցիր, փէշերդ համբուրենք, գլխիդ վարդաջուր ածենք, ոտներիդ հինայ գնենք, ուսերիդ քիրմանի շալ գցենք, ա-

ռաջդ խունկ ծխենք, այ մեր աչքի լոյս խնամի... Աղջիկդ մարգարիտա է մարգարիտների մէջ, ալմազ ու բռիլիանտ Նաադիր-շահի թագին արժանի, այ մեր աչքի լոյս խնամի։ (Դառը ճեղճական ծիծաղ)։ *Փահ, երես ունիս Աստծու առկին մարիկ անելու, փահ, տափը պատառ-պատառ չի լինում, որ քեզ կուլ տայ, ոտդ դրած տեղն օձ չի բուսնում, որ քեզ խածի, կերակուրդ պղու լեղի չի դառնում, որ չիգարդ դադի, մարմինդ չի փթում ու կորո-կորո թափում աչքերիդ առաջ։*

ՇՈՒՇԱՆ. *Տէր, մեղայ քեզ, Տէր, մեղայ քո ղօրութեանդ։*

ՋԱՌՆԻՇԱՆ (*շարունակում է աւելի մեծ յուզմունքով*): *Այսաոռակի կնիկ խայտառակ, ինչո՞ւ մեզ խայտառակեցիր արար աշխարհում։ Ո՞րտեղ էր խիղճդ, աներես, ո՞րտեղ էր հոգիդ, անամուսած, ո՞րտեղ էր ամօթդ, անմեռոն։ Ո՞ր շունն էր կռծոտել, ո՞ր կատուն էր լիզել։ Ինչո՞ւ մեր բաղդաւոր տունն անբաղդացրիր, ինչո՞ւ մեր պայծառ օրը սևացրիր, սևերես...*

ՇՈՒՇԱՆ. *Կրակ դառնար երկինքը, թափուէր նրա մօր գլխին։*

ՋԱՎԱՀԻՐ. *Մենք էլ ասացինք, որ չահել—սիրուն հարս ենք բերել, ուրախանանք։ Հերիք չէ, որ թոռիրները լպստոդի ու անպատկառ հարբեցոդի խնամիները դարձանք, հիմա էլ պիտի*

նրանց ցաւագար ակջկան ծառայենք։ Աչքներս լոյս։

ՋԱՌՆԻՇԱՆ. *Չէ, Ջավահիր, այդ չի լինիլ, չեմ թողնիլ։* (Շուռանին)։ *Էհնց այսօր, հէնց այս րոպէիս վերցրու աղջկադ ու տար քո տունը։ Տար, ասում եմ, ես դիւահարին իմ տանը պահել չեմ կարող։*

ՇՈՒՇԱՆ. *Լաւ, կըտանեմ։* (Քայլերն ուղղում է դէպի ձախակողմեան դուռերը)։

ՄՈՒՐԱԴ (*երեւում է խորհի ձախակողմեան դուռերի մէջ։ Վշտահար է, գունատ, բայց վրնռական*)։ *Կաց։ Ոչ ով իրաւունք չունէ իմ կնոջ մասին կարգադրութիւններ անելու։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Ո՛րդի։*

ՇՈՒՇԱՆ (*քաշւում է մի կողմ եւ ակնածութեամբ նայում Մուրադին*)։

ՄՈՒՐԱԴ. *Այո, ոչ ոք իրաւունք չունէ, բացի ինձնից։ Հարսն իմն է և միայն ես կարող եմ անել նրա դատը։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Մեր ամենքի դատն Աստծու ձեռքումն է, բայց ես մայր եմ, չեմ թողնիլ, որ իմ որդին ապրի մի դիւահարի հետ։*

ՄՈՒՐԱԴ (*մօտենում է, խոնարհւում եւ պատկառանքով համբուրում Ջառնիշանի ձեռը*)։ *Մայր, որդին պարտաւոր է խոնարհւել իւր ծնողներին։ Մինչև օրս ես քո կամքին չեմ հակառակել և չեմ էլ հակառակելու։ Բայց այս*

անգամ ինձ ներիր։ Եթէ նա ինձ համար պատուհաս է, ես ուզում եմ այդ պատուհասը տանել անտրտունջ։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ուրեմն, չե՞ս ուզում դիւահարից բաժանուել։

ՄՈՒՐԱԴ. Ոչ։

ՋԱՎԱՀԻՐ. Ջե՞ս ուզում քեզ ու մեզ ազատել տանջանքից։

ՄՈՒՐԱԴ. Ոչ։ Անբաղդութիւնն իմն է և տանջուողը միայն ես եմ լինելու։

ՋԱՎԱՀԻՐ. Բայց մեր տունը չար ոգի է մտել, նա ամենքիս պիտի անբաղդացնի։

ՄՈՒՐԱԴ. Նա չար ոգի չէ, նա մի անբաղդ հիւանդ է։ Ամօթ է հիւանդին հալածելը։

ՇՈՒՇԱՆ (մեկուսի)։ Օրհնւիս դու, որդի, օրհնւիս։

ՏԵՍԻԼ XII

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՕՆԱ

ՍՕՆԱ (երեւում է խորհի ձախակողմեան դռների առջեւ։ Թոյլ է, գունատ, շարժւում է ուրուականի պէս)։

ՋԱՌՆԻՇԱՆ (Սօնային)։ Անիծւի քո ծնունդը, չորանար քո մօր արգանդը, որ քեզ լոյս աշխարհ չբգեցէր։

ՄՈՒՐԱԴ (վշտով)։ Մայր, մի՛ անիծիր նրան, մի՛ անիծիր, եթէ չես ուզում ինձ էլ նրա հետ անիծել։

ՋԱՌՆԻՇԱՆ (Շուռանիին) Դուրս կորիր, դուրս, ես չեմ կարող քո երեսը տեսնել։

ՄՈՒՐԱԴ. Մայր, մի՛ սպառիր համբերութիւնս, ապա թէ ոչ ով գիտէ ինչ կարող է պատահել։ (Շուռանիին)։ Գնա, մայրիկ, գնա տունդ։ Ոչ ոք չի համարձակւիլ քո աղջկայ գլխի մի մազին անգամ դիպչելու։

ՇՈՒՇԱՆ (Գնում է աջ կողմի դռնեռով)։

ՄՈՒՐԱԴ (Սօնային)։ Գնանք մեր սենեակը, Սօնա։ Դու պէտք է հանգստանաս։ (Սօնայի թեւից բռնած՝ տանում է խորհի ձախ դռնեռով)։

ՋԱՌՆԻՇԱՆ (Յուսահատ)։ Կախարդել են որդուս, կալել—կապել են նրան դևերը...

(Նստում է թուլացած, ձեռները ծնկներին զարկելով)։

ՋԱՎԱՀԻՐ (կատաղի հայեացքով ուղեկցել Սօնային)։

ՎԱՐԱԴՈՑ

ԱՐԱՐԻԱԾ ՉՈՐՐՈՐԴ

*Նոյն տեսարանը, ինչ որ III Արարուածում միայն ծմեռուայ պատճառով սենեակի կենտրոնում դրած է քրսին *)։*

Ժամ է, դրսում սաստիկ ցուրտ։ Ձիւն է գալիս։

ՏԵՍԻԼ I

ՉԱՎՉԱՀԻՐ եւ ՉԱՌՆԻՇԱՆ

*ՉԱՎՉԱՀԻՐ (*վարագոյրը բարձրացնելիս շտապով գալիս է խորհի աջակողմեան դուռերով)։ *Սկեսուր։* (Նայում է աջ ու ձախ)։ *Ո՞ւր գնաց։*

*) Քրսին ասիական վառարան է։ Երկու արշին լայնութեամբ և երկայնութեամբ մի քառակուսի է նստարանի պէս։ Ձմեռը սենեակի կենտրոնում փորում են նոյն չափի մի փոս, այդ փոսի մէջ մի ուրիշ փոքրիկ փոս։ Քառակուսին գնում են մեծ փոսի մէջ, փոքր փոսի մէջ ածում են վառ ածուխ։ Քառակուսին ծածկում են նախ տաք վերմակով, ապա կապերտով։ Տնեցիները և հիւրերը նստում են նրա քով, ոտները գնելով մեծ փոսի մէջ ու տաքանում։ Քրսինը ձմեռը ծառայում է և իբրև ճաշի սեղան։ Ներկայումս ամենուրեք քրսինին փոխարինում է եւրոպական վառարանը։

Ծ. Հ.

*(*Մօտենում է խորհի ձախակողմեան դուռերին)։ *Սկեսուր, այդտե՞ղ ես։* (Յուզած է, անհամբեր շարժումներ է անում)։

ՉԱՌՆԻՇԱՆ (գալիս է խորհի ձախ դռներով)։ *Հը՛ը, էլի ի՞նչ է պատահել։*

ՉԱՎՉԱՀԻՐ. *Տունս քանդուում է, սկեսուր։ Երեխաս տաքութեան մէջ այրուում է, մին ճար ասա, որ անեմ։*

ՉԱՌՆԻՇԱՆ. *Դալլաք կանչել տուր, թող գլխից արիւն առնէ կամ վզին տզրուկներ կըպցնէ։*

ՉԱՎՉԱՀԻՐ. *Էէ, դու էլ դալլաք, դալլաք։ Իմ երեխան չի առողջանալ քանի որ չար ոգին այս տանն է։*

ՉԱՌՆԻՇԱՆ. *Անիծվի նա։ Գլուխս կորցրել եմ, չը գիտեմ ի՞նչ անեմ, ում դիմեմ։ Այն անիծուած չոլաք Միանսաղն էլ ամեն օր գալիս գնում է, մի բան չի կարողանում անել։*

ՉԱՎՉԱՀԻՐ. *Ես հազար անգամ ասել եմ, էլի ասում եմ. կախարդուհի Միանսաղը իւր հնարքներով մեզ օգնել չի կարող։ Չար ոգու ճարը մէկ է ու մէկ, ուրիշը չկայ։ Եկ, քարը փէշիդ թափիր, թող, որ անենք։* (Աջ ու ձախ նայելով, դուրս է բերում գրպանից թղթի մէջ փաթաթած մի կտոր մկնդեղ եւ ցոյց է տալիս)։ *Այ, տես, պատրաստէ։*

ՉԱՌՆԻՇԱՆ. *Այդ ի՞նչ է։*

ՉԱՎՉԱՀԻՐ. *Մկնդեղ։*

ՋԱՌՆԻՇԱՆ (վախեցած)։ *Հեռացրու աչքիցըս։ Դու ուզում ես, որ Մուրադը քեզ էլ ինձ էլ կենդանի կենդանի թաղի։*

ՋԱՎԱՀԻՐ (ճամոզիչ եղանակով)։ *Սկեսուր։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Ոչ ոչ, այդ անկարելի է։*

ՋԱՎԱՀԻՐ. *Մուրադը չի իմանալ, ոչ ոք չի իմանալ, հաւատա։ Տես, ասեմ. միանգամից չենք տալ, ամեն օր քիչ քիչ կըզցենք կերակրի մէջ, կուտէ, օր օրի վրայ կըհալուի և մի օր, վերջապէս, մենք էլ կազատուենք, ինքն էլ։ Նրա համար մեռնելն ապրելուց լաւ է։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Ես հոգուս վրայ այդպիսի մեծ մեղք վերցնել չեմ կարող, թող ինձ։*

ՋԱՎԱՀԻՐ. *Դու մի՛ վերցնիլ, ես կըվերցնեմ։ Դու միայն իրաւունք տուր ինձ։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Չեմ կարող, չեմ կարող։ Դեռ թող տեսնենք Միանսոգն ինչ է անում։ Եթէ այսօր էլ նրա թիւլիսմը չօգնի, ուրիշ հնար կը գտնենք չարից ազատուելու համար։*

ՋԱՎԱՀԻՐ. *Լաւ, դու գիտես։* (Մկնդեղը դնում է գրպանը)։ *Դէ, դու գնա երեխաների մօտ, նրանք մենակ են։ Ես ուզում եմ հիւանդի համար շօրվա եփել։*

ՋԱՌՆԻՇԱՆ. *Գնում եմ։ Աստուած ինքը մեզ փրկէ ու ազատէ։* (Գնում է խորհի աջակողմեան դռնեռով)։

ՋԱՎԱՀԻՐ (ձեռով սպառնալով դէպի Մուրադի ու Սօնայի սենեակը)։ *Օօ, Յուդայի ծըննունդ, ես Ջավահիրը չեմ լինի եթէ քեզանից չազատուեմ։* (Գնում է աջ կողմի դռնեռով)։

ՏԵՍԻԼ II

ՄՈՒՐԱԴ ԵՒ ՍՕՆԱ.

ՄՈՒՐԱԴ (գալիս է խորհի ձախակողմեան դռնեռով։ Նիհարել է, գունատել)։ *Ես քեզ ասում եմ՝ ոչ մի խօսք այդ մասին ու ոչ մի խօսք։ Իմ վճիռը հաստատ է։*

ՍՕՆԱ (գալիս է Մուրադի հետից խորհի ձախակողմեան դռնեռով)։ *Աղաչում եմ, Մուրադ, պաղատում եմ. լսիր մօրդ խօսքը, արձակիր ինձ, որ գնամ ծնողներիս տունը։ Ես չեմ ուզում ոչ քեզ տանջել և ոչ էլ քո մերձաւորներին։*

ՄՈՒՐԱԴ. *Այս տանը ոչ ոք չի տանջւում, բացի քեզնից։*

ՍՕՆԱ. *Աա, ոչ ոք չի տանջւում։ Կարծես, ես կոյր եմ, չեմ տեսնում քո կերպարանքը, խուլ եմ, չեմ լսում քո ծանր հառաչանքները։ Եւ մի՞թէ միայն քո տանջանքն է, որ խիղճս տակն ու վրայ է անում։ Ախ, այս տանն ինչ որ անբաղդութիւն պատահում է, մայրդ, եղբայրդ ու Ջավահիրը պատճառն ինձ են համարում։*

ՄՈՒՐԱԴ. *Շատ սխալւում են, որ քեզ են համարում։*

ՍՕՆԱ. Ոչ ոչ, մի՛ ասա, ունին իրաւունք։ Ես մեղաւոր եմ, ոտքից մինչև գլուխ մեղաւոր եմ, ամենքի առաջ, ամենքի առաջ։ (Աչքերը վեր բարձրացնելով)։ Աստուած իմ, կա՛յ, արդեօք, ինձ համար արժանի պատիժ քո արդար դատաստանում։

ՄՈՒՐԱԴ. Աստուած անգութ է քո վերաբերմամբ։

ՍՕՆԱ (Կրօնական երկիւղածութեամբ)։ Ամա՛ն, Մուրա՛դ, մի՛ ասա այդպիսի խօսքեր, Աստուած կըբարկանայ քեզ վրայ։

ՄՈՒՐԱԴ. Թող բարկանայ, ես չեմ վախենում Նրանից։

ՍՕՆԱ (սարսափով)։ Սուս, սուս, մի՛ անարգիր Նրան, մի՛ անարգիր, ես չեմ կարող լսել այդպիսի խօսքեր։ (Ձեռները դարձեալ դէպի վեր բարձրացնելով)։ Տէր, ներիր նրան, ներիր, ազաչում եմ...

ՄՈՒՐԱԴ (զարմացած)։ Զարմանալի է, զարմանալի. որքան Աստուած անարդար է դէպի քեզ, այնքան դու աւելի պինդ ես բռնում նրա փէշերը։

ՍՕՆԱ (նոյն երկիւղածութեամբ)։ Հոգիդ դժոխքի բաժին մի՛ դարձնիր, Մուրա՛դ։ Նա արդարադատ է։ Նա ամեն մեկին իւր մեղքերի պատիժն է տալիս։

ՄՈՒՐԱԴ. Բայց դու ինչ մեղք ես գործել

երեխայ, որ այդքան խիստ է վարվում նա քեզ հետ։

ՍՕՆԱ (դառը հեգնական ծիծաղ)։ Ինչ մեղք, հա, հա, հա, ինչ մեղք։ Ես մինչև կոկորդս թաղուած եմ մեղքերի մէջ, եւ դեռեւս որն է իմ ամենամեծ մեղքը։

ՄՈՒՐԱԴ. Ո՞րն է։

ՍՕՆԱ. Այն, որ ես իմ ծնողների անից քեզ չըզգուշացրի, որ ցաւագար եմ, Աստծուց պատժուած։ Բայց ինչ անէի, ինչ անէի, քանի որ լեզուս կաշկանդւել էր մօրս պատճառով։

ՄՈՒՐԱԴ. Եւ դու կարծում ես, որ եթէ ես իմանայի քո ցաւագար լինելը, ձեռք կը վերցնէի՞ քեզնից։ Ոչ, Սօնա։ Ես առանց քեզ ապրել չէի կարող։ Ահա, տեսնո՞ւմ ես. դու ինքդ աղաչում ես, որ քեզ արձակեմ, ես չեմ արձակում, որովհետեւ չեմ կարող արձակել, որովհետեւ քեզ սիրում եմ...

ՍՕՆԱ (իւր մտերով կլանուած)։ Մայրս էլ է մեղաւոր։ Նա ասում էր, որ եթէ ես պսակուեմ, կազատուեմ իմ ցաւից։ Ես էլ յիմարի պէս հաւատացի նրան։ Ինչո՛ւ, ինչո՛ւ։ (Մօտենում է լուսամուտներից մէկին եւ, ձեռը դնելով նրա շրջանակի վրայ, գլուխը յենում է իւր թեւին)։

(Բաւական երկարատեւ լռութիւն)։

ՄՈՒՐԱԴ (ծխախոտ է վառել ու ծխելով, անց ու դարձ արել։ Նայում է Սօնային խորին

կարեկցութեամբ։ Մեկուսի)։ *Խե՛ղճ Սօնա, խեղճ Սօնա։* (Հանդարս fայլերով մօտենում է Սօնային)։ *Ինչի՞ մասին ես մտածում։*

ՍՕՆԱ. (չի լսում)։

ՄՈՒՐԱԴ. Սօնա՛։

ՍՕՆԱ. (չի լսում)։

ՄՈՒՐԱԴ (ձեռը դնում է Սօնայի ուսի վրայ)։ *Սօնա՛։*

ՍՕՆԱ. (ցնցւում է ու գլուխը բարձրացնում)։ *Ա՜հ։*

ՄՈՒՐԱԴ. Ինչո՞ւ վախեցար։

ՍՕՆԱ. Այդ դո՞ւ ես։

ՄՈՒՐԱԴ. Ես եմ։ Ուրիշ մարդ չըկայ այստեղ։ Էլի մոռացար ինձ։

ՍՕՆԱ (ձակատը շփելով)։ *Ոչ ոչ, ուրիշ ձայն լսեցի։ Ինձ թւաց, որ կատուրի վրայով սայլեր անցան։ Ա՜հ, ականջներս, ականջներս, նըրբանք միշտ ձայներ են լսում, տարօրինակ ձայներ։ Ա՜հ, գլուխս, գլուխս, ցաւում է, յոգնել է։ Բայց ոչինչ, ոչինչ, չարժէ մտածել։* (Լուսամըտից տեսնում է Գիժ-Դանիէլին եւ ուրախութեան թերեւ նիչ է առնում)։ *Ա՜հ։*

ՄՈՒՐԱԴ. Ի՞նչ տեսար։

ՍՕՆԱ. Նա գալիս է, գալիս է։

ՄՈՒՐԱԴ. Ո՞վ է գալիս։

ՍՕՆԱ. Սուրբը, սուրբը։

ՄՈՒՐԱԴ (զարմացած)։ *Սո՞ւրբը։*

ՍՕՆԱ. (ոգեւորւած)։ *Նա սուրբ է, Մուրադ։ Մենք ամենքս մեղաւորներ ենք, նա է միայն արդար։ Լսիր, լսիր, հրեշտակները նրա հոգին կըվերցնեն իրանց ճերմակ թեւերի վրայ, կըտանեն դէպի արքայութիւն։ Սիրիր նրան, պաշտիր, եթէ չես ուզում բարկացնել երկնաւորին։ Գնանք առաջ նրան ընդունելու։* (Գնում է դէպի աջ կողմի դուռերը)։

ՄՈՒՐԱԴ (ապշած)։ *Տէր Աստուած, ինչեր է խօսում, ոչինչ չեմ հասկանում։* (Հետեւում է Սօնային)։

ՏԵՍԻԼ III.

ՆՈՅՆՔ ԵՒ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (երեւում է աջ կողմի դռների մէջ։ Աւխալուխի վայ հագել է պատռտված չուխայ։ Գլխաբաց է, չըճայելով ձիւնին եւ ցրտին։ Ձեռին բռնած է մի հաստ գաւազան)։

ՄՈՒՐԱԴ. Դա հօրեղբայրս է, ինչ սուրբ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (հանդիսաւոր)։ *Օրհնութիւն այս տանը, Աստծոյ օրհնութիւնը, երկնքից, երկնքից։* (Գլուխ է տալիս, ձեռը կրծքին սեղմելով)։ *Բարով Լէյլիին, բարով Մեաջնունին։ Թող սէրը լինի ձեր պահապան հրեշտակը։*

ՄՈՒՐԱԴ. Շնորհակալ եմ, հօրեղբայր։

ՍՕՆԱ (խնամով ու սիրով)։ *Առաջ եկ, ա-*

ռաջ եկ, սուրբ մարդ, դուրսը ցուրտ է, նստիր քրսինի տակ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (երկու ձեռներով յենւում է գաւազանի վրայ)։ *Այնտեղ էի։*

ՄՈՒՐԱԴ. Ո՞րտեղ, հօրեղբայր։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Մէյսարիում։ Ուխտի էի գընացել։

ՍՕՆԱ. Այդ ցրտին։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Ասլան Դանիէլի համար ցուրտ չըկայ, ձիւն չըկայ, սառոյց չըկայ։ Նա ձմեռը այրւում է, ամառը սառչում, քար դառնում։ Էյ, հարիֆ Մուրադ, ինձ լսիր. կուրծքս խփեցի Մանիշակիս գերեզմանի քարին, ձայն բարձրացրի ու ասացի. «Ֆարհադ, դատաստանդ ո՞րտեղ է։

ՍՕՆԱ (ինտաfրfրւած)։ *Ի՞նչ պատասխանեց Ֆարհադը։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (գլուխը բարձրացնելով)։ *Նա ասաց. «իմ դատաստանը երկնքումն է, Մանիշակիդ ձեռքում։ Լսիր նրան, լսիր, Դանիէլ։ Նա քեզ ամեն բան կասէ»։ Մուրադ, Մուրադ, բալա ունէի, կորցրի, եօթ տարի անցաւ, դուայ նրան։ Նա ընկած էր հողի վրայ, երեսը կապտած, բերանը փրփուր կապած, խրխռում էր։ Վերցրի. այ այսպէս, կրծքիս սեղմեցի։ (Գաւազանը սեղմում է իւր կրծքին)։ Ուխտ տարի պահեցի, պահպանեցի, աւեցի քեզ։* (Սօնային)։ *Գիտեմ, բարձրացել էի Ղըզ-Ղալասիի գլուխը, այնտեղից տեսայ ձեր կտուրը ձիւնով ծածկւած։ Այ, ասացի, նրա տակն են ապրում իմ գաւակները։*

ՄՈՒՐԱԴ (զգացւած)։ *Այո, հօրեղբայր, ես և՛ Սօնան քո գաւակներն ենք։*

ՍՕՆԱ. (մի տեսակ ինքնամոռացութեան մէջ)։ *Սուրբ մարդ, սուրբ մարդ...*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Լսեցէք, լսեցէք. գիշերները արիւնոտ երազներ եմ տեսնում։ Շատ դևերն ինձ տանում են թուրքերի գերեզմանատունը, գաւազանս խլում են, ինձ գցում են գետնի վրայ ուզում են խեղդել։ Մանիշակս ձեռները ծոցին դրած, լաց է լինում, հաց է ուզում, պանիր ուզում, խաղող ուզում։ Նա շատ էր սիրում։ Ձեն թողնում բալիս ագատեմ, չեն թողնում։ (Լալիս է առանց արցունքի)։

ՍՕՆԱ (խոռապէս զգացւած)։ *Նա լաց է լինում, իմ արտասուքն էլ գալիս է, սուրբ մարդ, սուրբ մարդ, տուր ձեռդ համբուրեմ։* (Ուզում է Գիժ-Դանիէլի ձեռը համբուրել)։

ՄՈՒՐԱԴ (դառնութեամբ, կըտամբանքով)։ *Ի՞նչ ես անում, ինչ ես անում, Սօնա։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (չի թողնում, որ Սօնան իւր ձեռը համբուրէ, գրկում է նրա գլուխը, ծոյում է նրա մազերը)։ *Մանիշակս, Մանիշակս, քեզ ուզում են դուրս անել այս տնից։ Ուզում են,*

որ դու էլ իմ օրն ընկնես, փողոցներում, դաշտերում, ձորերում, ոտաբոբիկ, գլխաբաց…

ՄՈՒՐԱԴ (զգացմունքով)։ Ոչ ոք նրան իմ անից չի կարող դուրս անել, ոչ ոք։

ՍՕՆԱ (սիրով փաւելով Գիժ-Դանիէլին, ինչպէս հարազատ հօրը)։ Նրանք ասում են, որ ես չար ոգի եմ։ Այո՛, սուրբ մարդ, ես չա՛ր եմ, ասա՛։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (բաց է թողնում Սօնայի գլուխը)։ Պատառ պատառ կանեմ սուտ ասողներին։ Էյ, Մուրատ, պահպանիր, դրան, խեղճ եմ, ոչ ոք չունիմ, ոչինչ չունիմ, բացի սրանից։

ՄՈՒՐԱԴ. Կըպահպանեմ, հօրեղբայր, կըպահպանեմ։

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Եթէ չես պահպանիլ, աչքերս կըհանեմ ասեղներով, կըկուրացնեմ։ Կըվերցնեմ գաւազանս, ձեռս կըդնեմ Մանիշակիս ուսին։ Նա ինձ կըտանէ եկեղեցիները, մատուռները, ուխտատեղերը։ Մենք միասին ազօթք կանենք չար մարդկանց հոգու փրկութեան համար։

ՍՕՆԱ (խորին ոգեւորութեամբ)։ Ինչ լա՛ւ ասացիր, սուրբ մարդ, ինչ լա՛ւ ասացիր։ Օօ, հոգիս զարթնացաւ, աչքերս բացուեցին, մէկ էլ ասա, մէկ էլ ասա։ Գնանք, գնանք, ես գալիս եմ քեզ հետ։ (Բռնում է Դանիէլի թեւը)։

ՄՈՒՐԱԴ (ատելի զարմանալով)։ Ո՞ւր ես գնում, Սօնա, ինչ ես անում, ուշքի եկ…

ՍՕՆԱ (բաց թողնելով Գիժ-Դանիէլի թեւը, Մուրադին)։ Սուս, դու ոչինչ չըգիտես, դու մոլորած ես։ (Խորին էֆսազում)։ Օօ, Դանիէլ ապեր, դու մարգարէ ես, քո բերանով Աստուած ինքը խօսեց։ Այո, պէտք է գնալ եկեղեցիները, ուխտատեղերը, մատուռները, պէտք է գիշեր ցերեկ պատել սրբերի մէջ, աղօթել, աղօթել, միշտ աղօթել, ծնկաչոք, ձեռներս վեր բարձրացրած։ Գիտես, ես երեկոները արթուն աչքերով տեսնում եմ բոլոր սրբերին, ճերմակ զգեստներով, երկայն մազերով, սպիտակ, սպիտակ, ինչպէս ամպերի քուլաները։ Նրանք շարէշար կանգնած երգում են, այնքան քաղցր, այնքան անուշ ձայներով։ Գնանք նրանց մօտ, նրանք ինձ կանչում են, քեզ էլ, քեզ էլ, սուրբ մարդ։ Դու նրանցից մէկն ես։ Դու ինձ կըտանես դրախտ, դու ինձ կազատես իմ ծանր մեղքերից։ Յետոյ մենք միասին դրան էլ կազատենք, մօրն էլ, եղբօրն էլ, ամենքին, ամենքին, ամենքին…

ՄՈՒՐԱԴ (յուսահատօրէն, մեկուսի)։ Ողորմած Տէր, նա խելագարւում է, ի՞նչ անեմ։

ՍՕՆԱ (գլուխը բարձրացնելով, ականջ է դնում)։ Այ, ես ձայները լսեցի։ Նրանք են, երգում են, երկնային թռչուների առջև շարէ շար կանգնած, փառաբանում են նրա անհուն գութիւնը։ Ես տեսնում եմ նրանց, այ, այնտեղ են։ Նրանք ինձ կանչում են։ (Բարձր)։ Գա-

լինի եմ, գալիս եմ։ (Դանիէլին)։ *Գնանք, հեռանանք այստեղից։ Ազատենք ամենքին։ Տար ինձ, տար ինձ, սուրբ մարդ։ Բայց սպասիր, Թող շալս վերցնեմ։ Իսկոյն, իսկոյն։* (Քայլերն ուղղում է դէպի խորհի ձախակողմեան դռները)։

ՄՈՒՐԱԴ (գրգռած)։ *Սօնա, սպասիր, կանգ առ։*

ՍՕՆԱ (կանգ է առնում աճապարժ, արձագացած)։

ՄՈՒՐԱԴ (մօտենում է Սօնային)։ *Ուշքի եկ, աղաչում եմ հանգստացիր։*

Լռութիւն։

ՍՕՆԱ (ճակատը տրորում է, ուշքը ժողովում)։ *Աա, ինչ։ Ես ինչ էի ուզում անել։ Ուր էի գնում, Այս, գլուխս, գլուխս, ոչինչ չեմ յիշում, ոչինչ։* (Գլուխը շփելով)։ *Ծանր է, ծանր է, արճիճի պէս։*

ՏԵՍԻԼ IX.

ՆՈՅՆՔ եւ ՋԱՌՆԻՇԱՆ, ՅԵՏՈՅ ՋԱՎԱՀԻՐ

ՋԱՌՆԻՇԱՆ (երեւում է խորհի աջակողմեան դռների մէջ։ Գրգռած է եւ այլայլած)։ *Ի՞նչ էք անում դուք այստեղ։* (Գիժ-Դանիէլին)։ *Է՞լի ինչու ես եկել. ինչո՞ւ ես գալիս ամեն օր։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (գաւազանը պատի տակից վերցնելով)։ *Զար դևը, չար դևը։*

ՋԱՌՆԻՇԱՆ. Հեռացիր, Թող մեզ հանգիստ։

ՄՈՒՐԱԴ. Մայր մի՛ մոռանար, որ նա իմ հօրեղբայրն է։

ՋԱՌՆԻՇԱՆ. Սուս, դու ոչինչ չըգիտես։ Նրան հացթուխն է ուղարկում ամեն օր։ (Սօնային մեծ գրգիռով)։ *Ահ, կրակն ընկնես դու, ինչպէս մեզ կրակը գցեցիր։*

ՍՕՆԱ (լուռ, ընկճուած, նայում է գրած հայեացքով)։

ՋԱՎԱՀԻՐ (գալիս է աջ կողմի դռներով, արխալուղի ծալած թեւերն ուղղելով)։ *Էլի գիժը։ Ամեն օր գալիս է ու մեզ վախեցնում իր գաւազանով։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ. Օօ, չար Յուլիանոս, Սաթայէլի բերք, պատառ պատառ կանեմ, հում-հում կուտեմ։

ՍՕՆԱ (աղերսով)։ *Գնա, Դանիէլ ապեր, գնա։*

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (հպատակելով)։ *Հա, բալաս, գնում եմ, գնում եմ։* (Նայելով Սօնային հայրական գուրգուրանքով, գնում է աջ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ V

ՆՈՅՆՔ, ԱՒԱՆՑ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼԻ

ՍՕՆԱ (կանգնած է միեւնոյն տեղում արձանացած։ Գրգռումից յետոյ ռէակցիա)։

ՋԱՌՆԻՇԱՆ (տակաւին յուզած)։ Եւ դու պիտի ապրես դրա հետ, պիտի ապրես մի տան մէջ։

ՄՈՒՐԱԴ. Այո, պիտի ապրեմ մինչեւ մահս։ Երդուել եմ Աստծու տաճարի առջեւ։

ՋԱՎԱՀԻՐ (նոյնպէս գրգռուած է)։ Մտիկ արա ինչքի է նման։ Սառել է, քարացել ոտքի վրայ, նա կենդանի դիակ է։

ՄՈՒՐԱԴ. Նա իմ կինն է, իմ սէրը, իմ կեանքը։ (Մեղմ խնամքով)։ Գնա, Սօնա, գնա սենեակդ, հանգստացիր։ (Բռնում է Սօնայի թեւից եւ տանում դէպի խորհի ձախակողմեան դռները)։

ՍՕՆԱ (մեքենաբար հետեւում է Մուրադի հրամանին եւ գնում խորհի ձախակողմեան դռներով)։

ՏԵՍԻԼ VI

ՆՈՅՆՔ առանց ՍՕՆԱՅԻ

ՋԱՌՆԻՇԱՆ (ուղեկցել է Սօնային ու Մուրադին տխուր հայեացքով, գլուխը վշտաւոր շարժելով)։

ՋԱՎԱՀԻՐ (ուղեկցել է Սօնային աստղութեամբ լի հայեացքով)։

ՄՈՒՐԱԴ (վերադառնալով բեմի կենտրոնը)։ Դէ, հիմա ասացէք, ինչ էք ուզում ինձանից։

ՋԱՌՆԻՇԱՆ։ Մի՛ արա, որդի, մի՛ արա այդ բանը։ Մենք քանդուում ենք, կործանւում։ Իսկ դո՛ւ, ախ։ Մտիկ արա հայելուն, ինքդ քեզ չես ճանաչիլ։ Լղարել ես, դեղնել, աչքերդ փոսերի մէջ են ընկել։ Գիշերները քուն չունիս, ցերեկները դադար, ման ես գալիս գիւահարի պէս դէս ու դէն։ Սև լինէր այն օրը, որ չար ոգին ոտ դրեց մեր տունը, սևացրեց նա մեր օրը։

ՋԱՎԱՀԻՐ. Լսիր մօրդ խօսքը, արձակիր նրան, ազատիր մեզ։ Երեխաս հիւանդացել է, կարապետն ախ ու վախով է օրերն անցկացնում, ես վախից գիշերները քնել չեմ կարողանում, մայրդ տանջանքից կուչ է եկել, կծիկ դարձել։ Խնայիր մեզ, դուրս արա դրանից։

ՄՈՒՐԱԴ. Վերջացրի՛ք, էլ ասելիք չունի՛ք։

ՏԵՍԻԼ VII

ՆՈՅՆՔ եւ ԿԱՐԱՊԵՏ

ԿԱՐԱՊԵՏ (մի քանի վայրկեան առաջ երեւացել է աջ կողմի դռների մէջ եւ ականջ դրել)։ Ե՛ս ունիմ։ Այդպէս շարունակել չի կա-

բելի, Մուրադ, մի ամիս է անից դուրս չես գալիս։ Գործերդ ճաշակել են անտէր։ Ես մեն մենակ ոչինչ չեմ կարողանում անել։ Գրել-կարդալ չըգիտեմ, հաշիւները խառնում եմ։ Մենք կոտր կընգնենք, եթէ դու ուշքի չըգաս։

ՋԱՌՆԻՇԱՆ. Լսում եմ, որդի։

ՋԱՎԱՀԻՐ. Երեխաներիս խնայիր։

ԿԱՐԱՊԵՏ. Գնանք, Մուրադ, գնանք դուքան։ Ես եկել եմ քեզ տանելու, որ մի քանի հաշիւները կան, վերջացնես, գնանք։

ՄՈՒՐԱԴ (էիչ խորհելուց յետոյ)։ *Լաւ, կը գամ։ Դու գնա, ես խակոյն կըգամ։*

ԿԱՐԱՊԵՏ. Անպատճառ։

ՄՈՒՐԱԴ. Անպատճառ։

ԿԱՐԱՊԵՏ. Շնորհակալ եմ։ (Գնում է աջ կողմի դուռերով)։

ՄՈՒՐԱԴ (Ջառնիշանին եւ Ջավահիրին)։ *Լաւ, հեռացէք, թողէք ինձ մի քանի րոպէ մենակ։*

ՋԱՌՆԻՇԱՆ (Ջավահիրին)։ *Գնանք, աղջի։* (Գնում է խորհի աջակողմեան դուռերով)։

ՋԱՎԱՀԻՐ. Գնանք։ (Գնում է խորհի աջակողմեան դուռերով)։

ՏԵՍԻԼ VIII

ՄՈՒՐԱԴ, ՅԵՏՈՅ ՍՕՆԱ.

ՄՈՒՐԱԴ (մնալով մենակ, նստում է թախտի վրայ եւ մի բանի վայրկեան մտածում։ Յետոյ մի վճռական շարժումն է անում, վեր է կենում եւ մօտենում խորհի ձախակողմեան դռներին)։ *Սօնա, բեր այստեղ վերարկուս ու գդակը։*

ՍՕՆԱ (գալիս է խորհի ձախակողմեան դռներով Մուրադի ձմեռուայ վերարկուն ու գլդակը ձեռքին։ Նրա հայեացքը մեքենայական է, հայեացքը սառը, անշարժ։ Մեքենաբար բռնում է վերարկուն, որ Մուրադը հագնէ)։

ՄՈՒՐԱԴ. Լսիր, Սօնա, ես գնում եմ խանութ, շուտով յետ կըգամ։

ՍՕՆԱ (անտարբեր)։ *Լաւ։*

ՄՈՒՐԱԴ. Զը տխրես առանց ինձ։

ՍՕՆԱ (մեքենաբար)։ *Լաւ։*

ՄՈՒՐԱԴ. Սենեակումդ մնա։

ՍՕՆԱ (նոյնպէս)։ *Լաւ։*

ՄՈՒՐԱԴ. Եթէ մայրս ու Ջավահիրը քեզ նախատեն, ուշադրութիւն չըդարձնես։

ՍՕՆԱ. Լաւ։

ՄՈՒՐԱԴ. Ոչ մի խօսք, լսում ես, ոչ մի պատասխան։

ՍՕՆԱ. Լաւ։

ՄՈՒՐԱԴ. Դէհ, ես գնացի։ (Գնում է դէպի աջ կողմի դռները)։

ՍՕՆԱ. Սպասիր։

ՄՈՒՐԱԴ (կանգ է առնում)։

ՍՕՆԱ (շտապ քայլերով մօտենում է Մուրադին)։ Տուր ինձ ձեռդ։ (Բռնում է Մուրադի ձեռը)։

ՄՈՒՐԱԴ. Ի՞նչ ես ուզում։

ՍՕՆԱ (համբուրում է Մուրադի ձեռը)։ Շնորհակալ եմ, շնորհակալ եմ։

ՄՈՒՐԱԴ (ձեռը խլելով)։ Այդ ի՞նչ ես անում, երեխայ։ Մենք մարդ ու կին ենք, ոչ թէ մեծ ու պզտիկ։ Ուզում ես—համբուրւենք։ (գրկում է ու համբուրում Սօնային)։

ՏԵՍԻԼ IX

ՍՕՆԱ. ՄԵՆԱԿ, ՅԵՏՈՅ ՈՍԿԱՆ

ՍՕՆԱ (մնալով մենակ, ուզում է սենեակը կարգի բերել, բայց միտքը ցրւած է։ Մօտենում է լուսամտին, նայում է դէպի դուրս, յետ է գալիս, աչքերը լառում է յատակին ու մնում անշարժ)։

ՈՍԿԱՆ (գալիս է աջ կողմի դռներով։ Կանգնում է դռների մօտ խեղճացած, գլուխը քաշ)։ Սօնա։ (Պատասխան չէ ստանում)։ Սօնա,

ՍՕՆԱ (սթափւելով)։ Հայրիկ։

ՈՍԿԱՆ. Չէի ուզում գալ, Մուրադը խնդրեց, որ գամ։ Դռների մօտ սեսայ։

ՍՕՆԱ. Նրանք տանն են։

ՈՍԿԱՆ. Թող լինեն, մի վախենար։ Դու դիտես, Սօնա, էլ չեմ խմում։ Այո, այո, չեմ խըմում, արդէ վկայ։

ՍՕՆԱ (անտարբեր)։ Լաւ ես անում։

ՈՍԿԱՆ. Դու չէս ուրախանում, դու ինձ չէս համբուրում։ Լաւ, յետոյ կուրախանաս։ Գիտես, որդի, իմ սիրտն էլ բարակել է, շատ է բարակել, էլ առաջւայ Ոսկանը չեմ։ Տեսնում ես, ձեռներս էլ դողում են, թուլացել են, էլ երկաթ ծեծել չեմ կարողանում։

ՍՕՆԱ (սառը, ինքն իրան)։ Հայրիկս ծերացել է, կուչ է եկել։

ՈՍԿԱՆ. Հապա, կուչ եմ եկել։ Գիտե՞ս ինչից։ Քո մասին մտածելուց։ Մայրդ ամեն բան ասել է ինձ։ Քեզ տանջում են՝ ա՛ն։

ՍՕՆԱ. Ինձ չեն տանջում։ (Նայում է աջ ու ձախ)։

ՈՍԿԱՆ. Փառք Աստծու։ Դու մի վախենար, անտէր չես, Մուրադն ինձ ասաց, որ քեզանից չի բաժանւիլ։ Ինչո՞ւ ես դէս ու դէն մտիկ անում։ Վախենում ես, որ գան, էլի ինձ գո՞ւրս անեն։ Օօ, եթէ ես փող կունենայի, ցոյց կըտայի նրանց։ Բայց չունիմ, ինչ արած։ Ա՜հ։ (Ձեռներն իրարու շփելով)։ Դրսում ցուրտ է, շատ ցուրտ, քարերն էլ սառել են, գետնին կպել։

ՍՕՆԱ. Նահիր քրսինի տակ, տաքացիր։

ՈՍԿԱՆ. Քրսինն ինձ չի տաքացնիլ։ Ցուրտը ներսումս է, այստեղ։ (Ձարհում է կրծքին)։ Բայց ես չեմ խմիլ, չեմ խմիլ, որ խեղդես էլ չեմ խմիլ։

ՍՕՆԱ. Ինայիր մայրիկին, հայր, նա շատ է տանջվել։

ՈՍԿԱՆ. Գիտեմ. կարծում ես, որ ես աչք չունիմ տեսնելու։ Իսկ դու։ Դու չես տանջվել։ Երկուսդ էլ տանջվել էք։ Իմ պատճառով։ Լսիր, ես քեզ չեմ ասել մինչև հիմայ, այսօր կասեմ։ Մի օր ես տուն եկայ հարբած։ Դու երեք տասարեկան էիր, խաղ էիր անում, մայրդ ինձ նախատեց։ Ուզեցի ծեծել։ Դու մէջ ընկար։ Կատաղութիւնս եկաւ։ Բռնեցի ձեռներիդդ, բարձրացրի ու այնպես խփեցի քեզ պատին, որ գլխիդդ տրիւն եկաւ։ Մայրդ ուշաթափւեց։ (Յուզած)։ Էէ, ով գիտէ, կարելի է հենց դրանից առաջացաւ ցաւդ։ Սօնա, Սօնա, ներիր, աղաչում եմ։ (Ձոհում է Սօնայի առջեւ)։ Ա,յ, ես չոքում եմ առաջդ, ներիր։

ՍՕՆԱ. Հայրիկ, մի արա, մի արա, վեր կաց։

ՈՍԿԱՆ. Թող գան, տեսնեն։ Ես ամենքին կասեմ, որ դու հրեշտակ ես,իսկ ես չար սատանայ։ Սօնա, Սօնա, տուր ինձ ձեռդ, թող համբուրեմ, դու սուրբ ես։

ՍՕՆԱ. Վեր կաց, վեր կաց, սուրբը Դանիէլն է, գնա նրա մօտ։

ՈՍԿԱՆ. Ջես ուզում։ Լաւ, սպասիր կը համբուրեմ։ (Ուզում է համբուրել)։

ՍՕՆԱ. (հեռացնելով Ոսկանից)։ Մի արա այդպիսի բաներ, վերկաց։

ՈՍԿԱՆ. Լաւ, դու գիտես։ (Վեր է կենում)։ Ես իմ մեղքը խոստովանեցի, թեթեւացայ։

ՍՕՆԱ. (տանջանքով)։ Իմ ցաւն ինձ հետ է ծնւել, հայր, դու մեղաւոր չես։ Մեղաւորը ես եմ, միայն ես։ Հայրիկ, երդւիր։

ՈՍԿԱՆ. Ինչո՞ւ համար, որդի։

ՍՕՆԱ. Երդւիր, որ մայրիկին չես ծեծիլ։

ՈՍԿԱՆ. Աստւած մի արասցէ, որ այսուհետև նրա վրայ ձեռը բարձրացնեմ։ Ոչ ոչ, գիտեմ, նա հիւանդ է։

ՍՕՆԱ. (վախեցած)։ Հիւանդ է։

ՈՍԿԱՆ. Հապա, պառկած է անկողնի մէջ։

ՍՕՆԱ. Եւ դու նրան մենակ ես թողել։ Ոչ ոք չկայ նրա մօտ։ Ես կըգնամ, խակոյն։ (Ուզում է գնալ)։

ՈՍԿԱՆ. Սպասիր, մի վախենար, դատարկ բան է։ Մրսել է մի քիչ, կանցնի։ Ես գիտեմ նրա ճարը։ Պէտք է նրան զանջաֆիլի չայ խըմեցնել։ Բայց մենք շաքար չունինք, մենք ոչինչ չունինք։ Գիտես, քիչ էր ճամում որ փողոցում

Մուրադից մի մանէթ խնդրէի։ Ամաչեցի, քեզ յիշեցի, լեզուս կապուեց։

ՍՕՆԱ. *Ամօթ է հայրիկ, նրանից վող մի վերցնիր։ Սպասիր, կարծեմ ես մի քիչ ունիմ։* (Տրնտում է արխալուղի գրպանը եւ դուրս է բերում մի բանի արծաթեայ դրամներ)։ *Վերցրու, հայրիկ, վերցրու ու գնա ինչ որ հարկաւոր է գնիր մայրիկի համար։ Գնա, նրան մենակ մի թողնիր։*

ՈՍԿԱՆ (դրամներն ագահութեամբ խլում է Սօնայից եւ գրպանը դնում)։ *Իսկոյն, իսկոյն կըվազեմ։* (Ուզում է գնալ, կանգ է առնում)։ *Շնորհակալ եմ, որդի, դու ինձ մի անգամ էլ ազատեցիր...* (Քայլերն ուղղում է դէպի աջ կողմի դռները)։

ՍՕՆԱ. (յանկարծ հասկանում է Ոսկանի միտքը)։ *Հայրիկ, կանգ առ։*

ՈՍԿԱՆ. *Չէ, պէտք է շտապել։*

ՍՕՆԱ. (հրամայողաբար)։ *Կանգ առ, ասում եմ, ես քեզ չեմ թողնիլ։ Դու խօսք ուեցիր, դու երդուեցիր։ Տուր ինձ այդ վողերը, դու ինձ խաբեցիր։*

ՈՍԿԱՆ (դառը ծիծաղով)։ *Վողերը, հա հա հա, վողերը։* (Դողդոջուն ձայնով)։ *Հինգ օր է ես ծարաւ եմ, հինգ օր։*

ՍՕՆԱ. (յուսահատաբար)։ *Հայրիկ, մի ասա, ամօթ է, ամօթ է։*

ՈՍԿԱՆ (դառը հեգնութեամբ)։ *Ամօթ է, հա հա, ամօթ է։ Իհարկէ, ամօթ է։ Նոր ես իմանում։ Բաս զուր չոքեցի առաջդ։ Այն ժամանակ էլ ամօթ էր, այժմ էլ, միշտ, ամբողջ կեանքս։ Ես էլ պատիւ չունիմ, երեսիս մեռոնը թափւել է, չըկայ։ Մնաս բարով, էլ չեմ դալ քեզ մօտ։*

ՍՕՆԱ. *Լսիր, հայրիկ, լսիր, մի րոպէ սպասիր, աղաչում եմ։ Աա, դու անուղղելի ես։ Թող այդպէս լինի։* (Մօտենում է պատի խորհրդից մեկին եւ մի շիշ օղի է վերցնում)։ *Հայրիկ, ահա քեզ օղի, բայց այդ վողերը տուր մայրիկին, աղաչում եմ։*

ՈՍԿԱՆ (շիշն առնելով Սօնայից, խոթում է արխալուղի գրպանը)։ *Լաւ, մի վախենար, մայրդ հիւանդ չէ, ես սուտ ասացի, ինչ արած, ուրիշ կերպ չէր կարելի։ Դէ, ճաս բարով։* (Գնում է աջ կողմի դռներով)։

ՏԵՍԻԼ X

ՍՕՆԱ. մենակ, յետոյ ՋԱՌՆԻՇԱՆ ու ՋԱՎԱՀԻՐ

ՋԱՌՆԻՇԱՆ (գալիս է խորհի աջակողմեան դռներով)։ *Քնեց, թող քնէ, դա լաւ նշան է։*

ՋԱՎԱՀԻՐ. *Քնեց տաքութեան մէջ, տաքութեան մէջ էլ կըզարթնէ։*

ՋԱՌՆԻՇԱՆ (Սօնային)։ *Հեռացիր աչքիցս։*

ՋԱՎԱՀԻՐ. *Մեռոն չի ճնացել երեսի վրայ։ Ա՛հ, մարդ ուզում է ճանկերով խեղդել անպատ-*

կառին։ (Սօնայի վրայ յարձակելու շարժումն է անում)։

ՋԱՌՆԻՇԱՆ (հրամայողաբար)։ *Ջավահիր, պահիր քեզ։* (Սօնային)։ *Գնա սենեակդ։*

ՍՕՆԱ (գնում է խորհի ձախակողմեան դրռնիւրով)։

ՏԵՍԻԼ XI

ՋԱՌՆԻՇԱՆ եւ ՋԱՎԱՀԻՐ

ՋԱՌՆԻՇԱՆ. Ի՞նչ ես խելքդ կորցնում։ Աչքի նսեմնք, մտածենք մեր անելիքի մասին։ (Նրստում է հրսիճի հով)։

ՋԱՎԱՀԻՐ (կատաղի հայեացքով ուղեկցել է Սօնային)։ *Էլ ինչ մտածելու բան մնաց։ Բացի իմ ասածից ուրիշ հնար չկայ այդ պատուհասից ազատելու համար։* (Նստում է հրսիճի հով)։

ՋԱՌՆԻՇԱՆ. Թող, մին ֆալ բաց անեմ, տեսնեմ նա ինչ է ասում։ (Դուրս է բերում հրսիճի վրայ գցած գորգի տակից մի փոքրիկ կապոց, որի մէջ կան 42 սիսեռներ։ Կապոցը բաց է անում եւ, սիսեռներն այս ու այն կողմ դարսելով, գուշակում)։ *Ո՛վ կարող էր ասել, որ իմ ուրախ տունն այսօր պիտի սևեր հագնէ։* (Նայելով սիսեռներին)։ *Մուրճն է ցոյց տալիս, խելքըս բան չի կարում։ Ո՛վ է այս մեն մենակը մէջտեղ ցցած։*

ՋԱՎԱՀԻՐ (սիսեռներին նայելով)։ *Չար ոգին։*

ՋԱՌՆԻՇԱՆ. Ի՞նչ է նշանակում այս ճանապարհը։

ՋԱՎԱՀԻՐ. Գերեզմանատուն։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ո՞վ է մեռելը։

ՋԱՎԱՀԻՐ. Չար ոգին։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ո՞վքեր են այս տխուր ուղեւորները։

ՋԱՎԱՀԻՐ. Դու, ես, զաւակներդ, թոռներդ, ամենքս։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ո՞րտեղ է մեր ազատութիւնը։

ՋԱՎԱՀԻՐ. Մի մարդու ձեռքում։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ո՞վ է այդ մարդը։

ՋԱՎԱՀԻՐ. Նա, որ ուզում է խեղդել չար ոգուն։

ՋԱՌՆԻՇԱՆ. Չկայ այդպիսի մարդ։

ՋԱՎԱՀԻՐ. Կայ։

ՋԱՌՆԻՇԱՆ (խորհին կշտամբանքով եւ անով)։ *Ջավահիր։*

ՋԱՎԱՀԻՐ. Սպանեցէք, ասում է։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ջավահիր։

ՋԱՎԱՀԻՐ (գլուխը բարձրացրել է եւ տեսել լուսամտի առջեւով անցնող Գիժ-Գանիէլին։ Սարսափով ճչում է)։ *Ա՜հ։*

ՋԱՌՆԻՇԱՆ. Ի՞նչ պատահեց։

ՋԱՎԱՀԻՐ. Նա անցաւ լուսամուտների մօտով։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ո՞վ։

ՋԱՎԱՀԻՐ. Դանիէլը։

ՋԱՌՆԻՇԱՆ. Ինչո՞ւ վախեցար։ (Սիսեռները ժողովում է ու կապում)։

ՋԱՎԱՀԻՐ. Եթէ նրա աչքերը տեսնէիր, կը-սարսափէիր։

ՋԱՌՆԻՇԱՆ. Նա գիշեր-ցերեկ պատում է այս տան շուրջը։

ՋԱՎԱՀԻՐ. Էլի անցաւ։ Օօ, նա մի չար միտք ունէ, ես զգում եմ։

ՋԱՌՆԻՇԱՆ. Քրսինը պաղել է, գնա, կրակ դիր։

ՋԱՎԱՀԻՐ. Ինչո՞ւ ամեն բան ինձ ես հրամայում, ուրիշ հարս չունե՞ս։

ՋԱՌՆԻՇԱՆ. Կանչիր այստեղ անունը կըտրածին։

ՋԱՎԱՀԻՐ (վեր է կենում, մօտենում է խորհի ձախակողմեան դռներին)։ *Էյ, սկեսուրդ կանչում է։*

ՏԵՍԻԼ XI

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՕՆԱ

ՍՕՆԱ. (գալիս է խորհի ձախակողմեան դռներով)։

ՋԱՌՆԻՇԱՆ. Անիծուած, մեզ անբաղդացրիր, գոնէ պարապդ կատարիր։

ՍՕՆԱ. Ի՞նչ ես հրամայում։

ՋԱՎԱՀԻՐ. Հրամայում է, որ քրսինի համար կրակ դնես։

ՍՕՆԱ. Աչքիս վրայ։ (Գնում է աջ կողմի դռներով)։

ՋԱՌՆԻՇԱՆ (նայել է Սօնայի ետեւից)։ *Ի՜նչ սիրուն էլ է անիրաւը. համ ատում եմ, համ խղճում։*

ՋԱՎԱՀԻՐ (կատաղի)։ *Ախ, սիրուն օձ կծէ նրան։* (Գնում է աջակողմեան դռներով)։

ՏԵՍԻԼ XII

ՋԱՌՆԻՇԱՆ ԵՒ ՄԻԱՆՍԱՋ

ՄԻԱՆՍԱՋ (գալիս է աջ կողմի դռներով։ Փոքրահասակ այլանդակ կաղ կին է տղամարդի կերպարանքով ու ձեւերով։ Քիչ կուզ է։ Ձայնն առնական է, բիրտ արծւայինի։ Հագած է լայն սեւ ոսառոր, լայն սեւ արխալուղ բազմաթիւ սեւ կոճակներով։ Մէջքին կապած է դեղնագոյն գօտի։ Գլխին կապած է սեւ ճուրդի, որի տակից ցցել են ալեխառը կոճս մազերը։ Ոտներին սեւ չուստեր։ Գլխին գցած է սեւ շալ։ Քայլում է աշխոյժ, չընայելով կաղութեանը։ Բայց յեղում է միշտ ձեռափայտի վրայ, որ ծուռ է եւ տգեղ։ Գուխ է տալիս Ջառնիշանին, չուստերը դռներին մօտ արբեղով)։ *Ալլահը քեզ պահի։*

ՋԱՌՆԻՇԱՆ (տեղից չի շարժում եւ ոչ էլ

յեs ճայում)։ *Ալլահը քեզ պահի։*

ՄԻԱՆՍԱՋ (ձեռները իրարու շփելով, մօտենում է fruինին)։ *Յուրա է, արար աշխարհը սառել է, քարացել։*

ՋԱՌՆԻՇԱՆ. Արար աշխարհը գլխիս սևացել է։ Նառիր։

ՄԻԱՆՍԱՋ (նստելով fruինի fով)։ *Տարին չար է, փեարվեարդիգեարը մեզ պահի, պահպանի փորձանքներից։*

ՋԱՌՆԻՇԱՆ (հանդիսաւոr soճով)։ *Ամեն։* (Քթախոns է առաջարկում Միանսազին)։

ՄԻԱՆՍԱՋ (fքախոns վերցնելով)։ *Իսան եկաւ Հալալաթից, խաբար բերաւ դիամաթից։* (Քթախոns է fաշում)։

ՋԱՌՆԻՇԱՆ. Որդիս օր օրի վրայ հալւում է մոմի պէս, թոռնս տաքութեան մէջ այրւում է, ես քունս կորցրել եմ, մեծ որդուս գործերը տակն ու վրայ են եղել, մեծ հարսս խելքը կորցնում է։ Չար գևն անբաղդութիւն անբաղդութեան եաևից է բերում մեր գլխին։ Եթէ կարող ես փրկիր մեզ, չես կարող, ասա, որ ուրիշ ճար գանենք։

ՄԻԱՆՍԱՋ (մատը հանդիսաւոr բարձրացնելով դէպի վեր)։ *Համբերութիւն, համբերութիւն, համբերութիւն։*

ՋԱՌՆԻՇԱՆ. Համբերութիւն, մինչև ե՞րբ։ Ահա մի ամիս է գալիս գնում ես, չես կարողանում գևը դուրս բերել նրա միջից։

ՄԻԱՆՍԱՋ (գրպանից դուրս է բերում ինչոr չորացած կաւելի կտոr, ցոյց է տալիս)։ *Տեսնում ես։*

ՋԱՌՆԻՇԱՆ. Այդ ի՞նչ է։

ՄԻԱՆՍԱՋ. Կաւաղած գայլի բերան։ Այսօր սրա զօրութիւնը պիտի փորձեմ։

ՋԱՌՆԻՇԱՆ. Սև կաւելի ոտի պճեղը չօգնեց, ագռաւի աչքը չօգնեց, տեսնենք դա ինչ պիտի անէ։

ՄԻԱՆՍԱՋ. Քառասուն անգամ քառասուն ջին եմ դուրս բերել, փեարվեարդիգեարը այսօր ինձ կօգնէ։ Քրսինը պաղ է։

ՏԵՍԻԼ XIII

ՆՈՅՆՔ ԵՒ ՉԱՎԱՀԻՐ

ՉԱՎԱՀԻՐ (գալիս է խորհի աջակողմեան դուներով։ Սաստիկ յուզած է)։ *Էլ չեմ կարող դիմանալ այսքան ցաւերին։ Միւս երեխաս էլ հիւանդացաւ։ Նա էլ տաքութեան մէջ է։* (Միանսազին)։ *Ազատիր մեզ, ազատիր։*

ՋԱՌՆԻՇԱՆ (Միանսազին)։ *Ազատիր։*

ՄԻԱՆՍԱՋ (Չավահիրին)։ *Կանչիր նրան այստեղ։* (Շալը վերցնում է իր գլխից եւ մի կողմ գցում)։

ՋԱՌՆԻՇԱՆ. Այ, գալիս է։ (Վեր է կենում)։

ՏԵՍԻԼ XIV

ՆՈՅՆՔ ԵՒ ՍՕՆԱ

ՍՕՆԱ (գալիս է աջ կողմի դուռերով, ձեռքին մի երկաթեայ կրակակալ, վառ ածուխ ներով լիքը)։

ՋԱՌՆԻՇԱՆ. Կրակը լաւ չի վառուել, գլուխները կըբռնէ։

ՍՕՆԱ (ուզում է կրակը յեռ տանել)։

ՋԱՎԱՀԻՐ (ինչ որ մտածելով, որոճելով, յանկարծակի)։ *Տո՛ւր ինձ։* (Առնում է Սօնայից կրակակալը, վառ ածուխը թափում է հրսինի տակ եւ կրակակալը մի կողմ դնում։ Աջ կողմի դուռերը կողպում է)։

ՍՕՆԱ (ուզում է գնալ իւր սենեակը)։

ՄԻԱՆՍԱՋ. Սպասի՛ր։

ՍՕՆԱ (կանգ է առնում, աշխատելով խոյս տալ Միանսազի հայեացքներից)։

ՄԻԱՆՍԱՋ (կանգնում է Սօնայի առջեւ եւ սուր հայեացքով նայում նրա երեսին)։ *Մաիկ արա աչքերիս։*

ՍՕՆԱ. Թող ինձ, ես վախենում եմ քեզանից։ (Ուզում է հեռանալ)։

ՋԱՎԱՀԻՐ (բռնելով Սօնային)։ *Ո՛ւր ես փախչում, արա՛, ինչ որ հրամայում են։*

ՄԻԱՆՍԱՋ (դուրս է բերում գրպանից կաշուի կտորը եւ հանդիսաւոր բարձրացնում օդի

մէջ)։ *Մաիկ արա աչքերիս։*

ՍՕՆԱ (գլուխը թոյլ բարձրացնում է, նայում է Միանսազի աչքերին, ցնցւում եւ անշարժ մնում)։

ՋԱՎԱՀԻՐ (մի կողմ հաւաած, ուշադիր դիտում է տեսարանը)։

ՋԱՌՆԻՇԱՆ (Ջավահիրի հակառակ կողմում կանգնած, ուշադիր դիտում է տեսարանը)։

ՄԻԱՆՍԱՋ. Լահ իլլահ իլալլահ։ (Կաւելի կտորը երեք անգամ զարկում է Սօնայի կրծքին)։ *Ագդեթ, Իռնան, Սալաս։ Ջին, յանուն Ալլահի, քեզ դուրս եմ կանչում։ Դո՛ւրս, դո՛ւրս, դո՛ւրս քո բնից, քո տեղը կրակն է։*

ՍՕՆԱ (թոյլ)։ *Մամա, մամա, նա տանջում է ինձ։*

ՄԻԱՆՍԱՋ. Պիտի տանջուիս, պիտի տանջուիս, պիտի տանջուիս, դուրս, անիծեալ, դո՛ւրս։ (Սկսում է պտոյտներ անել Սօնայի շուրջը)։ *Հակկի վէյ, հակկի վէյ, հակկի վէյ, խուդէյի, բեհուրի, չիքքի խամ, եահուդի, բիսլի հիաթ, հակկի վէյ, հակկի վէյ...*

ՍՕՆԱ. Չեմ կարող, չեմ կարող։

ՋԱՎԱՀԻՐ. Պիտի կարողանաս, անիծուած։

ՄԻԱՆՍԱՋ (կանգ է առնում, սուր հայեացքով նայում է Սօնայի աչքերին)։ *Դո՛ւրս եկ, դո՛ւրս եկ։ Ես տեսնում եմ գլուխդ, ես տեսնում*

եմ պոզերդ, ես տեսնում եմ սուբ-սուբ աչքերդ։

ՍՕՆԱ (տանջանքով)։ *Մամա, մամա։*

ՄԻԱՆՍԱԶ. Հակկի վէյ, հակկի վէյ։ (Երկու անգամ ես պտտում է Սօնայի շուրջը)։

ՍՕՆԱ (տանջանքով)։ *Մամա, մամա։*

ՋԱՌՆԻՇԱՆ (իր կրծքին զարկելով, հանդիսաւոր)։ *Անէծք քո մօրը։*

ՋԱՎԱՀԻՐ (իր կրծքին զարկելով, հանդիսաւոր)։ *Անէծք քո մօրը։*

ՄԻԱՆՍԱԶ (կանգ է առնում Սօնայի դէմ, կռանում է ցած, յետոյ կամաց-կամաց բարձրանում է, շարունակ նայելով Սօնայի աչքերին եւ կարելոյն չափ աշխատելով իր դէմքն աղաւաղել, որպէս զի սարսափեցնէ Սօնային)։ *Հակկի վէյ, հակկի վէյ, հակկի վէյ։*

ՍՕՆԱ. Կարմիր, կարմիր, եկա՛ւ (ճչում է)։ *Ա՜հ։* (Ընկնում է հրեսնի մօս երեսնիվար)։

ՄԻԱՆՍԱԶ (հրճուանքով)։ *Ջինը, ջինը, տեսնում էք, ես նրան յաղթեցի։* (Շտապով գրպանից դուրս է բերում մի դանակ եւ ոտքի անելով Սօնայի մարմնի շուրջը, ցցում է յատակի մէջ)։

ՋԱՌՆԻՇԱՆ (երեսը ծածկելով ձեռներով)։ *Ազատեցէք որդուս, ազատեցէք մեզ։*

ՋԱՎԱՀԻՐ. Մենք ուրիշ ազատութիւն չունենք։ (Միանսագին)։ *Քաւթառ, վերջացրու։* (Բրտնում է Սօնայի ձեռներից, աշխատում է նրա

մարմինը քաշել, գցել հրեսնի տակ։ Չի կարողանում)։ *Ա՜հ, չեմ կարող, ոյժս չի պատում։ Քաւթառ, օգնիր։* (Նեստան է անում)։

ՄԻԱՆՍԱԶ (շտապով բռնում է Սօնայի ձեռներից, քաշում ու գցում է հրեսնի տակ, վերմակն ու գորգը ծածկում է ու վրէն կանգնում)։

ՋԱՎԱՀԻՐ (կանգնում է հրեսնի հակառակ կողմում գորգի եւ վերմակի վրայ, արգելելով, որ օդ մտնի հրեսնի տակ)։

ՍՕՆԱ (հրեսնի տակից արձակում է խուլ ճիչ երկու անգամ)։ *Ա՜, ա՜։*

ՋԱՌՆԻՇԱՆ (երեսը բաց անելով, սարսափած)։ *Ինչ արիք, ինչ արիք։*

ՄԻԱՆՍԱԶ. Վեռս սալամ, շիւդ թամամ։

ՋԱՎԱՀԻՐ. Պրծաւ։

ՏԵՍԻԼ XV

ՆՈՅՆՔ եւ ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ

ԳԻԺ-ԴԱՆԻԷԼ (սոսկալի մռնչիւնով, խորտակում է լուսամուտներից մէկը եւ ներս ցատկում կատաղած)։ *Սաթայէլ, Սաթայէլ, պատառ պատառ կանեմ։* (Յարձակւում է նախ Ջավահիրի ապա Ջառնիշանի վրայ, չի կարողանում բռնել)։

ՋԱՎԱՀԻՐ } ճչալով փախչում են զանա-
ՋԱՌՆԻՇԱՆ } զան կողմեր։

ԳԻԾ-ԴԱՆԻԷԼ (յարձակվում է Միաճնագի վրայ, թաւալում է նրան յատակի վրայ ու խեղդում)։

ՄԻԱՆՄԱՋ. Ազատեցէք, ազատեցէք։ (Մեռնում է)։

ԳԻԾ-ԴԱՆԻԷԼ (Միաճնագին խեղդելով, դէն է շպրտում նրա մարմինը)։ *Շունչ։* (Ուրախ է բերում Ասնայի դիակը fruիճի տակից։ Ականջ է դնում։ Համոզվելով, որ մեռած է, բռունցքը սպառնալի բարձրացնում է դէպի վեր)։ *Անէծք քեզ, ֆարհադ, անէծք քեզ։* (Մնում է չոմած, անշարժ)։

ՎԱՐԱԳՈՑՐ

ՎԵՐՋ

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм.ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0353146

48336